ԳԼՈԲՈՒՍ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2(6)

ԵՐԵՎԱՆ

2009

ԳԼՈԲՈՒՍ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 2 (6), 2009

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Գագիկ Հարությունյան

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ
Աննա Ժամակոչյան
Ռուբեն Մելքոնյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Սնակ Սարուխանյան
Տիգրան Հարությունյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔ
Դիանա Գալստյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Բազմավեկտոր գլոբալացում, շարունակական քաոս և քաղաքակրթությունների երկխոսություն 3

Իգոր Բաղիրյան
Էֆեկտիվ պետության ստեղծման հայեցակարգը Հայաստանում 10

Սամվել Մարտիրոսյան
Արդի ինֆոգեն մարտահրավերները 21

Միխայիլ Աղաջանյան
Կիրառականից դեպի հայեցակարգային հնարավոր մոտեցում Հայաստանի տեղեկատվական անվտանգության դոկտրինի ձևավորմանը 28

Կարեն Վրթանեսյան
Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը 35

Արեստակես Միմավորյան
Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ կաթոլիկ համայնքների խնդիրները.....47

Վահրամ Հովյան
Ջավախքի ժողովրդագրական մարտահրավերները 57

Թամարա Վարդանյան
Աշխարհի էթնիկ պատկերը. վրացական մոդել 69

Էդուարդ Դանիելյան
Խորենացիագիտական ներդրում հայագիտության անվտանգության ասպարեզում 75

ԲԱԶՄԱՎԵԿՏՈՐ ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄ, ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՔԱՈՍ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան

Ընթացող համակարգային փոփոխություններն անխուսափելիորեն պետք է հանգեցնեն նաև որոշ արմատացած պատկերացումների վերիմաստավորման: Դա վերաբերում է, օրինակ, այնպիսի հիմնարար հասկացության, ինչպիսին է գլոբալացումը, որը լայն շրջանառության մեջ է մտել նախորդ դարի վերջին[1] և համարվում է աշխարհակարգային իրողությունները բնութագրող գլխավոր եզրերից մեկը:

Քաղաքական մեկնաբանությունների համատեքստում լրատվամիջոցներում անհամեմատ պակաս է օգտագործվում «քաոս» եզրը (ավելի հաճախ, թերևս, կարելի է հանդիպել «ղեկավարվող քաոս» բառակապակցությանը): Սակայն փորձագիտական գրականությունում այն նույնպես առանցքային է համարվում, քանի որ հաճախ հենց «քաոս» հասկացությունն է, որ թույլ է տալիս հնարավորինս ըմբռնել և մեկնաբանել մեր ժամանակաշրջանին բնորոշ բարդ ռազմաքաղաքական–տեղեկատվական, սոցիալ–տնտեսական երևույթներն ու գործընթացները:

Վերոնշյալ հասկացություններին արդիական մեկնություններ տալու ձգտումը, ըստ մեզ, խիստ ակտուալ է, քանի որ դա կարող է նպաստել ավելի ադեկվատ ընկալելու ներկայիս փոփոխությունների բնույթն ու միտումները: Միևնույն ժամանակ, հարկավոր է հաշվի առնել, որ այս հետմոդեռնիստական հասկացությունները նկարագրում են գործընթացներ, որոնք այս կամ այն կերպ միշտ բնորոշ են եղել մարդկային զարգացմանը:

Կայսերական «լոկալ գլոբալացում»

Ինչպես հայտնի է, գլոբալացումը չունի գիտական խիստ սահմանում, սակայն այդ եզրի տակ, որպես կանոն, հասկացվում են կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում ընթացող ինտեգրման գործընթացների հետևանքով

[1] Ընդունված է համարել, որ գլոբալացում եզրը առաջինը կիրառել է ամերիկյան սոցիոլոգ Ջ.Մաքլինը 1981թ.:

աշխարհի երկրների փոխկապվածության մեծացումը և աշխարհի վերածումը մեկ ամբողջության: Ենթադրվում է, որ գլոբալացման արդյունքում, հաշվի առնելով արդի հաղորդակցային և տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները, ձևավորվելու է միասնական տեղեկատվական տարածություն, որն իր հերթին հանգեցնելու է միօրինակ աշխարհընկալման: Համարվում է նաև, որ գլոբալացման հիմնական նպատակներից են չկարգավորվածության նվազեցումը և կարգավորվածության մակարդակի բարձրացումը:

Նկատենք, որ «լոկալ գլոբալացման» (այս եզրի տակ հասկանալով գլոբալացման ավելի սահմանափակ տարածքային մասշտաբ) դրսևորումների հետ մարդկությունը շփվել է դեռևս առաջին կայսրությունների գոյացման ժամանակներից: Հայտնի է, որ վերջիններս, մասնավորապես, տարբեր էթնոսների, մշակույթների և անգամ քաղաքակրթությունների խառնարան են հանդիսանում: Կայսերական քաղաքականության արդյունքում ձևավորվում են որոշակի չափով ինտեգրված հանրություն, հնարավորինս միասնական օրենսդրական-տնտեսական դաշտ, ինչ տեղի ունեցավ ԽՍՀՄ-ում, որի մասին հիշողությունները դեռևս թարմ են: Ակնհայտ է, որ ցանկացած կայսրության «կառավարման կենտրոնի» առաջնահերթ քաղաքական խնդիրը իրեն ենթակա տարածքներում միասնական խաղի կանոնների և հնարավորինս սոցիալ-տնտեսական համասեռության[2] հաստատումն է, քանի որ դա պետական համակարգի կայունությունն ու կենսունակությունն ապահովող հիմնական նախապայմանն է:

Կայսրության տեղեկատվական-գաղափարախոսական դաշտի ընդհանրությունը կախված է տվյալ ժամանակաշրջանում հաղորդակցային միջոցների զարգացման աստիճանից և, իհարկե, կայսերական ազգի կամ տարբեր ազգերի ինտեգրման արդյունքում ձևավորված հանրության քաղաքակրթական ներուժից: Հենց քաղաքակրթական ներուժով է պայմանավորված կայսրության, այսպես կոչված, ժամանակային-տեղեկատվական (կամ այլ խոսքերով՝ դրա վերաբերյալ ակտիվ հիշողության) հարատևումը: Ասենք, Հռոմեական կայսրության դարաշրջանում ձևավորված մշակութային, քաղաքական, իրավաբանական և այլ ոլորտների ձեռքբերումներն ու հասկացություններն առայսօր շրջանառության մեջ են, ինչը դժվար է ասել, օրինակ, Օսմանյան կայսրության մասին:

[2] Այս առումով խիստ ուսանելի է ոչ միայն ռուսական և խորհրդային կայսրությունների, այլ նաև Ավստրո-հունգարական կայսրության փորձը, որը ներկայիս Եվրամիության նախատիպն է:

Գլոբալացումը միաբևեռ աշխարհում և «քաոսի» կիրառումը կայսերական ռազմավարությունում

Մեր ժամանակաշրջանի գլոբալացումը նույնպես զգալի չափով կառավարման «կայսերական» ձևի արտահայտություն է: Միաբևեռ համակարգում (այժմ արդեն նախկին) այդ գործընթացի գլխավոր «կարգավորողը» և «վերահսկողը» ԱՄՆ-ն էր: Տիրապետելով հսկայական ռեսուրսների՝ այդ տերությունը գերակայում էր բոլոր ոլորտներում, և գլոբալացումը, համաձայն ամերիկյան ընտրանու պատկերացումների, համաշխարհային կարգավորվածության ու անվտանգության ապահովման անհրաժեշտ միջոց էր: Այս համատեքստում տարօրինակ չէ, որ որոշ (հատկապես՝ ոչ ամերիկյան) հետազոտողներ[3] նույնացնում են «գլոբալացում» և «վեստերնացում» (արևմտականացում) հասկացությունները, քանի որ համարում են, որ միակենտրոն գլոբալացումը արևմտյան քաղաքակրթական արժեքների համաձայն աշխարհը ձևավորելու փորձ է:

Միևնույն ժամանակ, միաբևեռ դարաշրջանի գլոբալացումը տարբերվում էր անցյալի կայսրությունների նմանատիպ ռազմավարությունից իր համաշխարհային մասշտաբներով ու տեմպով: Այդ առումով ամերիկյան «գլոբալացումը» (*globe* - երկրագունդ) եզրաբանորեն, թերևս, ամենահարազատն է բառի իմաստին: Արդի գլոբալացումը, տեղեկատվական ոլորտում տեղի ունեցող հեղափոխական փոփոխությունների և ֆինանսատնտեսական ինտեգրման հետևանքով, նաև շատ արագ և արդյունավետ է ընթանում:

Քաոտիկ տարածքներ - «չկայացած» երկրներ

Հատկանշական է, որ ըստ ամերիկյան և բրիտանական «ուղեղային կենտրոնների» հայեցակարգային մշակումների, գլոբալացվող դաշտից դուրս գտնվող երկրները համարվում են «չկայացած»[4] (անգլո-ամերիկյան փորձագետներն այս եզրով են սահմանում այն երկրները, որոնք ի վիճակի չեն վերահսկելու իրենց տարածքները և այնտեղ բնակվող խոշոր սոցիալ-էթնիկ

[3] Նման մոտեցումներ ունեցող հետազոտողներից առանձնահատուկ ուշադրության է արժանի ականավոր փիլիսոփա Ալեքսանդր Պանարինը (տե՛ս, մասնավորապես, *А.С. Панарин,* Искушение глобализмом, *Москва, 2000*): Ամերիկյան հետազոտողներից գլոբալիզմի նպատակների և բովանդակության վերաբերյալ նմանատիպ հայացքներ ունի Ֆերնանդ Բրոդելի հիմնադրամի տնօրեն, հանրահայտ Իմանուիլ Վալերստայնը:

[4] Համաձայն բրիտանական փորձագետների գնահատականների, այսօր «չկայացած» երկրներում, որոնց թիվը հասնում է մի քանի տասնյակի, բնակվում է 880 մլն մարդ: «Չկայացած» երկրների առաջին վեցնյակում տեղ է գրավում նաև միջուկային զենքին տիրապետող Պակիստանը. տե՛ս, մասնավորապես, *Специальный доклад для британского правительства,* Зарубежное военное обозрение, #1. с. 95, 2009.

խմբերը): Ենթադրվում է նաև, որ այդ երկրներում գերակայում են «քաոտիկ գործընթացները»[5]: Նման իրադրությունը սպառնում է Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների անվտանգությանը, այդ իսկ պատճառով «չկայացած» երկրների ներգրավումը համաշխարհային հանրություն համարվում է առաջնահերթ խնդիր:

Միևնույն ժամանակ, «քաոտիկ» իրավիճակները պարունակում են զգալի էներգետիկ ներուժ, որի օգտագործումն ու ուղղորդումը գլոբալ դերակատարի համար՝ ռազմաքաղաքական, տնտեսական և այլ նկատառումներով, կարող է շահավետ լինել: Ավելին, երբեմն իրականում «կարգավորված», բայց կայսերական շահերի դեմ գործող երկրներն արհեստականորեն կարող են վերածվել քաոտիկ «գոտիների»:

Օրինակ, ԱՄՆ-ի կողմից Իրաքի օկուպացման գլխավոր նպատակն այդ բավական կայուն (եթե անտեսենք քրդական գործոնը) երկիրը մի գոտու վերածելն էր, որտեղ գերիշխում են քաոտիկ գործընթացները: Իրաքում այժմ շարունակվում են քաղաքացիական, միջկոնֆեսիոնալ-ազգամիջյան կռիվները և ահաբեկչությունները[6]: Այդ երկիրը, փաստորեն, մասնատվեց: Իրաքը կորցրեց արաբական աշխարհի առաջատարներից մեկի իր կարգավիճակը, իսկ Մերձավոր և Միջին Արևելքում ձևավորվեց աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նոր իրավիճակ՝ համապատասխան Միացյալ Նահանգների ռազմավարական շահերի:

Բնորոշ է, որ այդօրինակ մոտեցումներն իշխում էին նաև անցյալում. օրինակ՝ հույները, հռոմեացիները և չինացիները «գլոբալացված» կայսերական սահմաններից դուրս ժողովուրդներին (ցեղերին) ընկալում էին որպես «բարբարոս» և նրանց խիստ վտանգավոր էին համարում իրենց տերությունների համար: Միևնույն ժամանակ, այդ կայսրությունները հաճախ էին օգտագործում այդ «բարբարոսներին» իրենց շահերի համար:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ռազմաքաղաքական զարգացումների հետևանքով «բարբարոսները» երբեմն ձեռք էին բերում կայսերական քաղաքակրթության ժառանգորդների և շարունակողների կարգավիճակ, ինչպես դա տեղի ունեցավ Հռոմի անկումից հետո: Այլ կերպ ընթացան զարգացումները Բյուզանդիայում. նրա տարածքներին տիրացած «թուրք-սելջուկները» չկարողացան լինել Բյուզանդիայի հարուստ մշակույթի շարունակողը (այսօր այդ

[5] Տիպիկ «քաոտիկ» երկրների շարքին այսօր կարելի է դասել, օրինակ, Իրաքը, Աֆղանստանը և Պակիստանը: Ավելի մանրամասն այս խնդրի շուրջ տե՛ս *Գագիկ Հարությունյան,* Համակարգային փոփոխություններ, Գլոբուս - Ազգային անվտանգություն #1(6), էջ 3, 2009:

[6] 2003-ից հետո Իրաքի քաղաքացիական բնակչության շրջանում զոհերը, համաձայն տարաբնույթ տեղեկատվական աղբյուրների վկայությունների, կազմում են 500 000 մարդ, այսինքն՝ այդ երկրում հրահրվել է յուրօրինակ տեխնոլոգիայով ընթացող ցեղասպանություն, որի «պատվիրատուն» է Միացյալ Նահանգները, իսկ կատարողները իրաքցիներն են:

քաղաքակրթության հիմնական ժառանգորդներ համարվում են հույները, հայերը և սլավոնական ժողովուրդները)։ Այս համատեքստում կայուն և շարունակական կայսրության օրինակ կարող է հանդիսանալ Չինաստանը, որի ժողովուրդը, անգամ հաշվի առնելով պատմական զարգացումների արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները, առայսօր տիրում է իր տարածքներին և հանդիսանում է սեփական քաղաքակրթության ժառանգորդը և շարունակական կրողը։

Վերոնշյալ պատմական նախադեպերի դիտարկումն ակտուալ է արդի զարգացումներին գնահատականներ տալու տեսանկյունից։ Այսօր տպավորությունն այնպիսին է, որ դիրքերը զիջող անգլո-սաքսոնյան քաղաքակրթությունն ունի չինական նախադեպը կրկնելու անհրաժեշտ ներուժ[7]։ Միևնույն ժամանակ, արդի և բազմաբևեռ աշխարհակարգում ցանկացած քաղաքակրթության հարատևումը պայմանավորված է լինելու բազմաբևեռ աշխարհակարգում այլ քաղաքակրթությունների հետ երկխոսություն և համագործակցություն հաստատելու կարողությամբ։

Գլոբալացման առանձնահատկությունները բազմաբևեռ աշխարհակարգում

Ինչպես հայտնի է, բազմաբևեռ համակարգում ԱՄՆ-ը կորցրել է գլոբալացումը «կարգավորողի–վերահսկողի» մենաշնորհը։ Հայտնվել են նոր աշխարհաքաղաքական դերակատարներ, որոնց պատկերացումները համաշխարհային համասեռ դաշտի վերաբերյալ տարբերվում են ամերիկյանից, այսինքն, բացի ԱՄՆ-ից, ձևավորվել են նոր նյութական և ոչ նյութական ռեսուրսային կենտրոններ, որոնք կարող են իրագործել սեփական քաղաքակրթական, տնտեսական և այլ արժեքների էքսպանսիա համաշխարհային մասշտաբով կամ, այլ խոսքերով՝ իրականացնել գլոբալացում։ Միևնույն ժամանակ, այդ կենտրոնների արժեհամակարգերը և քաղաքական կարգը տարբեր են միմյանցից, ինչն էլ պայմանավորում է գլոբալացման գործընթացի տարբեր, երբեմն՝ հակասական և տրամագծորեն հակադիր ուղղվածությունները։ Բազմաբևեռ, և այդ պատճառով ոչ գերկազմակերպված պայմաններում, գլոբալացման գործընթացներ իրագործողի հավակնություններ կարող են ցուցաբերել ոչ միայն խոշոր տերությունները, այլև այն երկրները, որոնք կունենան հոգևոր, մտավոր և այլ ռեսուրսների «կրիտիկական» համապատասխան զանգված։ Սակայն ձևավորված նոր իրողություններում գլոբալ դերակատարի կարգավիճակ կարող են ձեռք բերել նաև ոչ պետական կառույցները։ Օրինակ, տնտեսական գլոբալ դաշտում կարող են էլ ավելի մեծ դերակատարում ունե-

[7] Ըստ որոշ փորձագետների, նույնը չի կարելի համոզված պնդել եվրոպական քաղաքակրթության պարագայում, որտեղ ընթացող ժողովրդագրական միտումները կարող են և հանգեցնել «հռոմեական սցենարին»։

նալ անդրազգային ընկերությունները: Նշենք, որ դրանցից 500 ամենախոշորների ՀՆԱ-ն, ըստ 2004թ. տվյալների, հասնում է $21.9 տրիլիոնի, ինչը կազմում է համաշխարհային ՀՆԱ շուրջ 61%-ը[8]: Հայտնի է, որ այդ ընկերությունները հիմնականում արտահայտում են խոշոր տերությունների շահերը, սակայն տպավորությունն այնպիսին է, որ բազմաբևեռ համակարգում դրանցից շատերն անխուսափելիորեն սկսելու են գործել ինքնուրույն: Նույն տրամաբանությանն են ենթարկվելու նաև խոշոր միջազգային կազմակերպությունները և հզոր նյութական ռեսուրսներ ու ազդեցության լծակներ ունեցող տարաբնույթ ակումբ/ասոցիացիաները: Այդօրինակ կառույցները, օգտվելով նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից, ի վիճակի են խոշոր նախագծեր իրագործել և այդպիսով գլոբալ դերակատարի կարգավիճակ ձեռք բերել:

Առանձին քննարկման են արժանի տեղեկատվական-ցանցակենտրոն կառուցվածք ունեցող ահաբեկչական խմբավորումները: Որոշ փորձագիտական գնահատականներով՝ դրանց մի մասը կարող է տիրանալ զանգվածային ոչնչացման զենքին և կիրառել այն, ինչը գլոբալ մասշտաբով կմեծացնի չկարգավորվածության չափը և կփոխի քաղաքական իրավիճակն ընդհանրապես:

Այսպիսով, արդի գլոբալացումը բազմավեկտոր է և որոշակի իմաստով՝ կոնֆրոնտացիոն: Ի տարբերություն պատմական նախադեպերի, ներկայիս գլոբալացման գործընթացներում ուրույն դերակատարում կարող են ունենալ ոչ միայն հզոր տերությունները, այլև անդրազգային ընկերությունները, պետություն չներկայացնող կազմակերպությունները և համապատասխան ռեսուրսներ ունեցող երկրները: Այս բոլոր գործոնները դժվարացնում են հնարավոր զարգացումների կանխատեսումը «նոր աշխարհում»:

Բազմավեկտոր գլոբալացումը և քաոսը

Վերոնշյալի համատեքստում պետք է վերստին կարևորել այն հանգամանքը, որ եթե, օրինակ, տնտեսական-տեխնոլոգիական ոլորտներում գլոբալացման դերակատարների ուղղվածությունը կարող է և համընկնել, ապա քաղաքակրթական-գաղափարախոսական էքսպանսիայի վեկտորները կարող են հակադիր լինել: Դրանից հետևում է, որ արդի գլոբալացումը կարող է ոչ թե «կարգավորել» համաշխարհային հանրությունը, այլ նպաստել «չկարգավորվածության» և քաոտիկ իրադրությունների առաջացմանը: Հայտնի է նաև, որ տեղեկատվական դարաշրջանում իրադարձությունների հաճախականությունը մեծանում է, իսկ գործընթացների արագությունը՝ անընդհատ աճում: Դա լրացուցիչ ավելացնելու է չկարգավորվածությունը, քանի որ հանրու-

[8] *А.Г. Горщарик,* Глобализация и геополитические интересы России в начале XXI века, Геополитическая доктрина России: реалии и проблемы выбора, Материалы научной конференции, Санкт Петербург, 5-6 марта 2004г., с. 234, 2004.

թյունը և կառավարման ավանդական մարմինները չեն հասցնում ժամանակին ու ադեկվատ արձագանքել իրադարձություններին: Այսպիսով՝ արդի գլոբալացումը պարունակում է նաև «շարունակական քաոսի» առաջացման մեխանիզմներ: Այդ հանգամանքը, ըստ մեզ, դրված է ներկայիս համակարգային ճգնաժամի հենքում:

«Նեթոկրատիա» – ինտելեկտուալների համաշխարհային ընտրանի

Համաձայն որոշ հետազոտողների[9]՝ ձևավորվող «նոր աշխարհն» այնքան «բարդ է» և արագ փոփոխվող, որ դրա կառավարումը կարող են իրագործել միայն բազմակողմանի գիտելիքների տեր ինտելեկտուալները, որոնք միավորված են լինելու ինտերնետի միջոցով: Այդ ինտելեկտուալները ձևավորելու են համաշխարհային նոր ընտրանի, այսպես կոչված, *նեթոկրատիա (net – ցանց բառից)*, որը, շնորհիվ իր մտավոր բարձր կարողությունների, պետք է կառավարի ապագայի «քաոտիկ աշխարհը»: Այդ տեսանկյունից տեղին է հիշել նաև Սերգեյ Գրինյանի աշխատությունը[10], որտեղ խոսվում է ցանցային հանրությունում «գերինտելեկտի» ձևավորման հնարավորության մասին:

Անշուշտ, բոլոր տեսություններին, որոնք վերաբերում են ապագայի աշխարհին, պետք է մոտենալ որոշակի թերահավատությամբ: Սակայն ակնհայտ է, որ տեղեկատվական հասարակության զարգացման հաջորդ փուլը պետք է սկզբունքային փոփոխություններ մտցնի առաջին հերթին կառավարման համակարգում:

[9] *А. Бард, Ян Зондерквист*, Netokratia. Новая правящая элита и жизнь после капитализма: Стокгольмская школа экономики, СПб.; 2005

[10] *С. Гриняев,* Интернет как супермозг: от гипотезы к модели, «21-й Век», #1, с. 140, 2003.

ԷՖԵԿՏԻՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Իգոր Բաղիրյան

«Մարդկանց անհրաժեշտ են ոչ թե ապրանքներ
(ընդհանրացնելով՝ կազմակերպություններ, ինստիտուտներ),
այլ այն գործառույթները, որոնք դրանք կատարում են։
Ֆիլիպ Կոտլեր, մարքեթինգի առաջատար տեսաբան

1. Գլոբալիզացիոն զարգացման արդի փուլով պայմանավորված պահանջներ Էֆեկտիվ պետության մոդելին

Եթե մտովի հարցում անցկացնենք «Վերջին 40-50 տարիներն ընդգրկող ժամանակաշրջանի առավել հատկանշական բնութագրերը» թեմայով, ապա հաստատ առաջատար տեղը կզբաղեցնի Քաոսի խորացումը՝ հոգեբանական, քաղաքական, տնտեսական և էկոլոգիական սպառնալիքների աճով արտահայտված։

Այդ փաստի համալիր, մասնագիտական վերլուծությունը պայմանավորեց արդի մետագիտության՝ սիներգետիկայի առաջացումը, որի հիմնադիրներն են ականավոր գիտնականներ, Նոբելյան դափնեկիրներ Ի.Պրիգոժինը և Գ.Հաքենը։

Սիներգետիկայի առանցքային թեման Քաոսն է և դրանում կյանքի կազմակերպումը՝ որպես ելակետային եղելություն։ Հասարակական գործընթացների կառավարման պրակտիկայի տեսակետից սա նշանակում է անցում կայունության հայեցակարգից (տրված բավական նեղ միջակայքում օբյեկտի հիմնական բնութագրիչները պահելու անհրաժեշտության իմաստով) կառավարվող Քաոսի հայեցակարգի։

Նոր հայեցակարգի իրագործումը ենթադրում է մտավոր ջանքերի կենտրոնացում հետևողականորեն շաղկապված հարցերի շղթային. որո՞նք են կարևորագույն գործառույթները, որ համարժեք են ժամանակի տվյալ պատմական հատվածին և որո՞նք պետք է իրականացվեն, ի՞նչ ինստիտուտների կողմից դրանք կարող են իրականացվել, ո՞ր բնութագրիչների կայունությունը և ի՞նչ ձևով պետք է ապահովվի։ Այս հարցերի պատասխաններն են որոշում պետական իշխանության գործառույթներն ու կառուցվածքը։

Համաշխարհային զարգացման արդի փուլի առանձնահատկությունն այն է, որ այս հարցերի պատասխանները պետք է պարբերաբար թարմացվեն, արդիա-

կանացվեն, ընդ որում՝ ժամանակի հատվածն ինքը կրճատման միտում ունի:

Ակնհայտ է, որ առանց կառավարման համակարգի սկզբունքային փոփոխության նման պարբերական թարմացումը կկրի էլ ավելի հիվանդագին բնույթ և շատ արագ կհանգեցնի դրա տապալմանը: Դա էլ տեղի է ունենում կառավարման առկա պահպանողական համակարգերի հետ, որոնք փորձում են պահպանել բոլոր հիմնական բնութագրիչների կայունությունը և այդպիսով պահպանել ստեղծված գործառութային-կազմակերպական կառուցվածքը:

Կառավարման արդի, ողջամիտ համակարգը սկզբից ևեթ կառավարման օբյեկտում նախատեսում է փոփոխությունների համար հոգեբանական և ինստիտուցիոնալ նախապատրաստություն ստեղծող Քաոսի որոշակի աստիճան:

Օբյեկտում Քաոսի որոշակի աստիճանի պահպանումը կապված է նաև արագացված ոչգծային զարգացման հնարավորության հետ: Սիներգետիկայի տեսական դրույթներին համապատասխան, որոնք հաստատվել են նաև գործնականում, Քաոսի որոշակի մակարդակում (երկճյուղության՝ բիֆուրկացիայի կետում) զարգացման տարբերակները (ատտրակտորները) շարվում են ոչ թե ըստ կարգի՝ մի գծով (որպես օրինակ հանդես է գալիս գծային գաղափարախոսությունը. թույլ զարգացած, զարգացող, զարգացած երկրներ), այլ մեկ հարթության մեջ՝ թույլ տալով անցումը դրանցից յուրաքանչյուրին:

Պետական իշխանության արդի համակարգը պետք է պարունակի այնպիսի կառույցներ, որոնք կապված են նախ՝ հարցերի (գործառույթներ – ինստիտուտներ - բնութագրիչներ) վերոնշյալ շղթայի պատասխանների որոնման, և երկրորդ՝ Քաոսի օբյեկտ «մուտքի թույլտվության» և դրա կառավարման հետ:

2. Ազգային անվտանգություն – անվտանգությունների համակարգ – էֆեկտիվ պետություն հայեցակարգ

Պրոֆեսիոնալ առումով երկրորդ դասի խնդիրների (Քաոսի կառավարում) լուծման համար, որոնք պայմանավորված են առաջին հերթին հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ի հետ գրագետ հարաբերություններով, առավել համարժեք են ազգային (պետական) անվտանգության կառույցները:

Մյուս կողմից՝ այդ կառույցների գործողությունները պետք է բխեն խնդիրների առաջին դասի (գործառույթներ – ինստիտուտներ - բնութագրիչներ) հետ կապված տեղեկատվությունից:

Ըստ այդմ՝ պետական իշխանության արդի հայեցակարգերը հենվում են ազգային անվտանգության ընդլայնված մեկնաբանության վրա, որն ընդգրկում է խնդիրների երկու դասն էլ:

Առաջին անգամ նման մոտեցում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջարկեց ԱՄՆ-ը: Մոտեցման հիմքում ընկած են երկու

սկզբունքներ, որոնք ապահովում են պետական իշխանության ամբողջականությունը ժամանակային և տարածքային (կազմակերպական) ասպեկտներով:

Առաջին սկզբունքի էությունը կազմակերպական մակարդակում ռազմավարական և մարտավարական խնդիրները տարբերակելն է: Ընդ որում՝ ռազմավարության համար պատասխանատու սուբյեկտները պարտավոր են պատասխանել հարցերի վերոնշյալ շղթային, այսինքն՝ ունենալ իշխանության հեռանկարային գործառութային-ինստիտուցիոնալ կառույցի տեսլականը:

Ամերիկյան փորձի մեջ, որը հետագայում պատճենվեց բոլորի կողմից, ընդ որում՝ ցավոք, ձևական-կառուցվածքային, այլ ոչ թե գործառնական մակարդակում, այդ նպատակով ստեղծվեց Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ): Վերջինը պարտավոր է համակարգել ռազմավարության հետ կապված բոլոր կառույցները:

Անհրաժեշտ է կրկին ու կրկին, ամեն անգամ՝ էլ ավելի մեծ խորությամբ ընկալել այն փաստը, որ առաջնայինը գործառույթն է, այլ ոչ թե դրա իրագործման կոնկրետ ձևը:

Իշխանության ռազմավարական և մարտավարական մակարդակների տարբերակումն ապահովում է ամբողջականությունը ժամանակի մեջ՝ ի հաշիվ ժամանակի մեջ արտացոլվող որոշումների և ռազմավարության համար պատասխանատու սուբյեկտների կազմակերպական մեծ կայունության հիերարխիայի:

Իշխանության տարածքային (կազմակերպական) ամբողջականությունը ձեռք է բերվում պետական իշխանության՝ որպես համակարգի, դիտարկման միջոցով, որի վերջնական նպատակը անվտանգությունների (հոգևոր-հոգեբանական, տնտեսական, գործառութային-կազմակերպական, իրավական, ռազմաստրատեգիական) փոխադարձ լրակազմի ապահովումն է: Սա է երկրորդ սկզբունքի էությունը:

Անվտանգությունների համակարգի ամբողջականությունն ապահովվում է հոգևոր-հոգեբանական անվտանգության գլխավորությամբ:

Հիերարխիայում հոգևոր-հոգեբանական անվտանգության գերակայությունը բացատրվում է նրա անմիջական կապով ազգային պետականության ամենահիմնարար խնդրի հետ: Ի դեպ, հիերարխիա տերմինը շրջանառության մեջ է մտցրել քրիստոնյա միստիկ, սուրբ Դիոնիսիոսը, և այն նշանակում է նյութի կառավարում (արխիա) հոգևոր սկզբունքների հիման վրա (իերո):

Մարդկային մտածողության տեսակների կառուցվածքը որակական բարդացման տեսակետից կարելի է ներկայացնել «ներքևից վերև» հիերարխիական մակարդակների տեսքով. ***տնտեսական, գիտավերլուծական, քաղաքական, կրոնափիլիսոփայական:***

Ի տարբերություն առաջին երկուսի (ներքևինների), վերջին երկուսը սկզբից ևեթ գործառում են հասկացությունների ամբողջական համակարգե-

րով: Վերջին՝ բարձրագույն մակարդակը տարբերվում է, համենայնդեպս, Բացարձակ Ճշմարտության պարբերական ապրումներով:

Ազգային պետականությունը լիարժեք, ինքնաբավ է, երբ հասարակությունում ներկայացված են ինստիտուցիոնալ առումով ձևակերպված, այսինքն՝ հաղորդակցության որոշակի տեխնոլոգիայով միավորված մտածողության բոլոր տեսակները:

Իրադարձությունների՝ բացառապես բնական ռեսուրսներին տիրապետելու դիրքերից բացատրության՝ հասարակության մեջ լայնորեն տարածված տարբերակները պարզապես արտացոլում են «վնասաբեր» տնտեսական մտածողության գերիշխանությունը: Վնասաբեր այն իմաստով, որ սկզբից ևեթ տնտեսությանը չհանգող քաղաքականությունը փորձում են բացատրել դրա շրջանակներում:

Հենց ըստ էության քաղաքական (էլ չենք խոսում կրոնափիլիսոփայական) մտածողության բացակայությունն էլ դարձավ ազգային անհաջողությունների պատճառը տեսանելի անցյալում և կպայմանավորի դրանք ապագայում:

Պատմական փորձը վկայում է. ժողովուրդը հոգևոր և, որպես հետևանք, նյութական վերելք է ապրում, երբ սկսում են ինստիտուցիոնալացվել մտածողության երկու վերին տեսակները՝ քաղաքականն ու կրոնափիլիսոփայականը: Եվ հակառակը, ազգի դեգրադացումն ուղեկցվում և պայմանավորվում է մտածողության այդ տեսակների կործանման և, որպես հետևանք, ողջ հասարակական կյանքի վուլգար էկոնոմիզացիայի արդյունքում:

Ասվածը նշանակում է, որ որպես հոգևոր-հոգեբանական անվտանգության գերխնդիր-առաքելություն հանդես է գալիս նշված իմաստով ազգային պետականության կառուցումը:

Բերված նկատառումները նպատակահարմար է դիտարկել նաև սիներգետիկայի դիրքերից: Վերջինը յուրաքանչյուր համակարգի որակը՝ անձից մինչև հասարակություն, գնահատում է դրա ինքնակազմակերպման ունակությանը համապատասխան. դա աշխարհի՝ իր գոյաբանական մոդելը և, որպես հետևանք, իր կառուցվածքը որակապես փոխելու ունակությունն է:

Այս համատեքստում կարելի է ասել, որ ազգի ինքնակազմակերպման կարողությունը որոշվում է մտածողության վերին՝ քաղաքական և կրոնափիլիսոփայական երկու տեսակների առկայությամբ:

Առանձին անհատների մակարդակով հոգևոր-հոգեբանական անվտանգությունից պահանջվում է ստեղծել տեղեկատվական միջավայր, որը մի կողմից՝ իրականացնելու է օգնության գործառույթ զարգացման ուղղություն-վեկտորի մասին պատկերացում ձևավորելիս, և մյուս կողմից՝ վնասակար ներգործություններից պաշտպանության գործառույթ:

Այդ պահանջը հենվում է մարդու գիտակցության կառուցվածքի՝ այսօր

բոլորի կողմից ընդունված երրորդության պատկերացման վրա. այն բաղկացած է մարդու ողջ պոտենցիալի գործադրման հետ կապված գերգիտակցությունից, կոնկրետ շրջակա իրադրությունն ընկալող ընթացիկ գիտակցությունից և ընթացիկ գիտակցությամբ չընկալվող գործընթացները ֆիզիկական, հուզական, մտածողական (մենթալ) մակարդակներում կառավարող ենթագիտակցությունից:

Առաջին գործառույթը պետք է անհատին օգնի ընդլայնել ընթացիկ գիտակցությունը մինչև գերգիտակցություն, երկրորդը պետք է ապահովի ենթագիտակցության վրա ընթացիկ գիտակցության կողմից չթույլատրված՝ անհատին արտաքին ուժերի ձեռքին խաղալիք դարձնող ներգործություններից պաշտպանությունը:

Այս իմաստով մտածողության կրոնափիլիսոփայական տեսակի կրողներն այն անհատներն են, ովքեր հասել են միասնության գերգիտակցության հետ: Իդեալում հենց նրանք պետք է գծեն հոգևոր զարգացման վեկտորը և որոշեն հոգևոր-հոգեբանական անվտանգության բովանդակությունը:

Այս մակարդակի անհատները ձևավորում են արդեն ոչ միայն ազգային, այլև համամարդկային հոգևոր հարստությունը: Ուստի, ազգային հոգևոր-հոգեբանական անվտանգությունը պետք է անհատին ապահովի դրա և դրա հասանելիության հնարավորության մասին տեղեկատվությամբ:

Ասվածի համատեքստում հետաքրքիր է վերլուծել փորձագիտական շրջանակներում անվտանգությանը տրված սահմանումներից մեկը. անվտանգությունը ազգային արժեքների սուր սպառնալիքների բացակայության վիճակն է:

Դրանում պետական իշխանությանը ներկայացվում են հետևյալ պահանջները: Նախ՝ այն պետք է իմանա, թե որոնք են հիմնական ազգային արժեքները: Ընդ որում՝ այդ իմացությունը պետք է կրի բավական գործառնական բնույթ:

Երկրորդ՝ պետական իշխանությունը բավական հստակ պատկերացում պետք է ունենա ազգային արժեքների հետ հասարակական և պետական ինստիտուտների կապերի մասին:

Ի վերջո, այն պետք է ունենա իրենց խնդիրներին այդ ինստիտուտների համարժեքության աստիճանի գնահատման մեխանիզմներ:

Ասվածը հաշվի առնելով՝ կարելի է ասել, որ ազգային պետականության կառուցումը, մտածողության նշված տեսակների (նախևառաջ՝ քաղաքական և կրոնափիլիսոփայական) ձևավորման իմաստով, ազգային կարևորագույն արժեք է:

Համաշխարհային պրակտիկայում այդ խնդրի իրագործումը կապված է համապատասխան ակադեմիական գիտական կենտրոնների աշխատանքի հետ, որոնք միաժամանակ ազգային անվտանգության անքակտելի մասն են հանդիսանում:

Հայաստանի պայմաններում անհրաժեշտ է շուտափույթ ձևավորել գիտական ինստիտուտներ, որոնցից մեկի թեմատիկան կընդգրկի մտածողու-

թյան և գիտակցության գործընթացները, հոգեբանական զարգացման բոլոր հիմնական ասպեկտները, Արևելքում և Արևմուտքում առկա հոգեկան զարգացման մեթոդների զինանոցը, այդ թվում՝ լայն տարածում ստացած նեյրոլեզվաբանական ծրագրավորման (ՆԼԾ) մեթոդը: Հատուկ տեղ պետք է հատկացվի լեզուների կառուցվածքի հետ մտածողության փոխկապակցություններին:

Երկրորդը կընդգրկի այն հարցերի շրջանակը, որոնք կապված են հնդեվրոպական և համաշխարհային քաղաքակրթության կայացման և զարգացման, Հայության դերի հետ:

Այդ ինստիտուտների առկայությունն ակադեմիական ողջ համակարգին կհաղորդի ավարտուն բնույթ, կապահովի դրա դինամիկան և ամբողջականությունը:

Կազմակերպական և իրավական անվտանգության տեսական ասպեկտները պետք է դառնան երրորդ ինստիտուտի խնդիրը, որի առաքելությունն է լինելու զարգացման պլանավորման *(development planning)* մեթոդաբանության մշակումը՝ սիներգետիկայի և էվոլյուցիոն տեսությունների ուսումնասիրման և ինստիտուցիոնալ զարգացման տարբերակների մշակման հիման վրա:

Այս գիտական կենտրոնի գործունեությունը պետք է նպաստի հասարակությունում զարգացման պլանավորման (Արևմուտքի հիմնարար ինստիտուտներից մեկի) համընդգրկող մշակույթի ստեղծմանը:

Ռազմաստրատեգիական անվտանգության հետ կապված տեղեկատվության հիմնական սպառողը պետք է դառնան Զինված ուժերի գլխավոր շտաբը, Արտաքին գործերի նախարարությունը, Ազգային անվտանգության կոմիտեն:

Այդ տեղեկատվությունը պետք է ընդգրկի երկու կարևորագույն ուղղություն: Դրանցից առաջինը զինված ուժերի զարգացման պլանավորումն է՝ կառույցի գործառնական-կազմակերպական փոփոխության ուղղության որոշումը, սպայական կազմի պատրաստման, առաջին հերթին՝ հոգեբանական զարգացման հետ կապված հարցերի ողջ շրջանակը: Երկրորդը կապված է ռազմաքաղաքական դիմակայության տարածաշրջանային սցենարների մշակման հետ. հիմնական սուբյեկտների պարզում, գործընթացների վրա ազդելու հնարավորություններ:

Նշված չորս գիտական կենտրոնները պետք է դառնան ազգային անվտանգության բազիսային գաղափարախոսական հիմքը մի կողմից և տրամաբանական գիտական գիտելիքահենքը՝ մյուս կողմից:

3. Ֆինանսական անվտանգության խնդիրները

Ֆինանսական անվտանգությունը տնտեսական անվտանգության համեմատաբար ինքնուրույն ենթահամակարգն է: Հենց այս երկու առանձնահատկությունները՝ համաենթակայությունը և ինքնուրույնությունն են որոշում ֆինանսական անվտանգության խնդիրները:

Այդ խնդիրները ներառում են հետևյալ ուղղությունները.

- Ֆինանսական համակարգի ինստիտուցիոնալ զարգացում. նոր ակտուալ ինստիտուտների ձևավորում, արդեն գոյություն ունեցող ինստիտուտների հետ դրանց կապերի որոշում և այս համատեքստում բոլոր ինստիտուտների գործառույթների ճշգրտում:
- Արդյունավետ վերահսկողության ապահովում դրամական հոսքերի նկատմամբ, դրանց վրա ազդեցության հնարավորությունների հայտնաբերում:
- Փողի պոտենցիալ պահանջարկի ուսումնասիրում:
- Երկրի բոլոր սուբյեկտների արժութային ակտիվների պաշտպանություն հնարավոր սպառնալիքներից:
- Ծայրահեղ, արտակարգ իրավիճակներում բանկային համակարգի գործառնության ռեժիմների տարբերակների մշակում:

Այս խնդիրների լուծման համար խիստ ցանկալի է որպես մուտքային տեղեկատվություն ունենալ տնտեսական քաղաքականության իրական դոկտրինը՝ հիմնված Հայաստանի տնտեսության ամբողջականության տեսլականի, այն է՝ երկիրը տնտեսական համակարգի վերածելու վրա: Այստեղ իրագործվում է տնտեսական համակարգ ֆինանսականի մուտքի սկզբունքը – ուղղակի կապ:

Պոտենցիալ պահանջարկի (որ դիտարկվում է որպես հետագայում վճարունակ պահանջարկի զարգացման և ստեղծման նախադրյալ) ուսումնասիրումը արդի էվոլյուցիոն տեսությունների առանցքային հիմքն է: Տ ե ս ա բ ա ն տնտեսագետները և նրանց մեջ առաջին անգամ Յ.Շումպետերը վաղուց արդեն արձանագրել են, որ փողի վճարունակ պահանջարկի հասկացությունը, որն ընկալվում է որպես վարկի դեմ իրացվելի գրավ, ընդհանուր առմամբ ֆինանսական համակարգի համար զարգացման կոշտ արգելակ է հանդիսանում:

Ըստ սուբյեկտների փողի պոտենցիալ պահանջարկի կառուցվածքի պատկերը կարևոր մուտքային տեղեկատվություն է Հայաստանի ֆինանսական համակարգի նախագծի մշակման համար:

Այդ պատկերի մշակման համար նպատակահարմար է օգտագործել *աուտսորսինգի,* տեղեկատվական-վերլուծական կառույցների, Կենտրոնա-

կան բանկի ռեսուրսները:

Փողի պոտենցիալ պահանջարկի կառուցվածքի պատկերի ստեղծումը հակադարձ կապի սկզբունքի՝ տնտեսության վրա ֆինանսական համակարգի ազդեցության իրագործում է հանդիսանում:

Ֆինանսական հոսքերի նկատմամբ վերահսկողության նպատակներից մեկը կապիտալի արտահոսքի առավելագույն կրճատումն է: Մեկ այլ կարևոր նպատակ է կանխիկ շրջանառության կրճատումը (իդեալում՝ զրոյացումը): Անհրաժեշտ է մշակել այս խնդրի լուծումների տարբերակներ՝ ընդհուպ մինչև դրամական բարեփոխումը: Վերջինը, հասկանալի է, պետք է ներառի ըստ հասարակության առանձին շերտերի դրամակուտակումների մեկնարկային սոցիալական դասակարգման պայմանները:

Երկրի արժութային ակտիվների պաշտպանությունը պետք է հենվի գլոբալ ֆինանսական ճգնաժամի զարգացման նախապես մշակված սցենարների վրա: Մի շարք առաջատար փորձագետների գնահատականներով՝ հետճգնաժամային զարգացումը կունենա 3-4 գոտիների համաշխարհային արժութային համակարգի բաժանման տեսք՝ համապատասխան համաշխարհային և տարածաշրջանային ֆինանսական կենտրոնների գործառույթների փոխակերպմամբ:

Այս համատեքստում անհրաժեշտ է մշակել հնարավոր գոտիներից մեկում Հայաստանի հայտնվելու սցենար:

Նշված խնդիրներն իրենց հրատապությամբ դուրս են գալիս Կենտրոնական բանկի սահմաններից: Վերջինը կարող է սկսել դրանց մշակումը՝ ենթադրելով հետագայում դրանց հնարավոր պահանջվածությունը երկրի բարձրագույն ղեկավարության կողմից:

Ցանկացած պարագայում անհրաժեշտ է ընկալել, որ ֆինանսական անվտանգությունը ֆինանսական համակարգի կառավարման ռեժիմն է:

Ֆինանսական համակարգի հանդեպ ռեժիմ տերմինի կիրառումը նշանակում է, որ կառավարման սուբյեկտն անընդմեջ, ցիկլիկ ձևով առաջադրում և լուծում է ֆինանսական անվտանգության վերոնշյալ խնդիրները:

Շատ հաճախ պատճառը փոխարինելով հետևանքով՝ տնտեսական կամ ֆինանսական անվտանգությունը նույնացնում են կայունության հետ՝ այս կամ այն մեկնաբանմամբ:

Ասվածը հասկանալու համար կարելի է բերել առողջ ապրելակերպի (պատճառ) և դրա հետևանքներից մեկի, օրինակ՝ կայուն արյան ճնշման համեմատությունը: Կայուն արյան ճնշումը միշտ չէ, որ կհանգեցնի առողջ ապրելակերպի, առավել ևս՝ կտրված լինելով նրա համատեքստից՝ չի կարող ապահովվել երկար ժամանակի համար: Այս իմաստով կառավարման համակարգի գտնվելը անվտանգության ռեժիմում նրա համար առողջ ապրելակերպ է նշանակում:

Դա նշանակում է, որ անվտանգության ռեժիմի ստեղծումը չի կարող

ձեռք բերվել գոյություն ունեցող համակարգում կայունության ապահովման բաժնի կամ վարչության ներդրմամբ: Նման մոտեցումը հակասում է ոչ միայն սիներգետիկային, այլև հանրահայտ փիլիսոփայական օրենքին կոնկրետ ճշմարտության մասին. յուրաքանչյուր ճշմարտություն ունի ժամանակային և տարածքային սահմանափակումներ, այսինքն՝ ինչը լավ էր երեկ, կարող է վնասակար լինել այսօր (ժամանակային շրջանակներ) կամ՝ ինչը լավ է ոմանց համար, անպիտան կլինի մյուսներին (տարածքային շրջանակներ):

Այս համատեքստում անհրաժեշտ է պարբերաբար արդիականացնել Կենտրոնական բանկի և բանկային համակարգի մասին օրենքները՝ հաշվի առնելով համաշխարհային և տարածաշրջանային անկայունության արագացող գործընթացը: Սրանում կարտահայտվի զարգացման պլանավորման սկզբունքի իրականացումներից մեկը:

Այստեղ տվյալ փուլում անհրաժեշտ է առայժմ միայն ուշադրության առնել հետևյալ երկու հանգամանքները: Դրանցից մեկը կապված է զարգացած և զարգացող երկրների միջև տարբերությունների հետ: Ինֆլյացիայի թարգեթավորման հայեցակարգը կոչված էր հանձին Կենտրոնական բանկի՝ պետության հեղինակությամբ չեզոքացնելու բնակչության և բիզնեսի սուբյեկտիվ սպասումները ապագա գնանշումներից և արժույթի փոխարժեքից: Այդ սպասումները, որպես կանոն, էքստրապոլյացիա են հանդիսանում (նախկին պատկերացումների փոխադրում ապագա) և մարդկային մտածողության հիմնարար առանձնահատկությունն են:

Բայց դրանով հանդերձ՝ չգիտես ինչու վատ է ընկալվում այն փաստը, որ զարգացած երկրների Կենտրոնական բանկերի թիկունքի հետևում կանգնած է տնտեսական բեմահարթակում հիմնական խաղացողների (կառավարության, Կենտրոնական բանկի, խոշոր բիզնեսի)՝ գների դինամիկայի համար համերաշխ պատասխանատվության կարգավորված մեխանիզմը:

Զարգացող երկրներում այդ մեխանիզմը չկա, և այն (օրինակ, որպես գնային կոմիտե, որ կներառի կառավարությունը, Կենտրոնական բանկը, օլիգարխներին) անհրաժեշտ է ստեղծել վերևից ներքև: Նման մեխանիզմներից դուրս ինֆլյացիայի վրա դրամական ագրեգատներով կամ բանկային տոկոսադրույքներով ազդելու փորձերն անարդյունավետ են:

Մյուս հանգամանքը կապված է ներկայիս գլոբալ ճգնաժամի հետ:

Ճգնաժամը հստակեցրեց այն փաստը, որ ֆինանսական ցուցանիշների կառավարելիության խնդիրը վաղուց արդեն դուրս է եկել անգամ ամենահզոր պետությունների ազգային շրջանակներից: Այս հանգամանքը համաշխարհային ողջ ֆինանսական համակարգի ճարտարապետության վերանայման և վերազգային համաշխարհային կառույցների ուժեղացման գործոն է հանդիսանում: Ի դեպ, այսօր համաշխարհային ԶԼՄ ջանքերով արդեն ստեղծվել են

գլոբալ դեֆլյացիոն սպասումներ:

Ասվածը նպատակ ունի հիմնավորել այն եզրահանգումը, թե վտանգ կա, որ Կենտրոնական բանկը տվյալ փուլում արագ ծերացող ինչ-որ տեսական կոնստրուկցիաների ձեռքին պատանդ կարող է դառնալ:

4. Գործադիր պետական իշխանության կառուցվածքը

Ազգային անվտանգության՝ բոլորի կողմից ընդունված հայեցակարգին համապատասխան՝ գործադիր իշխանության կառուցվածքը երկմակարդակ է:

Առաջին՝ բարձրագույն ռազմավարական մակարդակը միավորում է այն կառույցները (դրանք անվանենք կոմիտեներ), որոնք իրականացնում են զարգացման պլանավորման գործառույթը՝ ըստ հիմնական ոլորտների.

- զարգացման պլանավորման կոմիտե, որը պատասխանատու է տնտեսական և հասարակական զարգացման գաղափարախոսության մշակման, մերձավոր ապագայում տնտեսական համակարգի և իրագործման սխեմայի, ընդհանրապես պետական իշխանության կառուցվածքի օպտիմալացման համար,
- ազգային (պետական) անվտանգության կոմիտե, որը պատասխանատու է ազգային անվտանգության բոլոր տեսակների պաշտպանության, տեղեկատվական և կազմակերպական աջակցության համար,
- հոգևոր-հոգեբանական, տնտեսական, գործառութային-կազմակերպական, իրավական, ռազմաստրատեգիական կոմիտե: Այս կոմիտեի կառուցվածքը պետք է որոշվի անվտանգության նշված տեսակներին համապատասխան մասնագիտացած վարչությունների կողմից,
- շտաբների պետերի կոմիտե, որը պատասխանատու է զինված ուժերի զարգացման պլանավորման, իրադարձությունների ռազմաստրատեգիական զարգացման տարածաշրջանային սցենարների մշակման համար,
- Արտաքին գործերի նախարարությունը, որը պատասխանատու է համազգային զարգացման հայեցակարգի համատեքստում երկրի արտաքին քաղաքական պոտենցիալի և կարգավիճակի զարգացման պլանավորման, զարգացման ներքին և արտաքին խնդիրների զուգակցման համար,
- Կենտրոնական բանկը, որը պատասխանատու է ֆինանսական համակարգի զարգացման պլանավորման, ֆինանսական ան-վտանգության խնդիրների լուծման, տնտեսական զարգացման հայեցակարգին համապատասխան՝ դրամավարկային քաղաքականության համար,
- Արդարադատության նախարարությունը, որը պատասխանատու է զարգացման պլանավորման համար իրավական ոլորտում:

Այս կառույցների գործառնությունը պետք է հենվի ռազմավարական մակարդակ մտած վերոնշյալ չորս գիտական կենտրոն-ինստիտուտների վրա։

Այս կառույցների ընդհանուր համակարգումը միմյանց միջև իրականացվում է նախագահի և վարչապետի կողմից։ Վերջինը պատասխանատու է նաև կառավարման երկու մակարդակների համակարգման համար։

Պետական իշխանության արդյունավետությունը վճռորոշ ձևով կախված կլինի այդ կառույցների ղեկավարների՝ ռազմավարական զարգացման խնդիրներին համարժեքությունից։ Ուստի, անհրաժեշտ է խիստ հստակ նշել այն, որ անթույլատրելի է նրանց նշանակումն ըստ կուսակցական սկզբունքի։

Վերին ռազմավարական մակարդակում համարժեք ղեկավարություն ունենալը կապահովի ողջ պետական ապարատի՝ ազգային հրատապ խնդիրներին աստիճանական անցման գործընթացը։

Ստորին՝ մարտավարական մակարդակում են գտնվում ներկայիս նախարարությունները։ Այս նախարարությունների ցանկը և դրանց ներքին կառուցվածքը պետք է բխեն դրանց՝ վերին մակարդակի կողմից հստակ գծված խնդիրների նկատմամբ առավելագույն կառավարելիության չափանիշից։

Ըստ կուսակցական սկզբունքի այդ կառույցների ղեկավարների նշանակումը պետք է կատարվի պետության և կուսակցությունների միջև պայմանագրի կնքմամբ՝ ապահովելու համար տվյալ ոլորտում վերին մակարդակի ռազմավարական ցուցումների հստակ կատարումը։

Վերն ասվածը հեղինակը դիտարկում է որպես փորձ՝ տարբերակելու ռազմավարական (զարգացման պլանավորում) և մարտավարական մակարդակները՝ կառավարման միասնական համակարգում դրանց միաժամանակյա միավորմամբ։

ԱՐԴԻ ԻՆՖՈԳԵՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Սամվել Մարտիրոսյան

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և դրանց կիրառությունն ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ ռազմավարական պետական ու միջպետական կառույցների կառավարման համակարգում, հանգեցնում են ինֆոգեն ռիսկերի մեծացման ու արտակարգ ներգործությունների ենթակա կրիտիկական հանգույցների աճի: Գլոբալ զարգացմանը համապատասխան՝ ավելանում են նաև ինֆոգեն սպառնալիքները ՀՀ-ի և ԼՂՀ-ի համար:

Հեռահաղորդակցային միջոցների ոչգծային աճի ու ներդրման հետ կապված հիմնախնդիրները շատ երկրների հարկադրում են դիմել տեղեկատվական անվտանգության ապահովման աննախադեպ միջոցների:

Վիրտուալ քրեական աշխարհի համախմբումը

Եթե մի քանի տարի առաջ հաքերները ձախ և անարխիստական ուղղության որոշակի գաղափարախոսության կրողներ էին, իրենց ուժերը փորձող երիտասարդ ծրագրավորողներ ու մանր ցանցային հանցագործներ, ապա վերջին երեք տարիներին այս ոլորտում արմատական փոփոխություններ են կատարվել:

Ցանցային անվտանգությամբ զբաղվող *McAfee* ընկերությունը կիբեռհանցագործության մասին 2006-2007թթ. հաշվետվությունում նշել է այդ արմատական փոփոխությունների մասին: Հենց այդ ժամանակաշրջանում է որակական թռիչք կատարվել կիբեռհանցագործության ասպարեզում, որը հանգեցրել է կազմակերպված քրեական խմբերի (որոնք արդեն կիբեռմաֆիա են անվանվում) կազմավորմանը: Եթե ավելի վաղ կիբեռհանցագործությունն ավելի սպոնտան, քաոտիկ բնույթ էր կրում, կապված էր կա՛մ ոչ մեծ հանցավոր խմբավորումների գործունեության, կա՛մ ազատության, անարխիայի սկզբունքներով և ցանցի նկատմամբ այլ գաղափարայնացված մոտեցումներով գործող խմբերի հետ, ապա այժմ ակնհայտ է կիբեռհանցագործության զուտ քրեականացման ու մերկանտիլացման միտումը: Ձևավորվում է ցանցային մաֆիա, որն ահռելի գումարներ է վաստակում կիբեռհանցագործությունների միջոցով, կամ էլ տեղի է ունենում ավանդական կազմակերպված հանցավորության հետ սերտաճում:

Նոր ժամանակների մեկ այլ առանձնահատկություն է դարձել մանր հաքերական խմբավորումները պետական հովանու տակ վերցնելը: Երկրներն սկսել են

հաքերական զորքեր ձևավորել: Ե՛վ մաֆիան, և՛ պետական մասնագիտացված գործակալությունները սկսել են ակտիվորեն հավաքագրել ազատ հաքերների՝ դրանով իսկ հստակորեն սեգմենտների բաժանելով կիբեռտարածքը և ազդեցության սեգմենտներ ստեղծելով: Ընդ որում՝ արդեն 2007թ. 120 պետություն սկսեցին մասնագետների խմբեր պատրաստել, ովքեր պետք է կազմեին կիբեռզորքերի միջուկը[1], իսկ այսօր, ԱՄՆ գնահատմամբ, արդեն ավելի քան 20 երկիր ծրագրում և կարող են իրականացնել տարբեր տեսակի տեղեկատվական գործողություններ՝ ուղղված Միացյալ Նահանգների դեմ[2]: Փաստորեն, գրեթե բոլոր երկրները, որոնք այս կամ այն կերպ ներգրավված են ակտիվ քաղաքականության մեջ, սկսեցին կազմավորել հատուկ ստորաբաժանումներ, որոնք պատրաստ էին պաշտպանել պետության կիբեռտարածությունը, ինչպես նաև հարձակողական գործողություններ վարել: Կազմավորվող հատուկ ստորաբաժանումները նպատակ ունեն հետախուզական աշխատանք ծավալել ցանցերում, պաշտպանել սեփական ցանցերը, ինչպես նաև հնարավորություն ունեն արգելափակելու և խափանելու հակառակորդի ցանցերը: Նկատի ունենալով խնդիրների բարդությունը, հակառակորդի պաշտպանական հնարավորությունների առկայությունը և տեխնոլոգիաների մշտական զարգացումը՝ նման կառույցները պետք է մշտապես մոդելավորեն սպառնալիքներ, դաշտային մարտական վարժանքներ անցկացնեն: Սրա հետ կապված՝ ցանցում մշտապես հարձակումներ են տեղի ունենում: Այսպես, չինական կիբեռզորքերը վերջին տարիներին ամենաակտիվն են համարվում, դրանք մշտապես հարձակումներ են գործում ողջ աշխարհի պետությունների ցանցերի դեմ:

Այսպես, այս տարվա մարտին, Դալայ լամայի հանձնարարությամբ, ում անհանգստացրել էր արտաքսման մեջ գտնվող իր կառավարության համակարգչային համակարգերի անվտանգության հնարավոր խախտման հանգամանքը, պատրաստվեց *Information Warfare Monitor* ընկերության զեկույցը: Հետազոտության հիման վրա ցույց տրվեց, որ կիբեռլրտես *GhostNet* ծրագիրը վարակել է 103 երկրների 1295 համակարգիչ և թափանցել այնպիսի համակարգեր, որոնք գաղտնի տեղեկատվություն են պարունակում բարձրագույն քաղաքական, տնտեսական և մեդիա մակարդակներում: Ընդհանուր առմամբ, վարակված համակարգիչների 30%-ը տեղակայված է եղել արտաքին գործերի նախարարություններում, դեսպանություններում, միջազգային կազմակերպություններում, լրատվական գործակալություններում և ոչ կառավարական հաստատություններում: Հետազոտությունը ցույց է տվել, որ լրտեսական ցանցի հիմքը կազմում են այն համակարգիչները, որոնք գրեթե բացառապես

[1] *Самвел Мартиросян,* Атаки нового года: соц.сети и госструктуры, http://webplanet.ru/review/security/2007/12/10/cyberwar.html

[2] В информационной войне превосходство в военной мощи не гарантирует от поражения, «ОРУЖИЕ РОССИИ» , http://www.arms-expo.ru/site.xp/049051124053053051052.html

գտնվում են Չինաստանում: Միևնույն ժամանակ, հետազոտողները հայտարարել են, թե չկան համոզիչ ապացույցներ այն բանի, որ չինական կառավարությունը կապ ունի բոթնետի (վարակված համակարգիչների *N* քանակություն) հետ: Պարզապես Չինաստանում ինտերնետից օգտվում են ամենամեծ թվով մարդիկ[3]: Սակայն պաշտոնական Չինաստանի հետ կապված կասկածանքները շարունակում են մնալ, որովհետև դա առաջին դեպքը չէր: Այսպես, միայն 2007թ. Անգելա Մերկելի Չինաստան այցից առաջ Գերմանիայում գրանցվել է ուժգին հարձակում պետական սերվերների վրա: Հատուկ ծառայություններին հաջողվեց կանխել Չինաստանին 160 գիգաբայթ պետական տեղեկատվության չթույլատրված փոխանցումը: 2007թ. հունիսին չինական կողմը գրոհեց Պենտագոնի ցանցերի վրա: Այդպես էլ չբարձրաձայնվեց այն մասին, թե ինչ էին կարողացել «գողանալ» չինացիները և կարողացե՞լ էին արդյոք: Ենթադրվում է, որ չինական հաքերները կարողացել էին պարզապես ստուգել ամերիկյան ցանցերի կառուցվածքը: Չինացիներին հաջողվեց կոտրել ավստրալական ու նորզելանդական պետական ցանցերը, Հնդկաստանում նրանց հաջողվեց կոտրել նախարարների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների, պատգամավորների ավելի քան 200 *e-mail*-ի *account* (օգտվողի անունը և գաղտնաբառը) և մի քանի օր իրենց վերահսկողության տակ վերցնել մի շարք հաստատությունների սերվերները[4]:

Ռուսաստանյան ցանցային հարվածները նույնպես, Հարավային Օսիայի շուրջ օգոստոսյան պատերազմի շրջանում, զգալի էին. նախապես պատրաստված կառույցներն արդյունավետ մասնակցություն ունեցան և ակտիվ մարտական գործողությունների շրջանում կարողացան գրեթե լիովին ոչնչացնել վրացական ցանցային մեդիա-դաշտը:

McAfee փորձագետների գնահատականներով՝ առաջիկա 10-20 տարիներին կարող է գլոբալ ցանցային պատերազմ ծավալվել, և որոշակի երկրներ արդեն լրջորեն պատրաստվում են այդ պահին, որպեսզի թույլ չտան, որ իրենց ցանցերը խափանեն: Այսօրվա դրությամբ կիբեռոլորտում ամենաակտիվ դերակատարներն են Չինաստանը, Ռուսաստանը և ԱՄՆ-ը: Եվրոպական երկրները նույնպես միջոցներ են ձեռնարկում իրենց ցանցային կառույցների տոտալ պաշտպանության ուղղությամբ:

Ցանցային անվտանգությունը ամենադինամիկ զարգացող ոլորտներից է: Առաջիկայում նոր տիպի ամենալուրջ դժվարություններ են առաջանալու հետևյալ ոլորտներում.

---

[3] Китай подозревается в создании ботнета GhostNet http://soft.compulenta.ru/415454/?r1=yandex&r2=news

[4] *Самвел Мартиросян,* Атаки нового года: соц.сети и госструктуры, http://webplanet.ru/review/security/2007/12/10/cyberwar.html

- գրոհներ նոր տեխնոլոգիաների դեմ,
- գրոհներ սոցիալական ցանցերի դեմ,
- գրոհներ *on line*, մասնավորապես՝ բանկային սերվիսների դեմ:

Այդ գրոհներն էլ ավելի «ճարտար» են դառնում ներգործության կառույցների բարդացման հետ կապված:

Ցանցերը խոցելի են

Կիբեռհանցագործներն անհատական, պետական և այլ կառույցների համակարգիչների դեմ ուղղված մշտական գրոհներ են ձեռնարկում, ինչը թույլ է տալիս վիրուսներով վարակված համակարգիչներից (այսպես կոչված զոմբի համակարգիչներից) ստեղծել ցանցեր (բոթնետեր), որոնք թույլ են տալիս գրոհներ նախաձեռնել ցանցերի և սերվերների վրա, զանգվածաբար վիրուսներ ու սպամ տարածել և այլն:

Երկու տարի առաջ, փորձարկումների ժամանակ, առանց բրանդմաուերի (ցանցային պաշտպանության) համակարգիչը ինտերնետին միանալիս «դիմանում» էր մոտ 2 րոպե: Ինչից հետո տեղի էր ունենում «զավթումն» ու համակարգչի զոմբիացումը հաքերների կողմից. համակարգիչը վերածվում էր չարագործների կողմից վերահսկվող սարքի, որը կարող էր օգտագործվել հանցավոր նպատակներով: Զոմբիացման տեխնոլոգիաները վերջին ժամանակներս էապես զարգացել են: Այժմ *Windows XP* օպերացիոն համակարգում աշխատող և ինտերնետին միացած համակարգչի զավթումն ու զոմբիացումը 30 վայրկյանում և ավտոմատացված ձևով է տեղի ունենում:

Վարակված համակարգիչները դառնում են *բոթնետ* կոչվող խոշոր ցանցեր, որոնք վերահսկվում են հաքերների կոնկրետ խմբավորումների կողմից: Արևմտյան փորձագետների գնահատականներով՝ միլիոնավոր համակարգիչներ համախմբող ամենախոշոր *բոթնետերը* վերահսկվում են ռուսական (օրինակ՝ *Russian Business Network - RBN* խմբավորման) և չինական հաքերական խմբերի կողմից, որոնք, ամենայն հավանականությամբ, գտնվում են այդ երկրների հատուկ ծառայությունների ենթակայության տակ:

Խոցելի են ոչ միայն անհատական համակարգիչները, այլ նաև պետական կառույցներում տեղակայված համակարգերը. այստեղ ավելի լուրջ պաշտպանություն է ենթադրվում: Անգամ այն երկրներում, որտեղ պաշտպանությանն ավելի մեծ ուշադրություն է դարձվում, այն հանգամանքը, որ ցանցերը խոցելի են, մշտապես հանգեցնում է տեղեկատվության արտահոսքի: Հայաստանում անվտանգության հետ կապված իրավիճակն էականորեն ավելի վատ է, ինչը, բնականաբար, երկիրը թիրախ է դարձնում ինչպես քաղաքական հակառակորդների, այնպես էլ քրեական կառույցների համար:

Անգամ իսրայելական բանակում, որտեղ ներքին անվտանգությունն ամենաապահովվածներից մեկն է համարվում և որտեղ արգելված է տեղեկատվության արտաքին կրիչներն օգտագործելը, ապրիլի սկզբին, անփութության պատճառով, ֆլեշ-քարտի միջոցով ՑԱԽԱԼ-ի ներքին ցանց է մտցվել *Conficker* համակարգչային վիրուսը (նշենք, որ այս բոթնետը մոտ 10 մլն զոմբի համակարգիչ ունի)։ Վիրուսը ֆլեշ-քարտի (*Disk on key*) մեջ էր, որի օգտագործումն արգելված է ծառայողական հրահանգներով։ «Որդը» տեղեկատվության կրիչից ինքնապատճենվել էր կոշտ սկավառակի վրա և սկսել տարածվել ցանցում։ Դա տեղի է ունեցել ս.թ. մարտի 26-ին։ Հաջորդ օրը՝ մարտի 27-ին, վիրուսը խափանեց դոմենային և համակարգչային ստորաբաժանումների տեղային օգտվողների աշխատանքը՝ կաթվածահար անելով ՑԱԽԱԼ-*NET*-ի գործունեությունը[5]։

Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն կիբեռհանցագործների խմբավորումների գործունեության ամրապնդման գործոնը։ Բոթնետերը գրեթե հասանելի են դարձել շարքային օգտվողների համար։ Մի քանի հարյուր դոլարով ինտերնետում կարելի է կապ հաստատել ընդհատակյա կառույցների հետ, որոնք կարող են գրոհի ենթարկել ձեր ընտրած վեբ-կայքը։

Մարտի սկզբին *BBC*-ի հեռարձակած *Click* հեռուստահաղորդումը վարողները համարձակ փորձ ձեռնարկեցին։ Փորձարկման շրջանակներում, որը կոչված էր ցուցադրելու, թե որքան անփույթ են ինտերնետից օգտվողները, նրանք իրենց վերահսկողության տակ վերցրին 22 հազար տրոյանակիր համակարգիչներ։

Որքան հնարավոր է դատել *BBC*-ի հաղորդումներից և հետագայում տեղի ունեցած բանավեճից, փորձարկման հեղինակները չէին ստեղծել իրենց բոթնետը, այլ ցանցային սև շուկայում գնել էին մի քանի հազար դոլարով։ Վաճառողն անհայտ է մնացել։ Արժե նշել, որ այդ վնասակար ցանցերը կարող են միավորել ավելի քան միլիոն նման մեքենաներ։ Օրինակ՝ *Conficker*-ը վարակել էր ավելի քան 9 միլիոն համակարգիչ։

Սկզբում *Click*-ը վարողները *սպամի* թեստային առաքում իրականացրին հատուկ ձևով նախապատրաստված երկու էլեկտրոնային հասցեներով։ Հաղորդագրության մեջ ասվում էր, որ այդ հասցեներով մի քանի ժամվա ընթացքում մի քանի հազար նամակ է եկել։

Փորձի երկրորդ փուլում *IT* անվտանգության մեջ մասնագիտացած *Prevx* ընկերության հետ համատեղ *DDoS* գրոհներ կազմակերպվեցին սերվերի դեմ։ Անօգուտ հարցումներով հեռուստաալիքը լցնելու համար ընդամենը 60 համակարգիչ բավական եղավ[6]։

---

[5] "Червь" атаковал ЦАХАЛ-NET: военные раввины "благословили" борьбу с вирусом http://www.newsru.co.il/israel/02apr2009/conficker_001.html

[6] Из добрых побуждений телеведущие BBC взяли под контроль 22 тысячи зараженных компьютеров, http://lenta.ru/articles/2009/03/17/bbc/

Փորձը դարձավ հավաստիացումն այն բանի, որ կիբեռտեռորիզմը էժան միջոց է դառնում, ճիշտ այնպես, ինչպես շահիդի գոտին արմատականների ձեռքում. նվազագույն ծախսեր, առավելագույն վնաս:

Ցանցային ներգործության մետամորֆոզներ

Այսօր ներքին ցանցերի խոցելիությունը միայն տեղեկատվական, քաղաքական կամ ֆինանսական վնաս չէ, որ կարող է հասցնել: Խոսքն արդեն այն խոցելիության մասին է, որը կարող է հետևանքներ ունենալ այնպիսի ենթակառուցվածքային հատվածներում, ինչպիսին, ասենք, էներգետիկականն է:

Այսպես, ապրիլի սկզբին ԱՄՆ էներգետիկական ընկերությունների ներկայացուցիչները խոստովանեցին, որ իրենց համակարգիչները մշտապես ենթարկվում են հաքերային գրոհների: Կառավարության պահանջով վերջերս անցկացված աուդիտը բացահայտեց չթույլատրված ներթափանցումների բազմաթիվ հետքեր. խափանարարներն իրենցից հետո թողել են ծրագրեր, որոնք նրանց հնարավորություն են տալիս վերահսկել երկրի էներգետիկ համակարգի կարևոր հանգույցները, հաղորդում է *Associated Press*-ը՝ վկայակոչելով սեփական աղբյուրները:

Աուդիտն անցկացրած մասնագետների կարծիքով՝ կարելի է խոսել այն մասին, որ համակարգում լրտեսություն են արել: Հիմնախնդրի ճշգրիտ մասշտաբը դեռ պարզված չէ, սակայն փորձագետները համոզված են, որ նման ներթափանցման համար խափանարարները պետք է որ պետական աջակցություն ունենային: Ռուսաստանի և Չինաստանի պաշտոնատար անձինք հայտարարել են, թե իրենք անմասն են տեղի ունեցածին[7]:

Համակարգչային անվտանգության գծով փորձագետ Դան Կամինսկին կարծում է, որ, չնայած փոքր է այն մարդկանց թիվը, ովքեր ի վիճակի են վնասել համակարգը, այնուամենայնիվ, խնդիրը հրատապ է: «Պատկերացրեք, թե մեկը մի անգամ համապատասխան ծրագիր է տալիս, և Ամերիկան ընկղմվում է խավարի մեջ: Տնտեսությունը վիթխարի վնաս կկրի: Այնպես որ, խաղադրույքն այս խաղում խիստ բարձր է»,- եզրակացնում է փորձագետը[8]:

ScanSafe ընկերության հետազոտությունները ցույց տվեցին, որ էներգետիկ արդյունաբերությունը վնասարար ծրագրերի ամենասիրելի նպատակն է: Ինտերնետ-անվտանգությամբ զբաղվող ընկերությունը հայտարարել է, որ Էներգետիկայի ոլորտում աշխատող ընկերությունները 189%-ով ավելի շատ են

[7] Россия заявила о непричастности к проникновению в компьютеры энергетической системы США, http://www.itoday.ru/news/15429.html

[8] Хакеры из России угрожают энергетике Америки, http://www.crime-research.ru/news/04.10.2009/5760/

ենթարկված վնասարար ծրագրերի գրոհի վտանգին[9]: Ավելի հավանական է, որ ռազմավարական առումով այդքան կարևոր հանգույցների վրա գրոհները նախապատրաստության փորձ են գերտերությունների միջև գալիք համընդհանուր ցանցային բախումների համար: Այդուհանդերձ, ոչ պակաս, եթե ոչ՝ էլ ավելի խոցելի են ոչ մեծ տերությունները, որոնց թվին է պատկանում նաև Հայաստանը:

Ազգային մասշտաբի այդ կրիտիկական հանգույցները, իրենց խոցելիությամբ, ի վիճակի են սպառնալիքներ ստեղծել հենց պետականության համար՝ ըստ արժանվույն պաշտպանված չլինելու պարագայում: Էներգետիկ կամ նման ցանցերի (բջջային կապ և այլն) խափանումը, ինչը պոտենցիալ սպառնալիքից կարող է վերաճել իրական վտանգի, խիստ կարճ ժամանակընթացքում հասարակության մեջ և պետական կառույցների աշխատանքում բարոյալքում կառաջացնի, ինչին հասնել չի կարելի նույնիսկ լայնածավալ ռազմական ներխուժման դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաներից Հայաստանի կախվածության մեծացումն էլ ավելի խոցելի է դարձնում ցանցերը, որոնք թափանցում են կենսագործունեության բոլոր ոլորտները: Ազգային մակարդակի անվտանգության ցանցային համակարգերի ձևավորման նկատմամբ միայն համակարգային մոտեցումը թույլ կտա կանխել հնարավոր հետևանքները, որոնք արդեն դրսևորվում են որպես հետևանք ինչպես Ադրբեջանի և Թուրքիայի էլ ավելի համակարգված գրոհների, այնպես էլ զուտ քրեական ցանցային խմբավորումների քաոտիկ ներգործության:

[9] Хакеры предпочитают атаковать энергетическую промышленность, http://www.winline.ru/news/4283.php

ԿԻՐԱՌԱԿԱՆԻՑ ԴԵՊԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ. ՀՆԱՐԱՎՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՐԻՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

Միխայիլ Աղաջանյան

Ինչպես հայտնի է, ասիմետրիկ ռազմական գործողությունների վարման արդի հայեցակարգերի մշակման ուղղություններից մեկը ախոյան պետության, այսպես կոչված, համակարգաստեղծ ենթակառուցվածքների վրա ներգործությունն է: Այդ կառույցներն այլ կերպ անվանվում են նաև կրիտիկական ենթակառուցվածքներ, ինչն ընդգծում է դրանց վճռական նշանակալիությունը նման ենթակառուցվածքներ ունեցող պետության ազգային անվտանգության առնվազն անհրաժեշտ մակարդակի ապահովման համար:

Արդի պետության կրիտիկական ենթակառուցվածքի համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում պետության տեղեկատվական ենթակառուցվածքը, որի արդյունավետ պաշտպանությունը ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտ տարր է հանդիսանում:

Տեղեկատվական ենթակառուցվածքն ընդգրկում է պետության կրիտիկական ենթակառուցվածքի բազմաթիվ տարրեր և, հետևաբար, կարող է սահմանվել որպես կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածք: Կրիտիկական ենթակառուցվածքի՝ տեղեկատվականի հետ սերտորեն կապված հիմնական սեկտորներն են կառավարման համակարգերը կառավարությունում, պաշտպանական, ֆինանսաբանկային համակարգերում, գիտահետազոտական սեկտորում, արդյունաբերությունում, էներգետիկայում (այդ թվում և ատոմային), տրանսպորտում, ջրամատակարարման մեջ, կոմունալ տնտեսությունում, հեռահաղորդակցությունում, քաղաքացիական պաշտպանությունում[1]:

Թվարկված ոլորտները հատուկ նշանակություն ունեն ՀՀ տեղեկատվական ենթակառուցվածքի պաշտպանության առումով: Հայաստանում տեղեկատվական անվտանգության հայեցակարգի ձևավորման շուրջ վարվող նա-

[1] *Тимофей Сайтарлы,* Защита критической инфраструктуры – составная часть национальной безопасности и стабильности, http://www.crime-research.ru/library/Saytarly_aprl.html, ինչպես նաև *Center for Security Studies (CSS) at the Swiss Federal Institute of Technology (ETH)*): *Elgin M. Brunner* and *Manuel Suter*, International CIIP Handbook 2008/2009. An Inventory of 25 National and 7 International Critical Information Infrastructures Protection Policies. Zurich.

խապատրաստական աշխատանքի համատեքստում կարևոր է թվում այն երկրների փորձը, որոնք բավական առաջ են գնացել իրենց տեղեկատվական անվտանգության հայեցակարգային մշակումներում: Իհարկե, դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես մեր ներազգային տեղեկատվական ենթակառուցվածքի առանձնահատկությունը, այնպես էլ երկրի համար իրական վտանգ ներկայացնող արտաքին բնույթի սպառնալիքներն ու մարտահրավերները:

Հայաստանի տեղեկատվական անվտանգության ապահովման հայեցակարգային մշակումները պետք է կարևոր տեղ գրավեն վերջին երկու տարիներին երկրում ընդունված կարևորագույն փաստաթղթերի (Ազգային անվտանգության ռազմավարություն, Ռազմական դոկտրին) շարքում: Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, Հայաստանի համար առաջնահերթ խնդիր է կիրառական մշակումների իրականացումը՝ պոտենցիալ հակառակորդի կամ թշնամական կողմի (որպես պետական կամ ոչ պետական կազմավորում) վրա արդյունավետ ասիմետրիկ ազդեցություն գործելու համար: Տեղեկատվական անվտանգության վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթերի մշակման գործում Հայաստանում կադրերի պակաս է զգացվում, ինչը նշում են որոշ հեղինակներ»[2]: Դա կարող է կոմպենսացվել ավելի կիրառական և որոշակի գործողությունների մշակման ճանապարհով՝ խոշոր երկրների փորձի հիման վրա բավարարվել այնպիսի երկրների արդեն գոյություն ունեցող մշակումներով, ինչպիսիք են, օրինակ, ԱՄՆ-ը և Գերմանիան[3], իհարկե, նրանց փորձը մեր տեղեկատվական միջավայր ներմուծելով ներազգային ու արտաքին գործոնների հաշվառմամբ: Իսկ կիրառական մշակումները և դրանց հիման վրա իրականացվող կոնկրետ գործողությունները՝ նախևառաջ, արտաքին քաղաքական գործընթացների վրա տեղեկատվական ներգործության առումով, որոնք առավել չափով են առնչվում Հայաստանի ազգային շահերին (պոտենցիալ հակառակորդի զսպում, թշնամանքի չեզոքացում և համազգային խնդիրների լուծման համար բարենպաստ տեղեկատվական դաշտի ստեղծում), այս փուլում Հայաստանի համար ավելի քան հրատապ են: Պատճառները հետևյալն են.

[2] Геворк Погосян, Информационная безопасность требует профессионального подхода // Голос Армении, № 6 (19797), 27.01.2009.

[3] 2005թ. Գերմանիայում ընդունվեց տեղեկատվական ենթակառուցվածքի պաշտպանության Ազգային պլանը (*National Plan for the Protection of Information Infrastructures*, *NPSI*), որը երկրի կառավարության համադաշնային ռազմավարական փաստաթուղթ է: Ազգային պլանը երեք ռազմավարական նպատակ է հետապնդում. տեղեկատվական ենթակառուցվածքի պաշտպանություն, հնարավոր տեղեկատվական-տեխնոլոգիական խափանումները վերացնելու պատրաստականություն, պոտենցիալի ուժեղացում տեղեկատվական անվտանգության և միջազգային ստանդարտների հաստատման գործում: Կարևոր է նշել, որ Ազգային պլանը հասցեագրված է ինչպես Գերմանիայի պետական կառույցներին, այնպես էլ քաղաքացիական հատվածին, բիզնես-կառույցներին ու երկրի քաղաքացիներին:

1. Հայաստանի ազգային անվտանգության արտաքին սպառնալիքներն ու մարտահրավերները տեղեկատվական «տրեկում» ներկա պահին խիստ որոշակի են և ապագայում կանխատեսելի՝ նկատի ունենալով նման սպառնալիքների պոտենցիալ գլխավոր աղբյուրը՝ Ադրբեջանը: Համապատասխանաբար, Հայաստանը պետք է ունենա սեփական արդյունավետ կիրառական մշակումներ, որոնք կարտացոլեն ինչպես սպառնալիքի աղբյուրի վրա ներգործության միջավայրի, այնպես էլ տվյալ սպառնալիքների աղբյուրի առանձնահատկությունը:

2. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման համազգային նպատակներին կարելի է հասնել ոչ պակաս կիրառական, նշանակում է՝ միջազգային հանրության, առանցքային պետությունների, որոշումներ կայացնող կոնկրետ քաղաքական գործիչների, փորձագիտական հանրության ներկայացուցիչների (ովքեր ներգրավված են Հայաստանի համար կարևոր գլոբալ և տարածաշրջանային նախագծերի մշակման գործում) կարծիքի ձևավորման ուղղությամբ կոնկրետ և հետևողականորեն իրականացվող տեղեկատվական ներգործության իրականացման միջոցով:

Եվ այսպես, երբ խոսում ենք տեղեկատվական ներգործության կիրառական մշակումների մասին, հասկանում ենք, որ խոսքն այն մասին է, ինչն ընդունված է անվանել տեղեկատվական գործողություններ:

Հայաստանի համար, որը տեղեկատվական գործողությունների լայն համալիր վարելու համար ոչ միայն կադրերի, այլև առանձին ռեսուրսների տեխնոլոգիական պակաս ունի, նպատակահարմար է թվում հատուկ ուշադրություն դարձնել նախ՝ երկրի զինվորական ու քաղաքացիական հատվածների սերտ համագործակցության և երկրորդ՝ Սփյուռքի ցանցային ներկայացվածության շահավետությանը: Առաջինը թույլ կտա «փակել» Հայաստանի կադրային և տեխնոլոգիական դեֆիցիտի նեղ տեղերը, իսկ երկրորդը կհամախմբի Հայությանը մեկ ընդհանուր տեղեկատվական ցանցում, որտեղ անգամ ամենալոկալ ռեսուրսը (օրինակ՝ քաղաքային թերթը կամ կաբելային ալիքը) կարող է կարևոր նշանակություն ունենալ:

Առաջիկա տարիներին Հայաստանը չի կարող գործադրել տեղեկատվական գործողությունների վարման այնպիսի տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինչպիսին, ասենք, ունի ԱՄՆ-ը իր սովորական զինանոցում: Տեղեկատվական անվտանգության ոլորտի ԱՄՆ դոկտրինալ փաստաթղթերը նախատեսում են տեղեկատվական գործողությունների վարման ընդհանուր համալիրի այնպիսի տարրեր, ինչպիսիք են ռադիոէլեկտրոնային պայքարը (*Electronic Warfare*, *EW*), հոգեբանական գործողությունները (*Psychological Operations*, *PSYOPS*), ցանցային գործողությունները (*Computer Network Opera-*

tions, *CNO*): Տեղեկատվական գործողությունների օժանդակ տարրեր են համարվում տեղեկատվության անվտանգության ապահովումը (*Information Assurance*, *IA*), հակառակորդի կարևոր տեղեկատվական կառույցների ֆիզիկական ոչնչացումը (*Physical Attack*) և հակահետախուզությունը (*Counterintelligence*): Նշվում է, որ դրանք ըստ էության անբաժան են տեղեկատվական գործողությունների հիմնական տարրերից և ուղղակիորեն կամ անուղղակիորեն գործադրվում են ընդհանրապես նման գործողությունների խնդիրների լուծման ժամանակ[4]:

Հայաստանում տեղեկատվական գործողությունների մշակումը (Սփյուռքի և բարեկամ պետությունների, ինչպես նաև ոչ պետական կազմավորումների ռեսուրսների օգտագործմամբ) կարող է իրականացվել հետևյալ հիմնական ուղղություններով.

1. պոտենցիալ հակառակորդի կամ այլ թշնամական կողմի վրա տեղեկատվական ազդեցություն՝ նրանց մոտ, նրանց ներքին հասարակական կարծիքի մեջ ԼՂՀ խնդրի՝ զինված ճանապարհով անլուծելիության օբյեկտիվ պատկեր ստեղծելու նպատակով,
2. հասարակական կարծիքի և քաղաքական ղեկավարության մոտեցումների, փորձագիտական հանրության գնահատականների վրա տեղեկատվական ներգործություն այն երկրներում, որոնք ժխտում են հայերի ցեղասպանությունը, կամ այն երկրներում, որոնք խուսափում են ճանաչել այն,
3. տեղեկատվական ազդեցություն լայն մաս-մեդիա և ավելի նեղ՝ փորձագիտական-ակադեմիական ռեսուրսներում՝ առաջ մղելու համար այն կարծիքը, որ Հարավային Կովկասում և նրան անմիջապես հա-դակից այլ տարածաշրջաններում անհնար է երկարատև կայունություն՝ առանց երկու հայկական պետությունների ռազմաքաղաքական հնարավորություններն իբրև հենարան ունենալու և տարածաշրջանի այլ երկրների հետ՝ առանց նախապայմանների, անդրսահմանային տնտեսական նախագծերում հավասար մասնակցության:

Հայաստանի տեղեկատվական ներգործության համակարգի կառուցմանը կարող է նպաստել ԱՄՆ փորձի վերլուծությունը: Այստեղ կարևոր է տեղեկատվական ներգործության կառուցվածքային, կառավարչական և գործառնական բաղադրիչների կարգավորված կոորդինացվածության սկզբունքը:

ԱՄՆ-ում 2003թ. հոկտեմբերին ընդունված «Տեղեկատվական գործողությունների վարման պլանը» (*Information Operations Roadmap* - 2006թ. փետր-

[4] *А. Костюхин, Г. Горбунов, А. Сажин,* Информационные операции в планах командования ВС США // Зарубежное военное обозрение, 2007, № 5.

վարին գործողությունների պլանի դրույթները մանրամասնվեցին «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրինում» - *Joint Doctrine for Information Operations*, *JP 3-13*) հանգամանալի հանձնարարականներ է պարունակում՝ տասներկու հիմնական խնդիրների լուծումն ապահովելու համար.

1) ընդհանուր պատկերացումների ձևավորում տեղեկատվական գործողությունների մասին,

2) տեղեկատվական գործողությունների հետ կապված գաղափարների վերանայում և աջակցություն,

3) լիազորությունների բաշխում,

4) մասնագետների պատրաստման համակարգի ստեղծում,

5) համընդգրկուն և համախմբված վերլուծական աջակցության ապահովում,

6) համակարգչային ցանցերում գործողություններ վարելու երկարատև համընդգրկուն ռազմավարության մշակում,

7) ցանցերում գործողությունները ներկառուցել ընդհանուր ռազմական համակարգում,

8) էլեկտրոնային պայքարի ոլորտում ներդրումային ռազմավարության մշակում,

9) հոգեբանական գործողությունների վարման հնարավորությունների ավելացում,

10) հոգեբանական գործողությունների, հասարակության և հրապարակային դիվանագիտության հետ կապերի ֆունկցիոնալ բաժանում,

11) անվտանգության ապահովման և ապատեղեկատվության ուղղությամբ գործողությունների վարման անհրաժեշտության հիմնավորում,

12) պլանավորման, բյուջետային ֆինանսավորման, ծրագրերի պատրաստման և դրանց ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացում:

Գործողությունների այս պլանում համալիր մոտեցում է ցուցաբերվել տեղեկատվական գործողությունների հիմնախնդրին, որը հենվում է այն պատկերացման վրա, որ տեղեկատվությունը կենսականորեն կարևոր ռազմավարական ռեսուրս է ազգային անվտանգության ապահովման և ռազմական գործողությունների վարման համար, որոնց հաջողությունը հավասար չափով կախված է նաև և՛ հենց տեղեկատվությունից, և՛ տեղեկատվական համակարգերի գործունեությունից:

Տեղեկատվական գործողությունների անցկացման համալիր արդյունավետության նշված խնդիրների շարքում հատուկ ուշադրության են արժանի չորրորդ և տասներորդ խնդիրները (հատկապես այն երկրների համար, որոնք նոր են ձեռնարկում տեղեկատվական գործողությունների սեփական մեթոդիկայի և պրակտիկայի մշակումը և համապա-տասխան կառույցներն

ընդհանուր ռազմաքաղաքական ու քաղաքացիական ինստիտուցիոնալ սխեմաներում ներկառուցելը):

Չորրորդ խնդրի շրջանակներում այնպիսի կոնկրետ հանձնարարականներին զուգահեռ, ինչպիսիք են ազատ վարձու և քաղաքացիական մասնագետների ներգրավումը և տեղեկատվական գործողությունների ուսուցման ծրագրերի արագ ինտեգրումը ռազմական պատրաստության համակարգին, գործողությունների պլանն ընդգծում է, որ տեղեկատվական գործողությունների գծով մասնագետների պատրաստումը պետք է հաշվի առնի այդ գործողությունների վարման բոլոր ուղղությունները, քանի որ դրանք համալիր միջոցառումներ են: Նշվում է նաև, որ մինչև վերջին ժամանակներս համալիր պատրաստություն չէր անցկացվում, և մասնագետները պատրաստվում էին նեղ բնագավառների (օրինակ՝ էլեկտրոնային պայքարի, հոգեբանական գործողությունների) համար, և մի շարք հարցերի (ապատեղեկատվություն, անվտանգության ապահովում) գործնականում ուշադրություն չէր հատկացվում:

Գործողությունների պլանում դրվում է հրամանատարների պատրաստման խնդիրը, ովքեր ընդունակ են պլանավորել և վերահսկել լիարժեք տեղեկատվական գործողությունների անցկացումը:

Տասներորդ խնդրի վերաբերյալ գործողությունների պլանը խորհուրդ է տալիս համակարգել ԱՄՆ պաշտպանության նախարարության և կառավարության աշխատակիցների հաղորդագրությունների թեմաները և հրապարակային ելույթները՝ ճշգրտելով, սակայն, որ ցանկացած բաց ելույթ պետք է գնահատվի ազգային անվտանգության և քաղաքականության շահերին ու նպատակներին դրա համապատասխանության տեսակետից[5]:

Տեղեկատվական գործողությունների վարման ընթացքում առաջացող խնդիրների լուծման սեփական մոտեցումների մշակումը Հայաստանի պետական մարմինների առջև կարող է բարդ հարցեր դնել: Այստեղ անհրաժեշտ է ինչպես սերտ միջգերատեսչական աշխատանք՝ իշխանության գործադիր թևի շրջանակներում՝ հենվելով ռազմաքաղաքական կառույցների վրա, այնպես էլ քաղաքացիական մասնագետների լայն ներգրավվածություն: Անհրաժեշտ կլինի նաև նկատի ունենալ աշխարհի տեղեկատվական-տեխնոլոգիական առաջատար տերությունների համապատասխան փորձը՝ միևնույն ժամանակ մնալով հետխորհրդային տարածքում հավաքական անվտանգության համա-

[5] 2005թ. մայիսին ԱՄՆ-ում ընդունվեց դոկտրինալ բնույթի առանձին փաստաթուղթ տեղեկատվական գործողությունների անցկացման ժամանակ հանրային տեղեկատվական աջակցության ապահովման վերաբերյալ (*Public Affairs, JP 3-61*): Փաստաթղթում նշվում է, որ այն հրահանգ է ԱՄՆ բարձրագույն հրամանատարության համար հասարակայնության հետ կապեր հաստատելիս, ազգային, միջազգային և արտաքին լսարանի այլ մակարդակներում:

կարգերին մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների շրջանակներում: Լրացուցիչ դժվարություններն արդեն անմիջականորեն կապված կլինեն գլոբալ տնտեսական անկման պայմաններում նյութատեխնիկական ապահովման և համապատասխան ֆինանսավորման հետ: Գլխավորն այն է, որ երկրի ազգային անվտանգության տեսակետից այս կարևոր ուղղության մեջ գործադրված ջանքերն ու ներդրումները կունենան զսպիչ, կանխարգելիչ և չեզոքացնող ներգործություն Հայաստանի և Հայության ներկայիս ու հավանական սպառնալիքների և մարտահրավերների վրա:

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԹԵԶԵՐԸ

Կարեն Վրթանեսյան

1. Ներածություն

Հայ-ադրբեջանական հակամարտությունն ավելի քան հարյուրամյա պատմություն ունի: Մերթ սաստկանալով, մերթ արտաքնապես հանդարտվելով՝ այն միշտ ուղեկցվել է փոխադարձ հոգեբանական ու քարոզչական ճնշումներով:

Հակամարտության երկու կողմերն էլ մշակել և օգտագործում են համապատասխան «քարոզչական առասպելաբանություն»՝ բաղկացած փաստերի, առասպելների ու կարծրատիպերի խայտաբղետ խառնուրդից, որի նպատակն է արդարացնել «մերոնց» գործողություններն ու խրախուսել հակառակորդի դեմ ուղղված հետագա քայլերը: Միաժամանակ նպատակ է դրվում ապամարդկայնացնել *(дегуманизировать)* հակառակորդին՝ ինչպես «մերոնց», այնպես էլ պայմանականորեն չեզոք երրորդ ուժերի աչքում: Փորձ է արվում ճնշելու հակառակորդի դիմադրելու կամքը:

Տարիների ընթացքում մշակված քարոզչական ապարատն այսօր էլ որպես զենք օգտագործվում է հայ-ադրբեջանական հակամարտության տեղեկատվական և հոգեբանական, գաղափարախոսական ճակատներում:

Անհավատալի է թվում, բայց առայսօր ոչ մի հայ հետազոտող համակարգված չի զբաղվել հայկական կողմի դեմ ուղղված «քարոզչական առասպելաբանությունը» վատ է ուսումնասիրված: Մենք որոշեցինք գոնե մասամբ լրացնել այս բացը և հայկական կողմի դեմ օգտագործվող քարոզչական թեզերի ցուցակագրում ու նախնական դասակարգում կատարել: Աշխատանքին աջակցում են մի շարք անհատներ, ամենազգալի ներդրում ունեն Վահագն Մխոյանը և Անդրեյ Մարինոսյանը:

Որոշ դիտողություններ

- Պետք է հաշվի առնել, որ կախված փոփոխվող հանգամանքներից, որոշ թեզեր կորցնում են իրենց կարևորությունն ու արդիականությունը, հնարավոր են նաև նոր թեզերի առաջացում, եղած թեզերի խմբագրում ու կատարելագործում: Այնուամենայնիվ, կան թեզեր և քարոզչական

հնարքներ, որոնք գրեթե անփոփոխ օգտագործվում են XX դարի սկզբից ի վեր։

- Թեզերից շատերն անհնարին է միանշանակ կերպով դասել որևէ մեկ խմբի։ Այդ պատճառով թեզերի դասակարգումը պայմանական է. մեկ թեզը կարող է միաժամանակ պատկանել մեկից ավելի խմբերի, օգտագործվել տարբեր լսարանների հետ աշխատելիս։
- Կոպիտ կեղծիքներ պարունակող, լսարանի տգիտության հույսով առաջ քաշվող թեզերը հիմնականում նախատեսված են ներքին լսարանի, ինչպես նաև տարածաշրջանային իրողությունից ու մասնավորապես հայ-ադրբեջանական հակամարտությանը լրիվ անտեղյակ լսարանների համար։
- Ոչ բոլոր թեզերն են կեղծիքների վրա հիմնված։ Ընդհանրապես ամենաարդյունավետ քարոզչությունը կառուցվում է իրական փաստերի վրա, սակայն դրանք հաճախ ներկայացվում են ենթատեքստից կտրված և/կամ քարոզչությունը վարողին անհրաժեշտ շեշտադրումներով։
- Թեպետ թեզերի մեծամասնության սկզբնաղբյուրները տվյալ պահին անհնարին է ստույգ կերպով տեղայնացնել, սակայն կարելի է ենթադրել, որ դրանցից ոչ բոլորի հեղինակներն են ադրբեջանցիները կամ նրանց այլազգի խորհրդատուները։ Ցավոք, երբեմն հայկական կողմն ինքն է քարոզչական նպատակներով չարաշահելու պոտենցիալ ունեցող առիթներ տրամադրում հակառակորդին։
- Թեզերը հավաքվել են զանազան աղբյուրներից՝ լրատվամիջոցներից, գրականությունից, համացանցային ֆորումներից ու բլոգերից, ադրբեջանցիների ու հայերի հետ մասնավոր զրույցներից։

2. Դասակարգումը ըստ նպատակային լսարանի

Ըստ թիրախային լսարանների՝ հայկական կողմի դեմ ուղղված քարոզչական թեզերը կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. **հայերի համար նախատեսված թեզեր**, որոնք իրենց հերթին կարող են տարբերվել՝ կախված այն բանից, թե Հայության կոնկրետ որ հատվածի համար են նախատեսված. ՀՀ բնակչության, ԼՂՀ բնակ-չության, թե սփյուռքահայության;
2. **պայմանականորեն չեզոք դիտորդներին ուղղված թեզեր**;
3. **ներքին օգտագործման թեզեր**՝ Ադրբեջանի և մեծ մասամբ նաև Թուրքիայի բնակչության համար նախատեսված։

Այս բաժանումն, իհարկե, այդքան էլ հստակեցված չէ, քանի որ իրականում թեզերից շատերը կարող են օգտագործվել մեկից ավելի լսարաններում: Օրինակ՝ Հայաստանում համատարած սովի մասին ներադրբեջանական օգտագործման թեզը դժվար է տարածել հայաստանաբնակների շրջանում (համենայն դեպս այդ տեսքով), բայց այն մասամբ տարածված է արտերկրում ապրող հայերի որոշ շրջանակներում: Մյուս կողմից՝ միևնույն թեզի ձևակերպումները կարող են տարբերվել՝ կախված նպատակային լսարանից: Օրինակ, եթե Հայաստանի տնտեսական վիճակն արտերկրում ապրող հայերին մատուցվում է որպես խավար ու սով, ապա հայաստանաբնակներին դա մատուցվում է որպես շրջափակման հետևանքով տնտեսության քայքայում, տնտեսական զարգացման արգելակում: Այնուամենայնիվ, գոյություն ունեն նաև հստակորեն հասցեագրված թեզեր:

2.1. Հայերի համար նախատեսված թեզեր

1. Հայերի և ադրբեջանցիների նմանության, նրանց միջև իբր գոյություն ունեցած դարավոր բարեկամության մասին թեզեր: Բարեկամություն, որը խզվեց ամենատարբեր ուժերի ազդեցության և ամենատարբեր իռացիոնալ պատճառներով՝ այդ ժողովուրդների կամքին հակառակ:
2. Ադրբեջանն ու Թուրքիան որպես թշնամական պետություններ ընկալումը թուլացնող թեզեր: Առաջին և երկրորդ կատեգորիայի թեզերի նպատակն է հայկական կողմում հակամարտության իրական պատճառների մասին խեղաթյուրված տպավորություն ստեղծելը:
3. Սպասվելիք հայ-ադրբեջանական (հայ-թուրքական) բարեկամության անխուսափելիության մասին թեզեր: Այս կատեգորիայի թեզերը, շարունակելով հայ-ադրբեջանական հակամարտության իրական պատճառների աղճատումը, փորձում են հայկական լսարանի գիտակցության մեջ պատկերել մի պայծառ ապագա, որին հասնելու համար ընդամենը պահանջվում է կատարել մի քանի պարզ քայլ, օրինակ՝ հաղթահարել մի քանի կարծրատիպ:
4. Ցանկացած գնով հակամարտության շուտափույթ կարգավորման անհրաժեշտությունը հիմնավորող թեզեր: Նպատակը ոչ հայանպաստ լուծումների նկատմամբ հայերի շրջանում առավել հանդուրժողական մթնոլորտի ձևավորումն է:
5. Հայ ժողովրդի տարբեր հատվածներն իրար դեմ տրամադրող, երկպառակող թեզեր: Նշենք, որ այս կատեգորիայի թեզերը, որպես կանոն, ունենում են մի քանի տարբերակներ՝ կախված այն բանից, թե կոնկրետ, որ հատվածի համար են նախատեսվում:

6. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը սև գույնով պատկերող, այդ վիճակն Արցախի հիմնահարցի հետ կապող թեզեր: Սրանց նպատակը ինչպես պառակտելը, այնպես էլ պարտվողական տրամադրություններ ստեղծելն է:
7. Հայաստանի միայնակության, թշնամիներով շրջապատված լինելու և անելանելի դրության մասին թեզեր: Այս խմբի թեզերն ունեն տարբերակներ հայաստանցիների, արցախցիների և սփյուռքահայերի համար: Նպատակը պարտվողական տրամադրություններ առաջացնելն ու խորացնելն է:
8. Ազատագրված տարածքի հայկական չլինելու, այդ տարածքների՝ մեզ համար անպետքության, դրանք հանձնելու անհրաժեշտության և նույնիսկ անխուսափելիության մասին թեզեր:
9. Արցախյան պատերազմում հայերի հաղթանակն արժեզրկող թեզեր: Նպատակներից մեկը հայերի շրջանում սեփական ուժերի նկատմամբ թերահավատություն ստեղծելն է:
10. Հայերի համար խորհրդանիշ հանդիսացող գործիչներին, դեպքերը և իրադարձությունները պախարակող ու արժեզրկող թեզեր: Նպատակը ազգային ինքնությանը հարվածելը և ազգային արժեքները վարկաբեկելն է:
11. Երկու կողմի «մեղքերի հավասարակշռություն» հաստատելուն ուղղված թեզեր: Այս տիպի թեզերը հիմնականում առաջ են քաշվում օտարերկրյա «չեզոք» փորձագետների և խորհրդականների կողմից («երկու կողմն էլ իրար արժեն» սկզբունք):
12. Ադրբեջանի հակահայկական քաղաքականության քննադատությունը ներհայկական խնդիրներով փոխարինող և, որպես հետևանք, այդ քաղաքականությունը արդարացնող թեզեր *(«перевод стрелок»)*:
13. Թեզեր Ադրբեջանի հզորանալու անխուսափելիության և հանդուգն Հայաստանի հետ մոտալուտ հաշվեհարդար տեսնելու մասին, եթե հայերը չհրաժարվեն «Ադրբեջանի նկատմամբ հավակնություններից» *(«Армяне, одумайтесь!»* տիպի թեզեր): Նպատակն է վախեցնել, խուճապ առաջացնել, դիմադրողականությունը նվազեցնել:
14. Քաղաքակրթական թեզեր. անհիմն զիջումներին չհամաձայնվելը ներկայացվում է որպես հետամնացություն, «եվրոպական քաղաքակրթությանը» կամ «քրիստոնեական արժեքներին» չհամապատասխանելու ապացույց, երեխայական կամակորություն: Փորձեր են արվում հայկական կողմում կոգնիտիվ դիսոնանս առաջացնել՝ շահարկելով հայերի ինքնընկալումը որպես քաղաքակիրթ, ադրբեջանցիներից մշակութապես ավելի հարուստ, արարիչ ազգի:

2.2. Չեզոք դիտորդներին ուղղված թեզեր

1. Հայերին և Հայաստանը ահաբեկչության, թմրաբիզնեսի, թրաֆիքինգի, միջազգային այլ «մոդայիկ» հանցագործությունների հետ կապելուն ուղղված թեզեր:
2. Հայերի՝ ադրբեջանցիների նկատմամբ գործած, գործվող և դեռ գործվելիք վայրագությունների մասին պատմություններ: Այս տիպի թեզերը սովորաբար պարունակում են ավերածությունների, թալանի, հրկիզումների, բռնությունների (հատկապես երեխաների և կանանց նկատմամբ), նույնիսկ մարդակերության տեսարաններ:
3. Հայաստանի ագրեսոր, զավթիչ, հակամարտության հրահրող ու միակ մեղավոր լինելու մասին թեզեր: Հայերին փնովելուն զուգահեռ՝ Ադրբեջանի ագրեսիան և Ադրբեջանի գործած հանցագործությունները կոծկելուն ուղղված, Ադրբեջանը որպես տուժող կողմ ներկայացնող թեզեր:
4. Հայերի՝ դարերից ի վեր հակասեմական լինելու վերաբերյալ թեզեր, ինչպես նաև հայերին նացիզմի դաշնակից ներկայացնող թեզեր:

Առաջին չորս տիպի թեզերի հիմքում ընկած են աշխարհում այսօր առավել բացասաբար ընկալվող, պոստմոդեռնիստական հասարակության կողմից «մահացու մեղքերի» շարքին դասվող երևույթները, որոնք և փորձում են բարդել Հայաստանի և հայերի վրա: Նպատակը Հայաստանն ու հայերին միջազգային աջակցությունից զրկելն է, հայերի նկատմամբ հնարավոր կարեկցանքի չեզոքացումը:

5. Հայերի՝ իսլամի թշնամի լինելու, հայերի՝ համաշխարհային սիոնիզմի, ինչպես նաև Ռուսաստանի և այլ «քրիստոնյա» տերությունների խամաճիկներ լինելու մեղադրանքներ: Հարկ է նշել, որ հրեաների հետ համագործակցելու «մեղադրանքները»՝ համատեղվելով հայերի սեմական ծագում ունենալու պնդումների հետ, օգտագործվում են նաև սպիտակամորթ ռասիստական, ազգայնական ծայրահեղականների շարքերում հակահայկական քարոզչություն վարելու համար:
6. Պատմական թեզերի մի մասը:
7. Միջազգային իրավունքին դիմող թեզեր:
8. Հակամարտության կողմերի «մեղքերի հավասարակշռություն» հաստատող թեզեր:

2.3. Ներքին օգտագործման թեզեր

1. Օտարերկրացիների համար նախատեսված բոլոր թեզերն օգտագործվում են նաև ներքին լսարանի համար:

2. Պատմական բնույթի բոլոր թեզերը։
3. Հայաստանի ընթացող կործանման (սով, խավար, տնտեսության քայքայում), Հայաստանի դատարկվելու մասին թեզեր։
4. Ադրբեջանի և ադրբեջանական բանակի օրեցօր հզորանալու մասին թեզեր։
5. Հայերի՝ վախկոտ, խաբեբա, նենգամիտ, արյունարբու և նույնիսկ մարդակեր լինելու մասին թեզեր։ Նպատակն է թշնամու կերպար ձևավորել ու ամրապնդել, հայերին ապամարդկայնացնել։

3. Դասակարգումը ըստ թեմաների

Տվյալ պահին ցուցակագրված են մոտ հարյուր թեզեր, և այդ թիվն օրեցօր աճում է։ Ըստ թեմատիկ ուղղվածության՝ այդ թեզերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- Պատմական բնույթի փաստարկներ
- «Պրագմատիկ»-տնտեսական փաստարկներ
- Միջազգային-իրավական փաստարկներ
- Քաղաքակրթական փաստարկներ

Վերը նշվածներից պատմական փաստարկներն ամենամեծ խումբն են կազմում։

4. Պատմական թեզեր

Ստորև, որպես օրինակ, բերում ենք պատմական թեզերի ցուցակը՝ հակիրճ մեկնաբանություններով[1]։

1. «Ալբանական» թեզ

1.1 Ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ) Աղվանքի պատմամշակութային ժառանգության միակ օրինական ժառանգն է։

1.2 Ներկայիս ԱՀ թուրքալեզու բնակիչները սերվում են աղվաններից։

1.3 Արցախը պատմականորեն ոչ միայն եղել է Աղվանքի գավառ, այլև ի սկզբանե բնակեցված է եղել աղվաններով։ 1.2 և 1.3 թեզերից հետևություն է արվում, որ ադրբեջանական թուրքերը Արցախի նախաբնիկներն են։

1.4 Նախորդ թեզի մեկ այլ տարբերակ. այսօրվա արցախցիները հայեր չեն, այլ հայացած աղվաններ։ Աղվանների հետնորդների շարքին է դասվում նաև Սյունիքի բնակչությունը։

[1] Թեզերը ներկայացված են ըստ ադրբեջանական ձևակերպումների և հեղինակը խուսափել է դրանց ամբողջական չակերտավորումից *(խմբ.)*։

1.5 Ներկայիս ԱՀ ու ՀՀ տարածքներում հանդիպող բոլոր քրիստոնեական հուշարձանները աղվանական են:

1.6 Աղվաններն ապրում էին (մեկ այլ տարբերակով՝ պահպանում էին իրենց աղվանական ինքնագիտակցությունը) Արցախում մինչև 19-րդ դարը, իսկ Գանձասարը Աղվանքի կաթողիկոսի նստավայրն էր: Աղվանքի կաթողիկոսությունը լուծարվեց 19-րդ դարում հայ կաթողիկոսի խարդավանքների պատճառով:

2. Հայերի եկվորության թեզը

2.1 Ազատագրված տարածքները պատմականորեն հայկական չեն:

2.2 Չկա ՀՀ, կա «Արևմտյան Ադրբեջան» («Իրևանի խանություն»):

3. Звездолет «Грибоедофф»[2]

3.1 «Արևմտյան Ադրբեջանը» Գրիբոյեդովն է բնակեցրել Պարսկաստանից ու Թուրքիայից բերված հայերով: Նույնը վերաբերում է Ղարաբաղին: Մինչ այդ այս տարածքում հայեր գրեթե չկային: Նույնիսկ հայերի ներգաղթից հետո էլ Իրևանում կովկասյան թաթարներն ավելի շատ էին, քան հայերը:

Ընդհանրապես, հայերի եկվորության թեզի շատ տարբերակներ կան՝ հայերը Բալկաններից են եկել (այն փաստը, որ նույնիսկ ըստ բալկանյան տեսության հայերը Հայկական լեռնաշխարհ են ժամանել 3200 տարի առաջ, երբեք չի նշվում): Մեկ այլ օրինակ. ըստ պատմական գիտությունների դոկտոր Ֆարիդա Մամեդովայի՝ այս տարածքում հայերի հայտնվելը կապված է Կիլիկյան թագավորության անկումից հետո Հայ եկեղեցու հոգևոր կենտրոնը Էջմիածին «տեղափոխելու» հետ[3]:

Այնուամենայնիվ, Բաքվի ազիտպրոպի կողմից ամենահաճախ օգտագործվողը պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրումից հետո հայերի ներգաղթի թեզն է: Ըստ այդ թեզի՝ հայերին Արևելյան Հայաստան և մասնավորապես Արցախի տարածք է բերել Գրիբոյեդովը՝ այսպիսով սկիզբ դնելով տարածաշրջանում «հայկական էքսպանսիային»: Այն փաստը, որ մինչ այդ Արևելյան Հայաստանը հայաթափվել է Շահ Աբաս Երկրորդի կազմակերպած բռնագաղթի, իսկ այնուհետև մի քանի թուրք-պարսկական

[2] Պատմական թեզերի այս խմբի անունը վերցված է www.miacum.ru կայքի ֆորումի հայ մասնակիցների հեգնական մեկնաբանություններից: Ըստ իրենց, եթե համատեղել ադրբեջանցի թուրքերի պնդումները հայերի ծագումնաբանության վերաբերյալ, ապա հայ ժողովրդի ներկայությունն այս տարածաշրջանում կարելի է բացատրել միայն հայերի՝ երկնքից իջնելով, այն է՝ արտերկրային ծագում ունենալով:

[3] Журнал «Азербайджан и азербайджанцы», N7-8, 2001, с. 26.

պատերազմների ընթացքում տեղի բնակչության պարբերաբար տեղի ունեցած կոտորածների հետևանքով, իհարկե, չի հիշատակվում: Առավել ևս չի խոսվում այն մասին, որ այդքան կորուստներից հետո էլ այդ ողջ ժամանակահատվածում հայերի անընդհատ ներկայությունը շարունակվել է Սյունիքում ու Արցախում, ինչպես նաև Հայաստանի հյուսիսային շրջաններում:

3.2 Նախորդ թեզի մեկ այլ տարբերակ՝ «իրեղեն ապացույցով». «ԼՂԻՄ-ում գոյություն ուներ հայերի՝ Արցախ գաղթելու 150-ամյակին նվիրված հուշարձան, որ հայերը հետո պայթեցրին այդ գաղթի հետքերը թաքցնելու համար»:

Իրականում խոսքը Մարաղա գյուղի հիմնադրման 150-ամյակին նվիրված հուշարձանի մասին է: Ընդ որում՝ ադրբեջանական աղբյուրից աղբյուր է անցնում այդ հուշարձանի լուսանկարը, որի վրա հայերեն տառերով գրված է «ՄԱՐԱՂԱ 150»: Այս կեղծիքի հեղինակների հաշվարկը նպատակային լսարաններում հայերենին չտիրապետելն է:

3.3 Հայերը հմուտ կեղծարարներ են, նրանք Մատենադարանում (որպես տարբերակ՝ Էջմիածնում) կեղծ հինավուրց գրքեր ու քարտեզներ են պատրաստում:

3.4 Հայերը որևէ կապ չունեն արմենների հետ: Արմենները թյուրքալեզու ցեղ էին, իսկ եկվոր հայերը (գրում են «хай») գողացել են նրանց ինքնանվանումը:

3.5 Միամիտ ադրբեջանցիները հայերին ընդունեցին որպես հյուրերի, իսկ նենգ հայերն իրենց հյուրընկալ մեջքին հարվածեցին:

3.6 Արցախի նկատմամբ իրենց հավակնությունները հաստատելու նպատակով հայերը խորհրդային տարիներին ուղղաթիռներով հայատառ խաչքարեր էին բերում և ուղղաթիռից գցում Արցախի տարածքում:

4. 1905 – 1920 թթ.

4.1. 1905թ. հայերի ջարդերի ու դրանց հաջորդած հայ-թաթարական բախումների պատմությունը խեղաթյուրող պնդումներ:

Օրինակ՝ Բաքվի հայկական ջարդերը կազմակերպել էր... բոլշևիկ Անաստաս Միկոյանը[4]: Զավեշտալին այն է, որ Միկոյանը 1905 թվականին ընդամենը 10 տարեկան էր:

Հետաքրքրական մեկ այլ օրինակ է զետեղված 1905 թվականին տարածաշրջան այցելած իտալական ճանապարհորդ ու գրող Լուիջի Վիլարիի «Հուրն ու սուրը Կովկասում» *(Fire and Sword in the Caucasus)* գրքում: Վիլարին պատմում է, թե ինչպես էր Նախիջևանի խանը բացատրում 1905 թվականի մայիսին Նախիջևանում տեղի ունեցած հայկական ջարդերը: Ըստ խանի՝ հա-

[4] *Charles van der Leeuw, Azerbaijan: Quest for Identity,* New York, St. Martin's Press, 2000

յերն ինքնահրկիզվել էին սեփական տներում ու խանութներում, պղծել հայկական եկեղեցիները՝ մեղքը խեղճ ադրբեջանցի թուրքերի վրա բարդելու նպատակով[5]:

Մեկ այլ օրինակ, որը հեղինակը լսել է ԵՊՀ ժուռնալիստիկայի բաժնի մի ուսանողից: Թբիլիսիում հերթական հայ-ադրբեջանական հանդիպումներից մեկի ժամանակ *IWPR* կազմակերպության Ադրբեջանի մասնաճյուղի տնօրեն Շահին Ռզաևը որպես գաղտնիք պատմել է ներկա հայերին, որ 1905 թվականին Բաքվի հայկական ջարդերը ոչ այլ ինչ էին, քան «հայկական մաֆիան վերացնելու փորձ»: Այն է. բռնությունը ուղղված է եղել ոչ թե բոլոր հայերի, այլ «հայկական մաֆիայի» դեմ, որը տիրացել էր նավթային բիզնեսին և իր ագահության հետևանքով ադրբեջանցիներին կոտորածից բացի ուրիշ ելք չէր թողել:

4.2. 1918թ. մարտի՝ կովկասյան թաթարների կոտորածներն ուռճացնող, դրանք որպես ցեղասպանություն որակող թեզ: Ընդ որում՝ մարտի իրադարձություններին նախորդած 1905–1907թթ. բախումներն, ինչպես նաև դրանց հաջորդած 1918 թվականի հայկական կոտորածը Բաքվում կամ ընդհանրապես չեն հիշատակվում, կամ էլ բավական աղավաղված ձևով են ներկայացվում թե՛ ադրբեջանցի թուրքերի և թե՛ որոշ «չեզոք» հեղինակների կողմից: Տե՛ս, օրինակ՝ Թոմաս դե Վաալի «Սև այգի» գրքում զետեղված ժամանակագրությունը:

4.3. Հայերը ցեղասպանել են հրեաներին Ադրբեջանի տարածքում (այսպես կոչված «Գուբայի ցեղասպանություն»):

4.4. Չնայած 1918-ի մարտի ցեղասպանությանը, ադրբեջանցիներն այնքան մեծահոգի գտնվեցին, որ երկու ամիս չանցած, հայերին նվիրեցին հինավուրց ադրբեջանական Իրևան քաղաքը, որպեսզի հայերը կարողանան իրենց պետությունը ստեղծել այդ մայրաքաղաքով: Որպես տարբերակ. իբր թե գոյություն ունի ինչ-որ պայմանագիր, որով Իրևանը հայերին է տրվել 150 տարով, և այդ 150 տարին հենց լրանա, պիտի հետ ուզեն:

4.5. Ադրբեջանցի քաջերը կտրել են զորավար Անդրանիկի ականջը, որի պատճառով նա ողջ կյանքում լուսանկարվելիս այնպես էր նստում, որ միայն դեմքի մի կողմը երևա: Եվս մեկ տարբերակ. Անդրանիկը թուրքական գեներալ է եղել (հիմք է ընդունվում այն, որ Անդրանիկին «փաշա» էին անվանում), բայց դավաճանել է, և որպես պատիժ կտրել են նրա ականջը: Նույն սխեմայով է պատրաստված «Ադրբեջանցի հատուկ ջոկատայինների կողմից Մոնթեին գլխատելու» առասպելը, (մեկ այլ տարբերակով՝ «Ադրբեջանցիները գերել են Մոնթեին, գերված ահաբեկչին ադրբեջանական գյուղերով ման են ածել, ժողովրդին ցույց տվել, հետո միայն սպանել»):

[5] *Luigi Villari*, *Fire and Sword in the Caucasus*. London, T. F. Unwin, 1906; p. 282.

Ընդհանրապես արվում է ամեն ինչ հայ ժողովրդի համար խորհրդանշական կերպարներին պախարակելու կամ իրենց հայ լինելը կասկածի տակ առնելու ուղղությամբ։ Օրինակ՝ Եղիշեն ծագումով վրացի է; Մարշալ Բաղրամյանն ուրիշների փառքին էր տիրացել, Արամ Խաչատրյանը գրագող էր, Յուրի Վարդանյանը պարծենկոտ է և այլն, և այլն։

5. Խորհրդային ժամանակաշրջան

5.1. Հայերը Միկոյանի միջոցով խորհրդային տարիներին շարունակել են իրագործել ադրբեջանցիների ցեղասպանություն։ Խոսքը ստալինյան ռեպրեսիաների տարիների մասին է։

5.2. Խորհրդային տարիներին Ադրբեջանում հայերն ավելի լավ էին ապրում, քան բնիկ ադրբեջանցիները։

6. Հակամարտության ներկա փուլի պատճառներն ու սկիզբը

6.1. Հայերն ու ադրբեջանցիները համերաշխ ապրում էին. այս ամենն արվեց մի քանի խարդախ տնօրենների ու «ցեխավիկների» շահերը պաշտպանելու համար։

6.2. Հայերն ու ադրբեջանցիները համերաշխ ապրում էին. այս ամենը հրահրվեց ՊԱԿ-ի (որպես տարբերակ ԱՄՆ ԿՀՎ-ի) կողմից։

6.3. Ղափանի ադրբեջանցիների ջարդեր (Ղափանի փախստականները Սումգայիթի ջարդերում)։ Մեկ այլ տարբերակ է «Գուգարքի ջարդերը»։

6.4. Երկու ադրբեջանցի մոտեցել են, որ գետից ջուր խմեն, հայերը սպանել են. ամեն ինչ դրանից սկսվեց։

Այս առասպելը, առանց որևէ լրացուցիչ մեկնաբանության, հնչում է «Ինտերնյուզ» կազմակերպության նկարահանած վավերագրական կինոնկարներից մեկում, մի տարեց ադրբեջանցու շուրթերից։ Ամենայն հավանականությամբ սա 1988թ. փետրվարին Ասկերանում տեղի ունեցած դեպքերի աղավաղված վերապատմումն է։

6.5. Հայերն իրենք են կազմակերպել Սումգայիթի ջարդերը, ավելին՝ հայերը նախօրոք Սումգայիթում ամեն քայլափոխի թաքնված տեսախցիկներ էին տեղադրել, որ հետո կարողանան մեղքը միամիտ ու ոչինչ չկասկածող ադրբեջանցիների վրա բարդել։

6.6. Սումգայիթում դաշնակները սպանել են այն հայերին, ովքեր հրաժարվում էին հանգանակել «Կռունկ»-ի դրամահավաքներին։

6.7. 1990թ. հունվարին խորհրդային զորքերը բռնի ուժով ճնշեցին Ադրբեջանում ժողովրդավարական շարժումը, ինչի արդյունքում հարյուրավոր անմեղ մարդիկ զոհվեցին (Բաքվի «Սև հունվարը»)։

6.8. 1988–1990թթ. ընթացքում Հայաստանի տարածքում սպանվել են 225 ադրբեջանցիներ: Այսպես կոչված «Յունուսովի ցուցակ»՝ դեռ 1990 թվականին մանրամասն հիմնավորումներով հերքվել է Հայկական ԽՍՀ ՊԱԿ-ի կողմից, սակայն շարունակում է օգտագործվել ադրբեջանցիների կողմից մինչև այսօր:

6.9. Պատերազմը սկսվեց այն բանից հետո, երբ ԼՂԻՄ-ը հռչակեց անկախություն:

6.10. Ազգությամբ ադրբեջանցի հազարավոր խաղաղ բնակիչներ՝ կանայք, ծերեր, երեխաներ են զոհվել հայկական զինված ուժերի վայրագությունների հետևանքով:

6.11. (Չեզոք դիտորդի փաստարկ) հնարավոր չէ պարզել, թե ով սկսեց հակամարտությունը, հնարավոր չէ որոշել, թե ով է մեղավորը: Երկու կողմն էլ հավասարաչափ մեղավոր են:

6.12. Ինչպե՞ս կարող են հայերը հավակնել Ղարաբաղին, եթե Հայաստանը նույնիսկ սահման չուներ ԼՂԻՄ-ի հետ: Չի խոսվում այն մասին, որ Լաչինը մինչև 1930-ականների կեսը մտել է ինքնավար մարզի կազմի մեջ և ապահովել անմիջական կապը Հայկական ԽՍՀ-ի հետ, և հետո միայն օտարվել ԼՂԻՄ-ից: Նաև չի նշվում, որ նույն տրամաբանությունից ելնելով՝ ադրբեջանցիները չպետք է հավակնեն Նախիջևանին:

6.13. (Չեզոք դիտորդի փաստարկ) Արցախի պատմական պատկանելությունը կարևոր չէ. պատմությունով պետք չէ շարժվել, այլ ներկայով: Սակայն նույն տրամաբանությամբ առաջնորդվելիս պետք է մոռացության մատնել նաև Արցախի՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվելը, չէ՞ որ դա արդեն 15 տարի է, ինչ պատմություն է: Այնուամենայնիվ, այս թեզը համառորեն հնչեցվում է զանազան միջազգային ամբիոններից՝ հայկական կողմից որևէ արձագանք չստանալով:

Հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում հայության դեմ օգտագործվող քարոզչական թեզերն (ավելի ստույգ՝ պատմական բնույթի թեզերն) ուրվագծող տվյալ համառոտ ակնարկից կարելի է հետևյալ նախնական եզրակացություններն անել.

Ա. Հակահայկական քարոզչության զգալի մաս են կազմում առասպելացված պնդումները, որոնք կա՛մ բացարձակապես մտացածին են, կա՛մ էլ շատ քիչ առնչություն ունեն իրականության հետ:

Բ. Այս թեման գրեթե ուսումնասիրված չէ հայ մասնագետների կողմից, և դեռ բավական աշխատանք պետք է տարվի եղած փաստերը համակարգելու և հանգամանորեն վերլուծելու համար: Անշուշտ, պետք է հաշվի առնել, որ լրիվ ավարտուն տեսք այս աշխատանքը երբեք չի ստանա, քանի որ տվյալ ոլորտում անընդհատ փոփոխություններ են տեղի ունենում:

Գ. Հայկական կողմը տվյալ պահին դեռ չունի որևէ քաղաքականություն նման քարոզչությունը չեզոքացնելու համար: Մեր կարծիքով՝ հայկական լսարանի համար այս խնդիրը մասամբ կարելի է լուծել երիտասարդության շրջանում հատուկ կրթական ծրագրեր անցկացնելով, ինչպես նաև Հայաստանի զանգվածային լրատվության միջոցներում հատուկ բացատրական աշխատանք տանելով: *Այս գործընթացը պետք է լինի շարունակական:*

Ինչ վերաբերում է երրորդ՝ «չեզոք» լսարաններին, ապա այստեղ դժվար է որոշակի ունիվերսալ լուծումներ առաջարկել, քանի որ ամեն մի օտարազգի լսարան իր յուրահատկություններն ունի, և լուծումները դրան համապատասխան պետք է մշակվեն: Սա ինքնին մեծ բնագավառ է, որ հայկական փորձագիտական հանրության կողմից առանձնահատուկ ուշադրություն է պահանջում:

Նույնիսկ այսպիսի կցկտուր, կարելի է ասել՝ «հում» վիճակում տվյալ ցուցակն ուշագրավ է թե՛ հայ-ադրբեջանական տեղեկատվական հակամարտությամբ հետաքրքրվող մասնագետների, թե՛ ուսանողության համար: Ինչը և թելադրում է այս ուղղությամբ աշխատանքը շարունակելու անհրաժեշտությունը:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արեստակես Միմավորյան

Այսօր գիտական, փորձագիտական հանրույթում բավականին շատ է խոսվում և լուսաբանվում այլ կրոնի ու դավանանքի հարող հայության հատվածների մասին։ Թերևս կարելի է հաստատակամորեն պնդել, որ առաքելադավան հայերից հետո, ամենակենսունակ կրոնական համայնքը հայ կաթոլիկականն է, որը մշտապես հայությանը ներկայացել է մի քանի հարյուրամյակ՝ ազգային մեծ գործ կատարած Մխիթարյան միաբանության տեսքով։

Ինչու՞ ենք հատկապես այսօր փորձում համախմբված և միասնական տեսնել այս համայնքը։ Այն, որ Հայության կազմակերպման խնդիրներում նրանց դերը ևս պետք է որոշիչ լինի՝ միանշանակ է, և նրանց Հայության ընդհանուր ազգային գաղափարներից մեկուսացնելը ծանր հետևանքների կարող է հանգեցնել։ Ցավոք, Հայոց պատմությունն ունի նմանատիպ օրինակներ, երբ Լեհաստանի, Ռումինիայի, Հունգարիայի հայ կաթոլիկները իսպառ տարրալուծվեցին հիշատակված երկրների ազգաբնակչության մեջ։ Որպեսզի տեղի չունենա այն, ինչ վիճակվեց կաթոլիկություն ընդունած առաջին հայերին, նախ և առաջ պետք է մի կողմ դնել հային միայն որպես առաքելադավան ընկալելու մտայնությունն ու գիտակցել, որ հարյուրամյակները, անկախ մեր կամքից, ձևավորել են բողոքական, կաթոլիկ հայ համայնքներ։ Եվ տարբերություններ փնտրելու փոխարեն՝ պետք է գտնել, թե ինչ նմանությունների հիման վրա են կառուցված դավանանքով տարբեր, բայց նույն էթնիկություն ունեցող հատվածները, ինչը «ստվերից» դեպի «սպիտակ հարթություն» կբերի բազմաթիվ հարցերի փունջ։ Իսկ այդ հարցերը պետք է որ պատասխաններ ունենան, լուսաբանվեն, վերլուծվեն՝ տալով շոշափելի արդյունքներ։ Միանգամայն ակներև է, որ առաջնային պետք է համարել, թե այս կրոնական հատվածներում ինչպիսի տեղաշարժեր, գործընթացներ կան։ Որքանո՞վ են դրանք համընկնում Հայության ազգային շահերի հետ, ի վերջո, ի՞նչ ենք ցանկանում՝ օտարված տեսնել այդ համայնքները, թե՞ մասնակից դարձնել համահայկական խնդիրներին։

Կարևորելով վերը նշված խնդիրները՝ նախ պետք է տեսնել, թե ինչպիսի հայանպաստ, և հակառակը՝ ինչ «մարող» համայնքներ ունենք: Հոդվածում ներկայացնում ենք Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների հայ կաթոլիկ համայնքների հաղթահարված և դեռ մնայուն խնդիրները: Այս խմբերը հայապահպանման տեսանկյունից օրինակելի են մյուսների համար և ի տարբերություն այլ համայնքների՝ նրանց տալիս են ընդգծված ինքնատիպություն:

Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ կաթոլիկ համայնքների ներկայիս երկրորդ շերտն (առաջին շերտը վրացացել է) այստեղ հաստատվել է 19-րդ դ. քսան-երեսունական թվականներին՝ Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից՝ Կարինից, Մուշից, Արդահանից և այլ հայաշատ վայրերից: Նոր կազմավորված համայնքները բավականին հաջող դիմագրավեցին տարածաշրջանային բազմաթիվ դժվարությունների՝ տեղի չտալով ո՛չ իսլամական, ո՛չ էլ վրաց ուղղափառների կրոնափոխ լինելու կոչերին: Այս գործընթացները դադարեցին Վրաստանի խորհրդայնացման սկզբից՝ կաթոլիկ հայերի համար բերելով նոր փորձություններ, որոնք պահպանվեցին երկար ժամանակ:

Այդ փորձություններից ամենահիմնականը Վրաստանում, այդ թվում և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն էր, որն առաջին իսկ տասնամյակներում ուղեկցվեց հոգևորականության նկատմամբ բռնարարքներով, աքսորով, ֆիզիկական ոչնչացումով, եկեղեցիների գույքի բռնագրավումով, ինչը թուլացրեց նաև այս շրջանների հայ կաթոլիկ հոգևոր իշխանության դիրքերը: Այսպես կոչված հայ «ֆրանգների» շրջանում կաթոլիկությունը վերստին վերածնունդ ապրեց հատկապես Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ նոր իրավիճակը լայն հնարավորություններ ընձեռեց Հռոմի հոգևոր ղեկավարներին միանձնյա որոշել երկու երկրների հայ կաթոլիկ համայնքներին մեկ թեմում ընդգրկելու հարցը:

Վրաստանում կաթոլիկ (ոչ միայն հայ, այլև վրացի, ասորի-խալդ կաթոլիկները ներառյալ) եկեղեցուն իրավական կարգավիճակ տալու շուրջ վրացական կողմի հետ բանակցությունները հենց սկզբից մտան փակուղի: Առայսօր անլուծելի այս խնդիրը Վատիկանի համար սկզբունքային է և շարունակում է մնալ որպես անկյունաքարային հիմնահարցերից մեկը: Հարավային Կովկասում կրոնական հարցերով Վատիկանի դեսպան Գուժերոտին նշում է. «*Հարցի սրացումը կապված է հատկապես հայերի հետ: Վրացիների համար խնդիրը չորս-հինգ եկեղեցիներին կարգավիճակ տալը չէ, այն ընդգծված էթնիկ բնույթ ունի*»[1]: Վերոհիշյալ խնդիրներից ելնելով՝ Վրաստանում կաթոլիկական հոգևոր գործունեություն ծավալելը Վատիկանի համար իրավական տեսանկյունից խիստ սահմանափակ դարձավ:

[1] *Florence Mardirossian,* Géorgie: l'Eglise catholique privée de statut juridique, 18/07/2005, http://www.caucaz.com/home/breve_contenu.php?id=228

Այդուհանդերձ, Վրաստանի հայ կաթոլիկները փաստացի մտան նորաստեղծ Արևելաեվրոպական թեմի մեջ, որը հիմնադրվեց 1991թ.՝ Գյումրի կենտրոնով: Քաղաքի ընտրությունը պատահական չէր, քանի որ հայ կաթոլիկների մեծ մասը բնակվում է Հայաստանի հյուսիսային շրջաններում: Դա որոշ չափով հարթակ դարձավ սահմանից այն կողմ հայ նույնադավանների հետ հարաբերություններ հաստատելու գործում: Այսօր Սամցխե-Ջավախքում հայ կաթոլիկ համայնքները համախումբ բնակվում են Ախալցխայում և նրա շրջակա գյուղերում, ինչպես նաև Ախալքալաքի, Նինոծմինդայի շրջաններում: Վերջին երկու շրջանների համայնքները, որոնք հիմնականում գյուղական են, իրարից բավականին անջատ տարածքներում են գտնվում, սակայն ամենակարևորն այն է, որ միմյանց կապող օղակը կաթոլիկ լինելու ընդհանուր պատմական հիշողությունն է:

Ամենևին չենք առանձնացնում նրանց հայ էթնոսից և դիտարկում ենք որպես զուտ կրոնական համայնք, որն այսօր իր առանձնահատուկ խնդիրներն ունի: Լայն իմաստով վերոհիշյալ շրջանների հայ կաթոլիկների այսօրվա խնդիրներն առանձնապես չեն տարբերվում հայ առաքելականների խնդիրներից և տեղավորվում են Սամցխե-Ջավախքի հիմնահարցերի շրջանակներում:

Նինոծմինդայի (Բոգդանովկա) և Ախալքալաքի հայ կաթոլիկները

Ժողովրդախոսակցական լեզվում այս շրջաններում բնակվող հայ կաթոլիկներին սովորաբար անվանում են «ֆրանգ», «ֆրենգ»: Ոմանք «ֆրանգ» բառի ստուգաբանությունը կապում են Կիլիկյան Հայաստանում Ֆրանցիսկյան միաբանության քարոզիչների անվան հետ[2]: Անվանումն ի սկզբանե կրել է խաչակիր, եվրոպացի, օտարական իմաստը, դրա ցայտուն օրինակն է թուրքերեն լեզվում լատիներենից միջնորդավորված, առայսօր պահպանված «frenk» բառը, որը վերը բերվածի նշանակությունն ունի: Հետագայում եվրոպացի բառն ասոցիացվել է կաթոլիկ լինելու հետ, և քանի որ Հայոց մեջ կաթոլիկության տարածումը առավելապես եվրոպական քարոզիչների ծավալած գործունեություն էր, «ֆրանգ»-ը ձեռք է բերել երկիմաստություն՝ միաժամանակ ցույց տալով և՛ կրոնական, և՛ էթնիկ (ֆրանսիացի, իտալացի) պատկանելություն:

Ջավախքի հայ կաթոլիկներին շրջակա միջավայրում տրված տիպական անվանումներից ելնելով՝ պայմանականորեն նրանց կարելի է բաժանել առանձին խմբերի: Սակայն այս խմբերին տրված բնորոշիչները չպետք է ընդունել որպես էթնոնիմներ, այն տվյալ խումբը սահմանում է տարածքային

[2] *Արոյան Ս.*, Համառոտ պատմութիւն Հայ Կաթողիկէ (կաթոլիկ) Եկեղեցու, էջ 9, 2002, http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf

(մշեցի, կարնեցի), լեզվական (թուրքախոս, վրացախոս) և այլ առանձնահատկությունների հենքի վրա: Նույնը վերաբերում է «ֆրանգ» ինքնանվանմանը, այն սովորաբար չի մատնանշում էթնիկ պատկանելությունը, այլ ցույց է տալիս, թե կրոնական ինչ ուղղության հետևորդ է:

Այդ խմբերն են.

ա. «մշեցի –ֆրանգներ»

բ. «գբո-ֆրանգներ»

գ. «խաս-ֆրանգներ»:

ա. «Մշեցի-ֆրանգներ»-ը ներկայումս առավելապես ապրում են Նինոծ-մինդայի շրջանի գյուղական համայնքներում՝ Հեշտիայում, Ուջմանայում, Թորիայում և Ժդանովկանում: Ավելորդ չէ նշել, որ վերջինս հիմնադրվել է 1930-32թթ., որի բնակիչները տեղափոխվել են Հեշտիայից: Խորհրդային Վրաստանի անկախացումից հետո Հեշտիան դառնում է Նինոծմինդայի շրջանի կաթոլիկ հայերի հոգևոր կենտրոնը:

Հեշտիայի գյուղական հասարակությունը ամենակազմակերպված հայ կաթոլիկ համայնքներից է: Այդ հարցում զգալի է մայրապետերի գործոնը, որոնց ջանքերի և ամերիկյան բարերարների շնորհիվ տեղում բացվել և գործում է «Կարդինալ Աղաջանյան» պատանեկան ճամբարը:

Հայ Կաթողիկե եկեղեցու վերագործունեությունն այս կողմերում սկսվեց 1992 թվականից, երբ առաջին անգամ Հեշտիայում հաստատվեցին Անարատ Յղութեան միաբանության քույրերը: Ինչպես վկայում է միանձնուհի Տաթևիկ Ալբերտյանը, «...եկեղեցին փակ էր, և ծառայում էր կոլտնտեսությանը որպես պահեստ, որը լցված էր ցորենով ու գարիով»[3]:

Այդ տարիներին էր, որ վրաց ուղղափառ եկեղեցին նախապատրաստվում էր հայ կաթոլիկներին այսպես կոչված դարձի բերելու իր քաղաքականությանը՝ պատճառաբանելով, որ նրանք նախկին «վրացի կաթոլիկներ» են, որոնք տարբեր գործոնների արդյունքում հայացել են: Այդ պատրվակով 1995թ. Հեշտիա անակնկալ այցելել է Վրաց եկեղեցու առաջնորդ Իլյա Երկրորդը: Վերջինիս նպատակը տեղի հայ կաթոլիկ եկեղեցում վրացական արարողակարգով ծիսակատարություն անցկացնելն էր, սակայն հանդիպելով բնակիչների համառ դիմադրությանը՝ հեռացել է գյուղից[4]: Տասնչորս տարվա վաղեմության այս դեպքը մեկ անգամ ևս փաստում է, որ վրացական հոգևոր «տեռորի» քաղաքականությունը շարունակական բնույթ է կրել, որն իր դրսևորումն է գտնում նաև մեր օրերում, անկախ նրանից՝ կաթոլիկ, թե առաքելական հայեր

[3] Մասիս, 2007, օգոստոս, թիւ 23, էջ 27:

[4] *Петросян А.,* Франги: историко-этнографическое исследование, http://www.mashtots.ru/istoriya-armyan-kubani/nauchnye-raboty/glava-2-istoriko-etnograficheskoe-opisanie-osnovnyx-grupp-armyano-katolikov-frangov

են: Վրաց եկեղեցու նման անհիմն մոտեցման պատճառով է նաև, որ սրվել են միջեկեղեցական հարաբերությունները Վատիկանի հետ:

Ընդհանրապես Ուջմանայի և Թորիայի կաթոլիկ հայերին հեշտիացիներն ընդունում են որպես «մերոնքականների», ինչը նախ մշեցիների սերունդ լինելու հանգամանքով է պայմանավորված: Միավորող է նաև լեզվի գործոնը՝ Մշո բարբառը, որով նրանք տարբերվում են Կարնո բարբառով խոսող հայ կաթոլիկներից: Նինոծմինդայի կաթոլիկ հայերը միշտ գտնվում են Հայ Կաթողիկե Պատրիարքարանի ուշադրության կենտրոնում, ինչի արդյունքում վերջինիս և համայնքի միջև հաստատվել են ամուր, արդյունավետ կապեր: Հեշտիայի, Թորիայի, Ուջմանայի գյուղերի բնակիչները հիմնականում արտագաղթում են Հայաստան, Ռուսաստան և այլ երկրներ՝ այդպիսով հիմք դնելով նորանոր հայ կաթոլիկ համայնքների առաջացմանը:

բ. Նինոծմինդայի «մշեցի-ֆրանգները» սովորաբար «գբո»[5] են կոչում այն հայ կաթոլիկներին, որոնք կենցաղում թրքախոսներ են: «Գբո» անվանվող հայ կաթոլիկները հիմնականում բնակվում են Ախալքալաքի Բավրա, Խուլգումա, Կարտիկամ, Տուրցխ, Բոգդանովկայի Ասփարա, Նոր Խուլգումա գյուղերում: Վերը նշված գյուղերի բնակիչներն արդեն իսկ թրքախոս՝ Ջավախք են տեղափոխվել Արևմտյան Հայաստանի Արդահան գավառի Գեոլայի հասարակության Վել գյուղից[6]:

Այս կողմերում մասամբ պահպանված թրքախոսության երևույթը օսմանյան ժամանակաշրջանի ժառանգություն է, որն այս գյուղի բնակիչների չգաղթելու պարագայում միգուցե կտաներ իսլամացման: Դրա վառ ապացույցն է Վելից չգաղթած հայ կաթոլիկ փոքրաթիվ համայնքի իսպառ թուրքանալն ու իսլամանալը տասնամյակներ անց[7]:

Ընդհանրապես թուրքերեն խոսելու պարտադրված սովորությունից ձերբազատվելու համար պահանջվեց երկար ժամանակ: Ջավախքում հաստատվելուց հետո էլ երևույթն առկա էր, քանի որ վելցիների գիտակցությունում դեռևս կար թուրքական սպառնալիքի գործոնը, և փաստորեն օտար, այս պարագայում թուրքերեն լեզվի պահպանումը մի տեսակ պաշտպանական միջոց է եղել: Սեփական գոյությունը պահպանելու համար նույնիսկ փորձել են հրաժարվել հայ լինելուց, ասելով՝ «*իթ օլուրըմ, էրմենի օլմամ*» (Շուն կլինեմ, հայ չեմ լինի[8]): Բայց պետք է նկատել, որ թրքախոսությունն ավելի վառ արտահայտված էր մինչխորհրդային շրջանում, միայն կրթական համակարգի բարելավման ու գրաճանաչության հետ մեկտեղ երևույթը զգալիորեն նահան-

[5] Նույն տեղում:
[6] *Հալայան Ե.*, Երկեր, հատոր Ա, Երևան, 1983, էջ 85:
[7] *Հակոբեան Պ.*, Հրաւէր ողջմտութեան, Էջմիածին, 1993, էջ 86:
[8] Նույն տեղում, էջ 78:

ջեց՝ աստիճանաբար կենցաղում ավելի տիրապետելի դարձնելով հայերենը: Եթե այսօր էլ վերոհիշյալ գյուղերում խոսում են թուրքերեն, ապա միայն տարեցները, իսկ երիտասարդների մեջ այդ սովորույթն այլևս տիրապետող չէ:

Ներկայումս այս գյուղերը (ներառյալ Ալաստան և Վարևան գյուղերը) սպասարկում է Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների հայ կաթոլիկների ժողովրդապետ, լեհ հոգևորական, հայր Անդրե վրդ. Եանիցկին: Այստեղ նա հովվություն է անում շուրջ քսան տարի, նստավայրն է Տուրցխը: Հետաքրքիր է, որ հայ կաթոլիկ սպասավորների խիստ պակասը հատկապես լրացվում է օտարազգի հոգևորականներով: Բացի հայր Անդրեից, Ջավախքում հոգևոր գործունեություն են իրականացնում ևս երկու լեհեր՝ հայր Հովսեփ Կորնաշևսկին, Թբիլիսիի և Ախալցխայի հայ կաթոլիկների (կենտրոնը՝ Ծղալթբիլա) ժողովրդապետ, վարդապետ Անատոլ Իվանյուկը:

Գյուղատնտեսությամբ մի կերպ զբաղվող և եկամտի այլ աղբյուր չունեցող կաթոլիկ Խուլգումո և Տուրցխ գյուղերին երբեմն օգնություն է ուղարկում Վատիկանը, այն էլ ալյուրի, շաքարի, ձեթի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների տեսքով[9]: Այսօր Ջավախքից հեռանում են և՛ առաքելականները, և՛ հայ կաթոլիկները, վերջիններս հատկապես մեկնում են Ռուսաստան, այս պատճառով գյուղերի մեծ մասը կիսով չափ դատարկվում է: Մասնավորապես Տուրցխում հայ կաթոլիկ 450 ընտանիքից մնացել է 230-ը, արտագաղթում է հատկապես երիտասարդությունը: Նույն կարգավիճակում են Խուլգումոյի բնակիչները, որտեղից արտագաղթել է շուրջ 150 ընտանիք: Ստացվում է, որ ռուսաստանյան մի շարք քաղաքներում, հատկապես Սանկտ Պետերբուրգում և Մոսկվայում, բավական լավ կազմակերպված հայ կաթոլիկ համայնքների համալրումն ու զբաղվելը որոշ չափով պայմանավորված է վերջիններիս ցավալի արտագաղթով:

գ. Այսօր «խաս-ֆրանգներ» անվանվում են Ալաստան և Վարևան[10] գյուղերի բնակիչները: Իրենք՝ ալաստանցիները, «խաս», այսինքն՝ «մաքուր-ֆրանգ» լինելը բացատրում են նրանով, որ երբևէ թրքախոս չեն եղել, ինչպես հարևան Տուրցխ գյուղի բնակիչները: Ոմանք էլ այլ բացատրություն են տալիս՝ ասելով, որ իրենք միշտ հավատարիմ են մնացել Հայ Կաթողիկե եկեղեցու

[9] *Յակոբեան Թ.,* Կաթոլիկ հայերը «Օրթոտոքս ժողովրդավարական» Վրաստանում, http://www.aztagdaily.com/Archive/11-06-07/html/page4.htm

[10] Այս գյուղի բնակիչները գաղթել են 1828թ., վարևանցիները Կարինի Թուանջ (ներկայումս Գյուզելովա-Güzelova), իսկ Ալաստանի բնակիչները նույն շրջանի Արծաթի (ներկայումս Յեշիլ-յայլա-Yeşilyayla), մասամբ էլ Թուանջ գյուղից: Հետաքրքիր է, որ 1950-ական թվականներին հանրապետական Թուրքիայում վերոհիշյալ հայկական տեղանունները թուրքականով փոխարինելու ժամանակ սույն գյուղերի բնակիչների կողմից խիստ դժգոհություն է եղել: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ այս գյուղերի բնակիչների մի մասը, ովքեր չէին գաղթել, ցեղասպանության տարիներին մահվան սպառնալիքի տակ հրաժարվել են կաթոլիկությունից և իսլամացել:

հայածես սովորույթներին և միշտ մերժել են հռոմեածես արարողակարգերը: Այդ պատճառով էլ հարևան գյուղերն իրենց կոչում են «խաս-ֆրանգներ»: Հայապահպանմանը նպաստող դրական, կարևորագույն բաղադրիչները (կրթական, ծիսական,) իրենց հետ այս գյուղ են բերել Մխիթարյան միաբանությունում կրթություն ստացած վանատենչիկները: Այս պարագայում Հայ Կաթողիկե եկեղեցու գործառույթները, հոգևորից բացի, եղել են նաև կրթական, ինչը որոշ առումով հեռու է պահել վրացանալու ճանապարհ բռնած մի քանի հարևան կաթոլիկ հայերով բնակեցված գյուղերի[11] ճակատագրի կրկնությունից: Կաթոլիկ հավատքին հավատարիմ մնալու, կարելի է ասել՝ ֆանատիկորեն նվիրվելու վերաբերյալ ալաստանցիների բանավոր խոսքում պահպանվել է հետևյալ զրույցը. «Եթե հայ կաթոլիկը անցնում է առաքելական եկեղեցու մոտով և այդ պահին ոտքը փուշ է մտնում, ապա չպետք է կռանա, այլապես կհասկացվի, թե երկրպագում է հայոց ավանդական եկեղեցուն»[12]:

Կարելի է պնդել, որ հարևան առաքելական հայերին աղջիկ տալու հարցում բավականին «ժլատ» են եղել, ինչը գալիս է նաև նեղ համայնքային կյանքով ապրելու ավանդական սովորությունից. այն սկզբնապես սահմանափակվել է հավատակցի հետ ամուսնությամբ: Ներքին ամուսնությունների ավանդույթը առաքելական հայերի միջավայրի գործոն էր, որը ազգապահպանման առումով բացառում էր օտարազգիների հետ ամուսնությունները: Ավանդույթը հետագայում սահուն անցում կատարեց կաթոլիկություն ընդունած հայերի միջավայր՝ ավելի նեղացնելով, ձևափոխելով դրա նախնական իմաստը, որն արտահայտվեց արդեն իսկ առաքելական հայերի հետ ամուսնության սահմանափակումով:

Իհարկե, մեր օրերում նման պատկերացումներն այլևս տեղ չունեն, դրանք իսպառ նահանջ ապրեցին խորհրդային շրջանում՝ դուրս մղելով համայնքային կյանքից կրոնական ավանդականությամբ ձևավորված կարծրատիպերը: Սակայն երևույթը միակողմանի չի եղել, նույն կերպ առաքելականները չեն ամուսնացել շրջակա հայ կաթոլիկների հետ: Ինչևէ, նման խնդիրներն այլևս գերակա չեն, դրանք ավելի ցայտուն արտահայտվում են ոչ հայկական միջավայրով շրջապատված վայրերում, որտեղ ներքին ամուսնությունները որոշ ժամանակ «երկարացնում» են համայնքի կյանքը:

Ցավով պետք է արձանագրել, որ Ալաստանի երբեմնի 3000 հասնող

[11] Խոսքը Ախալքալաքի, ներկայումս Ասպինձայի շրջանի կաթոլիկ Վարգավ, Խզաբավրա և անբնակ Բնելա գյուղերի մասին է: Վերջիններիս բնակիչները բնիկ հայ կաթոլիկներ էին, որոնք 19-րդ դ. վերջին հիշատակվում էին որպես հայախոսներ, բայց վրացական սովորույթներ ունեցող: Նրանց վերջնական վրացականացումը տեղի ունեցավ խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին:

[12] Նույնատիպ ավանդազրույցներ տեղ են գտել նաև Արդահանից գաղթած, Բաթումում հաստատված հայ կաթոլիկների շրջանում, http://forum.hayastan.com/lofiversion/index.php/t26758.html

ազգաբնակչությունից այսօր հազիվ հինգ հարյուր շունչ կա, այն էլ տարեցներ: Նրանց մեծ մասը հաստատվել է Հայաստանում դեռևս 1960-70-ական թթ.: Աստիճանաբար ինտեգրվելով հայ հասարակությանը՝ կաթոլիկ մկրտությունից զուրկ լինելու պատճառով նրանք ընդունել են նախնյաց հավատքը: Ընդ որում՝ դա կատարվել է աստիճանաբար, գիտակցված և առանց որևէ պարտադրանքի, երբեմն նաև նոր շրջապատում «ֆրանգի» կերպարից և պիտակավորումից վերջնականապես ձերբազատվելու համար: Նույնիսկ պատահում է, որ ընտանիքի անդամներից մի քանիսը առաքելական, իսկ մյուս մասը՝ կաթոլիկ են լինում, բայց դա էական նշանակություն չի ունենում միջընտանեկան հարաբերություններում:

Գյուղում այսօր գործում է Վերափոխման Ս. Աստվածածին կաթողիկե եկեղեցին՝ կառուցված 1856թ.: Արտերկրում աշխատող գյուղի երիտասարդության և Վատիկանի հանգանակած գումարներով սկսվել են եկեղեցու վերանորոգման աշխատանքները: Այդ աշխատանքներին հետևելու նպատակով 2008թ. հուլիսի 30-ին գյուղում անակնկալ այցելությունով ներկա է գտնվել Հայ Կաթողիկե եկեղեցու առաջնորդ Տեր Ներսես Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը: Պատրիարքի Վրաստան այցելությունը պատմական բացառիկ իրադարձություն էր, քանի որ այս մակարդակի հոգևորականի ներկայությունը հայ կաթոլիկների շրջանում տեղի էր ունենում առաջին անգամ: Նա շրջագայել է շուրջ տասնչորս հայկական կաթոլիկ գյուղերով՝ հընթացս ծանոթանալով տեղացիների այսօրվա խնդիրներին և հոգսերին[13]:

«Խաս-ֆրանգներ»-ով բնակեցված հաջորդ գյուղը Վարևանն է, որը նույնպես դատարկվելու եզրին է: Ժամանակին այս գյուղում ապրում էին միանգամից մի քանի էթնիկ խմբեր՝ հայ կաթոլիկներ, ուղղափառ վրացիներ, հույն ուղղափառներ և թուրք-մեսխեթցիներ: 1944թ. թուրքերն աքսորվեցին[14], իսկ վրացիների մեծ մասը, սկսած 1947-ից, վերաբնակվեց կառավարության կողմից միայն իրենց արտոնված, Կուր գետի հովտում գտնվող, թուրք-մեսխեթցիներից ազատված այգեվետ ու բարեբեր գյուղերում: Այսօր հայերի կողքին գյուղում ապրում են հազիվ մի քանի վրացի և երկու տուն վրացացած հույն բնակիչներ[15]:

[13] Մասիս, 2008, օգոստոս, թիւ 35, էջ 21:

[14] Ավելորդ չէ նշել, որ Վարևանը ընդգրկված է այն գյուղերի ցանկում, որտեղ պատրաստվում են վերադառնալ աքսորված թուրքերի սերունդները,
http://www.ahiskalilar.org/portal/modules.php?name=koylerimiz

[15] *Գարապետյան Ս.*, Ջավախք,Երևան, 2006, էջ 479:

Հետևություններ

- *Ջավախքի հայ-կաթոլիկների հոգևոր վերածննդի համար նշանակալի ավանդ ունեցավ Հայ Կաթողիկե եկեղեցին, որն անշուշտ առաջին իսկ հնարավորության դեպքում սեփական հովանու տակ վերցրեց իր հետևորդներին: Դրանով նաև հաստատեց իր հոգևոր իշխանության տարածման աշխարհագրական սահմանները՝ միաժամանակ մասնակից դառնալով հայ-կաթոլիկների ինչպես հոգևոր-եկեղեցական, այնպես էլ հասարակական կյանքին: Սպասվում է, որ երկար ժամանակ յուրաքանչյուր գյուղական համայնք չի կարող ունենալ գոնե մեկ հոգևորական և այդպիսի մի քանի համայնքների սպասարկում է ընդամենը մեկ հոգի, ինչը խիստ բացա-սական է ընդունվում հայերի կողմից: Քանի որ մարդկային սահմանափակ ռեսուրսներ ունեցող Հայ Կաթողիկեն էլ իր հերթին չի կարողանում ապահովել հոգևորականներով, իսկ գյուղերի երիտասարդները չեն ցանկանում վարել հոգևոր կյանք, շատ անգամ այդ դերը իր վրա է վերցնում Վատիկանը, որն այլազգի հոգևորականներ է գործուղում: Դա էլ դառնում է որոշիչ՝ առաջ բերելով հայկական և արևմտյան ազդեցությունների գոտի:*
- *Թեև խորհրդային շրջանի պարտադրված գաղափարախոսությունը աթեիստական էր, այդուհանդերձ նկատում ենք, որ Ախալքալաքի և Նինոծմինդայի հայ-կաթոլիկները այդ շրջանում դեռևս պահպանել էին, եթե կարելի է ասել «կաթոլիկական ինքնություն»-ը: Այն խորապես արտահայտվեց ԽՍՀՄ փլուզումից հետո այստեղ ուղարկված կաթոլիկ հոգևորականների հանդեպ ցուցաբերած վերաբերմունքով: Ավելի քան յոթանասուն տարի հոգևորականությունից զուրկ տեղացիները և հատկապես հաջորդ սերունդները, ովքեր կրոնից բավականին հեռու էին կանգնած, բացասական չվերաբերվեցին իրենց համար խորթ, օտարազգի քահանաներին: Մասնավորապես Տուրցխում հայտնված հայր Անդրեի համար գյուղացիները իրենց ուժերով կառուցել են բնակարան: Սա ցույց է տալիս, որ կաթոլիկությունը ամուր նստած էր հայերի հոգևոր գիտակցությունում և դրանից հնարավոր չէր կտրվել: Նույնպիսի վերաբերմունք կար եկեղեցիների նկատմամբ. թեև դրանք փակ էին կամ գործում էին այլ նպատակների համար, բայց բարեխղճորեն պահպանվում էին:*
- *Ցավոք, արտագաղթը նվազեցնում է համայնքի մարդկանց քանակը, և դրա կասեցման համար ոչինչ չեն կարող անել ո՛չ Վատիկանը, ո՛չ էլ Հայ Կաթողիկե եկեղեցին: Դա Ջավախքի համար համընդհանուր և ամենա-*

հրատապ խնդիրներից է, որն ունի իր խորքային պատճառները: Սակայն բոլոր խնդիրներով հանդերձ՝ Ջավախքի հայ կաթոլիկ համայնքները բավական կենսունակ են: Այս բոլոր գյուղերը դեռ պահպանել են իրենց հայկական դիմագիծը ի հաշիվ հայկական շրջապատի: Դրանում, անխոս, մեծ է եղել նաև Մխիթարյանների դերը, ովքեր ժամանակին իրենց հայեցի դաստիարակությամբ զերծ պահեցին նրանց օտար ազդեցություններից՝ վառ պահելով նրանց ազգային ինքնագիտակցությունը:

ՋԱՎԱԽՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Վահրամ Հովյան

Ժողովրդագրական առումով Ջավախքը[1] այսօր գտնվում է բարդ իրավիճակում: Մի կողմից՝ այնտեղ հայերի արտագաղթի համար առկա են նպաստավոր պայմաններ՝ սոցիալ-տնտեսական անմխիթար իրավիճակ, խտրական վերաբերմունք հայ բնակչության նկատմամբ, հայկական կրթական հաստատությունների ծանր վիճակ և այլն: Մյուս կողմից՝ վրացական իշխանությունների կողմից վարվում է Ջավախքի հայաբնակ շրջանները վրացիներով բնակեցնելու քաղաքականություն: Միևնույն ժամանակ, Ջավախքի վերաբնակեցման կամ էթնիկ կազմի փոփոխության գործին անմասն չի մնում նաև թուրքական կողմը (Թուրքիա և Ադրբեջան), որը, օգտագործելով թուրք-մեսխեթցիների գործոնը, փորձում է հայկական բնակավայրերը բնակեցնել թյուրքական այդ շերտով:

Սույն հոդվածը նվիրված է հիմնականում վրացական և թուրքական կողմերի՝ Ջավախքի ժողովրդագրական պատկերը հօգուտ իրենց փոփոխելուն նպատակաուղղված քաղաքականության վերլուծությանը:

Ջավախքի ժողովրդագրական դինամիկան խորհրդային շրջանում

Ջավախքի ժողովրդագրական կազմը աչքի է ընկնում էթնիկ բազմազանությամբ: Երկրամասի բնակչությունը կազմում են հայերը, վրացիները, ադրբեջանցիները, հույները, ռուսները (դուխոբորները և մոլոկանները) և այլն: Սակայն ներկայումս երկրամասի ժողովրդագրական յուրացման ասպարեզում մրցակցությունն ընթանում է հիմնականում երեք էթնիկ խմբերի՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների միջև: Հետևաբար, սույն վերլուծության մեջ հիմնական ուշադրությունը կդարձվի այդ երեք էթնիկ խմբերի թվաքանակի դինամիկայի դիտարկմանը:

Խորհրդային մոտ 70 տարիների ընթացքում Ջավախքում հայ բնակչության թվաքանակը էական փոփոխության չի ենթարկվել: Եթե 1939թ. հայերի թվաքանակը Ջավախքում կազմում էր մոտ 100 հազ. մարդ (44%), ապա 1989թ. մարդահա-

[1] Սույն վերլուծության մեջ Ջավախք ասելով հասկացվում են ոչ միայն ներկայիս Վրաստանի Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանները, ինչը համապատասխանում է զուտ Վրաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանմանը, այլև պատմական Ջավախքը՝ ներկայիս Սամցխե-Ջավախք նահանգը և Քվեմո-Քարթլիի նահանգի Ծալկայի շրջանը:

մարի տվյալներով այդ ցուցանիշը հասավ ընդամենը մոտ 114 հազ.-ի (64,5%) (տե՛ս *հավելված 1, աղյուսակներ 1, 2, 4):* Ինչպես երևում է բերված տվյալներից, տևական մի ժամանակահատվածի ընթացքում Ջավախքում հայ բնակչության թվաքանակը արձանագրել է չնչին աճ: Եվ դա այն դեպքում, երբ ջավախահայության շրջանում ավանդաբար բարձր է եղել ծնելիության ցուցանիշը: Հայ բնակչության թվաքանակի աճի ցածր ցուցանիշը բացատրվում է խորհրդային տարիներին Ջավախքից հայ բնակչության արտագաղթի բարձր տեմպերով դեպի Խորհրդային Հայաստան և ԽՍՀՄ այլ շրջաններ: Իսկ տոկոսային հարաբերակցությամբ հայերի տեսակարար կշռի աճը՝ 44%-ից 64,5%, պայմանավորված էր 1944թ. խորհրդային իշխանությունների կողմից իրականացված մուսուլման բնակչության, հիմնականում՝ թուրք-մեսխեթցիների բռնագաղթով:

Ջավախքի թուրք բնակչությունը կամ թուրք-մեսխեթցիները 1939թ. դրությամբ կազմում էին երկրամասի բնակչության 38,5%-ը: Նրանց թվաքանակը հասնում էր մոտ 90 հազ.-ի (տե՛ս *հավելված 1, աղյուսակներ 1 և 4):* 1944թ. թուրք-մեսխեթցիները գրեթե ամբողջությամբ (նրանց հետ միասին նաև քրդերն ու մուսուլման հայերը (համշենահայ)՝ ընդհանուր առմամբ մոտ 120 հազ. մարդ) ենթարկվել են տեղահանության և բնակեցվել Միջին Ասիայում: Արդյունքում՝ թուրք բնակչության տեսակարար կշիռը Ջավախքում հասել է գրեթե զրոյական մակարդակի:

Ինչ վերաբերում է վրացի բնակչությանը, ապա այն խորհրդային տարիներին վրացական իշխանության նպատակաուղղված քաղաքականության արդյունքում գրանցել է զգալի աճ: Եթե 1939թ. տվյալներով վրացի բնակչությունը Ջավախքում կազմում էր մոտ 23 հազ. մարդ կամ բնակչության մոտ 10%-ը, ապա 1989թ. մարդահամարի տվյալներով վրացիների թիվն այդ երկրամասում ավելի քան կրկնապատկվել է՝ հասնելով մոտ 48 հազ.-ի, բնակչության մոտ 27%-ը (տե՛ս *հավելված 1, աղյուսակներ 1, 2, 4):*

Ջավախքի ժողովրդագրական պատկերի փոփոխման վրացական ներուժը

Ներկայումս Ջավախքի ժողովրդագրական պատկերի փոփոխման գործում ամենամեծ ներուժը կամ հնարավորություններն ունի Վրաստանը: Դա պայմանավորված է նրանով, որ Ջավախքը գտնվում է այդ պետության վարչական սահմանների մեջ և անմիջականորեն ենթարկվում է նրա ազդեցությանը:

Չնայած այս հանգամանքին, Վրաստանը գործնականում հանդիպում է որոշակի խոչընդոտների Ջավախքը վրացականացնելու գործում: Ջավախքի ժողովրդագրական պատկերի փոփոխման գործում Վրաստանի հնարավորություններն ու զսպիչ գործոնները կարելի է դիտարկել երկու հարթության մեջ՝ օրենսդրական և մարդկային ռեսուրսների առումներով:

Օրենսդրական առումով Վրաստանը միջազգային հանրության առջև պարտավորություններ է ստանձնել հարգելու իր ազգային փոքրամասնությունների իրավունքները: Մասնավորապես, անդամակցելով Եվրոպայի խորհրդին (1999թ.)՝ այն դրանով իսկ միացել է ԵԽ Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիային: Կոնվենցիայի 16-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին ձեռնպահ մնալ ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածքներում այնպիսի քայլերի իրականացումից, որոնք կհանգեցնեն այդ բնակավայրերի ժողովրդագրական պատկերի փոփոխմանը: Թեև Վրաստանը միացել է այդ կոնվենցիային ԵԽ-ին անդամակցելու պահից, սակայն երկրի խորհրդարանն այն վավերացրել է միայն 2005թ. հոկտեմբերի 13-ին:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան վավերացնող բանաձևը պարունակում է մի շարք դրույթներ, որոնք սահմանափակում են կոնվենցիայի գործողության հնարավորությունները: Մասնավորապես, ըստ այդ բանաձևի՝ ազգային փոքրամասնություններով կոմպակտ բնակեցված տարածքներում ժողովրդագրական կազմի փոփոխությունների բերող գործողություններից ձեռնպահ մնալը չի վերաբերում այն դեպքերին, երբ առկա են բնական կամ տեխնածին աղետներից տուժածներ, մարդիկ, որոնց կյանքի ու առողջության համար սպառնալիք է որոշակի տարածքում բնակվելը, և փախստականներ[2]:

Եվ վրացական իշխանությունները հենց աղետներից տուժածների ու փախստականների վրա էլ հիմնվում են (որպես մարդկային ռեսուրս) Ջավախքը վրացականացնելու գործում: Այստեղ արժե նշել, որ Վրաստանը մարդկային ռեսուրսների տեսակետից այլընտրանք, քան փախստականներն ու տարերային աղետներից տուժածներն են, չունի: Բանն այն է, որ այդ երկիրը նույնպես ժողովրդագրական տեսակետից հետխորհրդային ժամանակաշրջանում հայտնվել է ճգնաժամի մեջ: Զգալի թվով բնակչություն է արտագաղթել երկրից, որի հետևանքով զգալիորեն ամայացել են բուն Վրաստանի շատ բնակավայրեր: Վրաստանում հետխորհրդային շրջանում ցածր է նաև բնակչության բնական աճի ցուցանիշը: Այնպես որ, Վրաստանը մարդկային ռեսուրսների առումով խիստ թույլ կամ աղքատիկ է, որպեսզի կարողանա իր բնակչության հաշվին՝ ժողովրդագրական էքսպանսիայի միջոցով, փոփոխել ազգային փոքրամասնություններով կոմպակտ բնակեցված շրջանների, այդ թվում նաև Ջավախքի ժողովրդագրական պատկերը:

Փոխարենը Վրաստանն ունի մեծ թվով փախստականներ: Խորհրդային Միության փլուզումից հետո բռնկված ազգամիջյան հակամարտությունները,

[2] Ավելի մանրամասն տե՛ս *Ս. Մինասյան,* Վրաստանի էթնիկական փոքրամասնություններ. համարկման ներուժը երկրի հայ բնակչության օրինակով, Երևան, 2006թ., էջ 27-31:

որոնք պատճառ են դարձել արյունալի պատերազմների մասնավորապես Աբխազիայում և Հարավային Օսիայում, հանգեցրել են այդ տարածքներից մեծ թվով վրացի բնակչության տեղահանությանը: Ուստի, «...էթնիկական փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններում (մասնավորապես, Քվեմո-Քարթլի նահանգի Ծալկայի շրջանում և Սամցխե-Ջավախքի նահանգի Նինոծմինդայի և Ախալքալաքի շրջաններում) ժողովրդագրական իրավիճակի փոփոխման փորձերը վրացական կառավարության կողմից իրականացվում են Աջարիայում և Սվանեթիայում «էկոլոգիական և տարերային աղետներից» տուժած անձանց, ինչպես նաև Աբխազիայից փախստականների վերաբնակեցման անհրաժեշտության պատրվակով»[3]:

Ջավախքում ժողովրդագրական պատկերը փոխելիս վրացական կառավարության գործը հեշտացնում է մի այլ կարևոր հանգամանք: Հետխորհրդային ժամանակաշրջանում Ջավախքում, բացի հայ բնակչությունից, այլ ազգությունների ներկայացուցիչները (հույներ, ռուս դուխոբորներ և այլն), որոնք մինչ այդ զգալի թիվ էին կազմում այստեղ, զանգվածաբար լքել են բնակավայրերը՝ անբնակ թողնելով իրենց տները: Օրինակ՝ Ծալկայի շրջանում բնակչության մեծամասնությունը՝ 27.127 մարդ (61%), կազմում էին հույները: Հայերը թվաքանակով երկրորդ տեղում էին՝ 12.671 մարդ (25,5%): Սակայն Վրաստանի անկախացումից հետո Ծալկայի շրջանի հույն բնակչությունը զանգվածաբար արտագաղթել է Վրաստանից: Արդյունքում՝ 2002թ. մարդահամարի տվյալներով հույների թվաքանակը Ծալկայի շրջանում հասնում էր մոտ 4.600-ի (22%): Հույն բնակչության զանգվածային արտագաղթի հետևանքով հայերը ինքնաբերաբար Ծալկայի շրջանում կազմել են բնակչության մեծամասնությունը՝ 2002թ. դրությամբ մոտ 11.500 մարդ (55%) (տե՛ս *հավելված 2, աղյուսակ 1):*

Մոտավորապես նույն պատկերն է նաև Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկա) շրջանում: Խորհրդային ժամանակաշրջանում այստեղ զգալի թիվ էր կազմում ռուս բնակչությունը (դուխոբորները և մոլոկանները): 1989թ. դրությամբ նրանց թիվը Նինոծմինդայում կազմում էր 4.616 մարդ (14,4%): Սակայն Վրաստանի անկախացումից հետո նրանք գրեթե ամբողջությամբ լքեցին իրենց բնակավայրերը: Արդյունքում՝ հայ բնակչությունը, որը 1989թ. կազմում էր շրջանի բնակչության 84,5 %-ը (27.090 մարդ), համաձայն 2002թ. մարդահամարի տվյալների՝ 32.9 հազ. մարդով այնտեղ կազմում է ջախջախիչ մեծամասնություն (մոտ 96%) (տե՛ս *հավելված 1, աղյուսակներ 2 և 3):*

Ներկայումս վրացական պետական քաղաքականությունն այս բնակավայրերի նկատմամբ միտված է նրան, որ հույների (Ծալկայում), ռուսների (Նինոծմինդայում) լքած բնակավայրերը բնակեցվեն վրացի փախստա-

[3] Նույն տեղում, էջ 30-31:

կաններով և բնական աղետներից տուժածներով: Մանավանդ որ դրա համար կան սոցիալ-կենցաղային որոշակի բավարար պայմաններ: Բանն այն է, որ նախկինում հույներին և ռուսներին պատկանող շատ տներ ներկայումս ոչ ոքի չեն պատկանում, անբնակ են, և վրացի փախստականները կարող են բնակվել այդ տներում[4]:

Վրաստանը, մասնավորապես, ակտիվորեն իրականացնում է այդ շրջաններում վրացի վերաբնակիչների համար տներ գնելու քաղաքականություն: 2005թ. դրությամբ վրացական կառավարության կողմից Ծալկայում արդեն գնվել էր 500 տուն[5]: Բացի այդ, վրացիները ներգաղթում են Ծալկայի շրջան՝ հիմնվելով անբնակ տների յուրացման հնարավորության վրա: Ինչ վերաբերում է Նինոծմինդայի շրջանին, ապա այստեղ հայտնի է մի դեպք, երբ 45 րոպեի ընթացքում ռուս բնակչությունից գնվել է 60 տուն[6]:

Այս ամենի արդյունքում, եթե 1989թ. Ծալկայի շրջանում վրացիների թվաքանակը կազմում էր մոտ 1.600 մարդ, ապա 2002թ. մարդահամարի տվյալներով այդ թիվը հասավ մոտ 2.500-ի: Ծալկայի շրջանի վարչակազմի տվյալներով՝ 2006թ. դրությամբ այնտեղ վրացիների թիվը հասնում էր 8.000-ի (տե՛ս *հավելված 2, աղյուսակ 1)*: Փորձագետ Ռ. Թաթոյանը այս ցուցանիշը համարում է արհեստականորեն ուռճացված՝ գտնելով, որ Ծալկայում վրացիների թվաքանակն իրականում կազմում է մոտ 4.000-4.500 [7]:

Անկախությունից հետո վրացական իշխանությունները բնակչության ժողովրդագրական պատկերի փոփոխությանը միտված գործողություններ են իրականացրել նաև Ջավախքի այլ շրջաններում: Մասնավորապես, 2001թ. հունվարի դրությամբ Սամցխե-Ջավախքում հաստատված վրացի փախստականների (Աբխազիայից և Հարավային Օսիայից) թվաքանակը կազմում էր շուրջ 3.000[8]:

Վրացական իշխանությունների ձեռքում Ջավախքի ժողովրդագրական պատկերի փոփոխման գործուն հնարավորություն էր նաև երկրի վարչատարածքային բաժանման կամայական իրականացումը 1990-ական թթ. կեսերին: Համաձայն այդ բաժանման՝ մեծ մասամբ հայերով բնակեցված Ծալկայի շրջանը դուրս թողնվեց Սամցխե-Ջավախք նահանգի սահմաններից և մտցվեց Քվեմո-Քարթլի նահանգի վարչական սահմանների մեջ: Փոխարենը մեծ մա-

[4] Մոտավորապես նույն եղանակով խորհրդային տարիներին վրացիների կողմից յուրացվեցին 1944թ. Ջավախքից արտաքսված թուրք-մեսխեթցիների մեծ թվով բնակարաններ: Դրանով նախկինում թուրք-մեսխեթցիներով բնակեցված տարածքները վրացականացվեցին:

[5] *Ս. Մինասյան,* նշվ. աշխ., էջ 106; տե՛ս նաև *Ռ.Թաթոյան,* Ծալկայի շրջանի հայ բնակչությունը. անցյալը, ներկան և ապագան, http://www.ararat-center.org/upload/files/Javakhk_01_Tsalka_ARM.pdf

[6] *Ս. Մինասյան,* նշվ. աշխ., էջ 126:

[7] *Ռ. Թաթոյան,* Ծալկայի շրջանի հայ բնակչությունը. անցյալը, ներկան և ապագան, http://www.ararat-center.org/upload/files/Javakhk_01_Tsalka_ARM.pdf

[8] *Ս. Մինասյան,* նշվ. աշխ., էջ 127:

սամբ վրացիներով բնակեցված Բորժոմի շրջանը մտցվեց Սամցխե-Ջավախք նահանգի սահմանների մեջ: Բորժոմի շրջանի բնակչությունը կազմում էր մոտ 33 հազ. մարդ, որի միայն 10%-ն էին կազմում հայերը[9]: Այս վարչական վերաձևումներն էապես նպաստեցին վրացի բնակչության տեսակարար կշռի ավելացմանը Սամցխե-Ջավախք տարածաշրջանում՝ համեմատ հայ բնակչության:

Այսպիսով, 2002թ. մարդահամարի տվյալներով՝ Սամցխե-Ջավախք նահանգում բնակչության երկու հիմնական էթնիկ խմբերը կազմում են հայերը և վրացիները: Հայերի թվաքանակը կազմում է 113 հազ., այսինքն՝ մոտավորապես նույնը, ինչ 1989թ.: Փոխարենը վրացի բնակչության թվաքանակը 1989թ. համեմատությամբ գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 90 հազ.-ի (տե՛ս *հավելված 1, աղյուսակներ 3 և 4):*

Թուրքական կողմի քաղաքականությունը կամ թուրք-մեսխեթցիների գործոնը

Ջավախքի ժողովրդագրական պատկերի փոփոխման գործում անմասն չի մնում նաև թուրքական կողմը (Թուրքիա, Ադրբեջան), որը փորձում է շահարկել 1944թ. արտաքսված թուրք-մեսխեթցիների գործոնը: Թուրք-մեսխեթցիները մինչ 1944թ. արտաքսումը բնակվում էին Ջավախքի մի շարք բնակավայրերում (Ախալցխա, Ասպինձա, Ադիգեն և այլն): Արտաքսման պահին նրանց ընդհանուր թվաքանակը կազմում էր մոտ 90 հազ., որոնք գրեթե ամբողջությամբ ենթարկվել են տարագրման:

1999թ. Վրաստանը, անդամակցելով Եվրոպայի խորհրդին, վերջինիս առջև պարտավորություն է ստանձնել լուծելու արտաքսված թուրք-մեսխեթցիների վերադարձի խնդիրը: Հիշյալ պարտավորությունը Վրաստանի առջև դրվել է Թուրքիայի ակտիվ ջանքերի շնորհիվ:

Հարցը պետք է լուծվեր 12 տարվա ընթացքում՝ մինչև 2011թ.: 2001թ. պետք է ընդունվեր օրենք թուրք-մեսխեթցիների վերադարձի մասին: Իսկ 2002-ից պետք է սկսվեր նրանց վերադարձը, որը պետք է ավարտվեր 2011թ.[10]:

Սակայն իրականում Վրաստանի խորհրդարանը միայն 2007թ. հունիսին ընդունեց թուրք-մեսխեթցիների վերադարձի մասին օրենքը[11]: Համաձայն այդ օրենքի՝ 2009թ. հունվարի 1-ին պետք է ավարտվեր վերադառնալ ցանկացող թուրք-մեսխեթցիների հայտերի ներկայացման ժամանակը: Սակայն 2008թ. դեկտեմբերին Վրաստանի խորհրդարանն այդ ժամկետը երկարաձգեց մինչև 2009թ.

[9] Նույն տեղում , էջ 123:

[10] *Д. Бреннан,* Турки-месхетинци до сих пор не могут вернуться на родину, http://www.eurasianet.org/russian/departments/rights/articles/eav032603ru.shtml; 12 лет туркам-месхетинцам не дают вернуться на родину http://www.russia-today.ru/2002/no_2/2_national_1.htm

[11] Закон Республики Грузия № 5261 – РС О репатриации лиц, насильственно переселенных бывшим СССР из Грузинской ССР в 40-х годах http://www.kavkaz-uzel.ru/docstext/docs/id/1194797.html

հուլիսի 1-ը[12]:

1944թ. դրությամբ թուրք-մեսխեթցիների ընդհանուր թվաքանակը կազմում էր մոտ 90 հազ.: Տեղահանությունից հետո, սակայն, այդ ցուցանիշը էապես աճել է: Ներկայումս, համաձայն տարբեր տվյալների, թուրք-մեսխեթցիների ընդհանուր թվաքանակն աշխարհում տատանվում է 300-500 հազ.-ի սահմաններում[13]: Թուրք-մեսխեթցիների գերակշիռ մեծամասնությունը բնակվում է հետխորհրդային տարածքում: 35-50 հազ. մեսխեթցի թուրքեր էլ բնակվում են Թուրքիայում: Խորհրդային Միության անկումից հետո Ռուսաստանում հաստատված թուրք-մեսխեթցիների որոշակի զանգված տեղափոխվեց ԱՄՆ: Այնտեղ ներկայումս նրանց թվաքանակը կազմում է 5-10 հազ.: Թուրք-մեսխեթցիների ներկայիս աշխարհագրական սփռվածության մոտավոր պատկերը ներկայացված է ստորև՝ աղյուսակում:

Աղյուսակ 1

Թուրք-մեսխեթցիների մոտավոր թվաքանակը՝ ըստ տարբեր երկրներում նրանց սփռվածության[14]

	Երկիր	Թվաքանակ
Հետխորհրդային տարածք	Ղազախստան	90 հզ.
	Ռուսաստան	70 հզ.
	Ադրբեջան	70 հզ.
	Ղրղզստան	30 հզ.
	Ուզբեկստան	15 հզ.
	Ուկրաինա	7 հզ.
Հետխորհրդային տարածքից դուրս	Թուրքիա	35-60 հզ.
	ԱՄՆ	5-10 հզ.

[12] Грузия продлила срок репатриации турок-месхетинцев, http://www.regnum.ru/news/1105366.html

[13] "Солидароба": массовой репатриации турок-месхетинцев в Грузию не будет http://www.kavkaz-uzel.ru/newstext/news/id/1198950.html; 12 лет туркам-месхетинцам не дают вернуться на родину http://www.russia-today.ru/2002/no_2/2_national_1.htm; Предыстория вопроса турок-месхетинцев (I) http://www.mitq.org/?l=rus&id=13&news=1180; http://www.dic.academic.ru/dic.nsf/ruwiki/173041; Невозможно размещение турок-месхетинцев в Самцхе-Джавахке-Цалке http://www.analitika.at.ua/news/2008-12-18-5144

[14] Թուրք-մեսխեթցիների թվաքանակի և աշխարհագրական սփռվածության մասին տե՛ս http://www.dic.academic.ru/dic.nsf/ruwiki/173041; http://www.ahiskaturk.clan.su/; "Солидароба": массовой репатриации турок-месхетинцев в Грузию не будет http://www.kavkaz-uzel.ru/newstext/news/id/1198950.html; Предыстория вопроса турок-месхетинцев (I) http://www.mitq.org/?l=rus&id=13&news=1180; Турки-месхетинци: состояние вопроса на сегодня (II) http://www.mitq.org/print/?l=rus&dir=2&news=1193; *А. Гурьев,* О турках-месхетинцах в Турции http://www.iimes.ru/rus/frame_stat.html

Պետք է նշել, որ տարածաշրջանի պետություններից թուրք-մեսխեթցիների Վրաստան վերադարձի խնդրով որոշակիորեն շահագրգռված է նաև Ռուսաստանը: Վերջինիս համար թուրք-մեսխեթցիների զանգվածային վերադարձը իրենց նախկին բնակավայրերը լրացուցիչ գործոն է Վրաստանի ներքին դրությունն ապակայունացնելու և անջատողականության նոր օջախներ ստեղծելու համար[15]:

Համաձայն վրացական կողմի՝ 2008թ. դեկտեմբերի դրությամբ տարբեր երկրների վրացական հյուպատոսությունները Վրաստան վերադառնալ ցանկացող թուրք-մեսխեթցիներից ստացել էին ընդամենը 900 հայտ[16]: Սակայն համաձայն ռուսական և ադրբեջանական մամուլի հրապարակումների՝ Վրաստան վերադառնալ ցանկացողների թիվը շատ ավելի մեծ է:

Մասնավորապես, ըստ ռուսական հրապարակումների՝ Ռուսաստանից Վրաստան վերադառնալ ցանկացող թուրք-մեսխեթցիների թիվը կազմում է մոտ 90 հազ.[17]: Իսկ ադրբեջանական Day.az պարբերականը հաղորդում է, որ Ադրբեջանում գրանցվել է վերադառնալ ցանկացող մոտ 10 հազար թուրք-մեսխեթցի: Սակայն, համաձայն Day.az-ի հրապարակման՝ այդ 10 հազարը վերադառնալու են իրենց ընտանիքների հետ: Գրանցվելիս նրանք ներկայացնում են ոչ միայն իրենց, այլ նաև իրենց ընտանիքներին: Հետևաբար, Ադրբեջանից Վրաստան վերադառնալ ցանկացող թուրք-մեսխեթցիների թիվը կազմում է մոտ 40 հազար[18]:

Ջավախքում այլազգիների հաստատման օբյեկտիվ խոչընդոտները

Ջավախքի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը հնարավոր է միայն պետական նպատակաուղղված քաղաքականության արդյունքում: Տարերայնորեն խիստ անհավանական է ինչպես վրացիների, այնպես էլ թուրք-մեսխեթցիների այնպիսի մեծ թվաքանակի գաղթ և հաստատում Ջավախքում, որը կփոխի երկրամասի ժողովրդագրական պատկերը: Նախկինում էլ Ջավախքի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը տեղի է ունեցել ոչ թե բնակչության տարերային տեղաշարժերի կամ առանձին էթնիկ միավորների շրջանում ծնելիության ցուցանիշի բարձր կամ ցածր լինելու, այլ

[15] Турки-месхетинци: состояние вопроса на сегодня (II) http://www.mitq.org/print/?l=rus&dir=2&news=1193

[16] Грузия продлила срок репатриации турок-месхетинцев, http://www.regnum.ru/news/1105366.html

[17] Дума занялась проблемой репатриации турок-месхетинцев, http://www.forum.ribca.net/ibf_new/index.php?showtopic=22175; Госдума: Грузия не выполняет обязательства по репатриации турок-месхетинцев, http://www.forum.ribca.net/ibf_new/index.php?showtopic=22282; ГД призвала надавить на Грузию в вопросе репатриации турок-месхетинцев http://www.rian.ru/osetia_news/20081017/-153397643.html

[18] "На сегодняшний день около 30-40 тысяч турок-месхетинцев хотят вернуться на места своего проживания в Грузию" http://www.day.az/news/georgia/141933.html

պետական նպատակաուղղված քաղաքականության արդյունքում:

Տարերայնորեն դեպի Ջավախք ոչ հայ բնակչության (վրացիներ, թուրք-մեսխեթցիներ և այլն) զանգվածային ներգաղթի և հաստատման համար առկա են հետևյալ հիմնական խոչընդոտները.

1. Ջավախքի սոցիալ-տնտեսական և կլիմայական պայմանները խիստ անհրապույր են: Ջավախքում զարգացած չեն տնտեսական ենթակառուցվածքները, արդյունաբերությունը գտնվում է գրեթե զրոյական մակարդակի վրա, հետևաբար՝ չկան աշխատատեղեր: Ջավախքը միաժամանակ հայտնի է իր խիստ բնակլիմայական պայմաններով: Այստեղ ձմեռը սովորաբար լինում է երկարատև և խստաշունչ: Հետևաբար, վրացի գաղթականների կամ տարերային աղետներից տուժածների համար շատ ավելի նպատակահարմար է հաստատվել Վրաստանի՝ համեմատաբար ավելի նպաստավոր վայրերում, քան Ջավախքում: Ինչ վերաբերում է թուրք-մեսխեթցիներին, ապա դժվար է պատկերացնել, որ Ռուսաստանի, Ղազախստանի կամ Թուրքիայի քիչ թե շատ նորմալ բնակավայրերում հաստատված թուրք-մեսխեթցիները մեծ խանդավառությամբ զանգվածաբար կտեղափոխվեն Ջավախք, որտեղ սոցիալ-տնտեսական և կլիմայական պայմաններն անհամեմատ ավելի անբարենպաստ են: Ինչ վերաբերում է Ադրբեջանում հաստատված թուրք-մեսխեթցիներին, ապա սոցիալ-տնտեսական առումով նրանց պայմանները եթե ավելի բարենպաստ չեն, ապա անբարենպաստ էլ չեն Ջավախքի պայմանների համեմատ:
2. Ջավախք պոտենցիալ գաղթողները չունեն հոգեբանական խոր կապվածություն այդ երկրամասի հետ: Մասնավորապես, թուրք-մեսխեթցիների մեծամասնությունը ժամանակին արտաքսված թուրք-մեսխեթցիների երկրորդ կամ երրորդ սերունդն է կազմում: Ի տարբերություն առաջին սերնդի՝ նրանք երբևէ չեն ապրել Սամցխե-Ջավախքում: Հետևաբար, հոգեբանական առումով նույնպես մեծ չէ ներկայիս թուրք-մեսխեթցիների վերադարձի մոտիվացիան: Մարդու իրավունքների Նովոռոսիյսկի կոմիտեի գործադիր տնօրեն Տ.Կարաստելևան հիմնահարցի առնչությամբ նշում է. «...հայրենադարձության կողմնակիցները հիմնականում ավագ սերունդն են կազմում, որը դեռ հիշում է Վրաստանը: Նրանց մոտ չի անցել կարոտախտը Վրաստանի նկատմամբ, և կա վերադառնալու ցանկություն: Սակայն երիտասարդ սերունդը Վրաստանի մասին գիտե միայն ավագների պատմածներով: Երիտասարդությունը իրավիճակը գնահատում է

տնտեսական, սոցիալական դիրքերից և հասկանում է, որ այն իրավիճակում, որում այսօր գտնվում է Վրաստանը, չի կարող նրանց ամուր սոցիալ-տնտեսական երաշխիքներ տալ»[19]: Ավելացնենք նաև այն, որ գլխավորապես թյուրքալեզու երկրներում հաստատված թուրք-մեսխեթցիներն արդեն զգալիորեն ինտեգրվել են իրենց հարազատ թյուրքական միջավայրում[20], և խորթ միջավայրում հայտնվելու հեռանկարն այնքան էլ հրապուրիչ չի կարող լինել նրանց համար: Վրացի փախստականների և տարերային աղետներից տուժածների կապակցությամբ նշենք, որ տրամաբանորեն նրանց համար ավելի նախընտրելի է հաստատվել վրացական հարազատ միջավայրում՝ Վրաստանի այլ բնակավայրերում, քան հայահոծ Ջավախքում՝ իրենց համար ոչ այնքան հարազատ կամ խորթ միջավայրում:

Եվ այսպես, Ջավախքում ոչ հայ էթնիկ տարրի աճը պայմանավորված է հիմնականում այն հանգամանքով, թե այդ տարրի գաղթը և հաստատումը Ջավախքում տարերային, թե պետականորեն կազմակերպված բնույթ կկրի: Տարերային բնույթի դեպքում այլազգիների մեծ հոսք դեպի Ջավախք վերոհիշյալ պատճառներով ակնկալել պետք չէ: Պատահական չէ, օրինակ, որ 2008թ. վերջի դրությամբ ընդամենը 900 թուրք-մեսխեթցիներ էին վերադառնալու հայտեր ներկայացրել Վրաստանի հյուպատոսություններ: Դա, հաշվի առնելով թուրք-մեսխեթցիների ընդհանուր թվաքանակը (300-500 հազ.), այդքան էլ բարձր ցուցանիշ չէ:

Սակայն այլազգիների հաստատումը Ջավախքում մինչև օրս կրել է պետականորեն կազմակերպված բնույթ կամ եղել է պետական նպատակաուղղված քաղաքականության արդյունք: Այս մասին են վկայում մի շարք փաստեր՝ վրացական իշխանությունների կոնկրետ քայլերը Ջավախքում վրացի բնակչության հաստատման ուղղությամբ, «Վաթան»[21] կազմակերպության ակտիվությունը թուրք-մեսխեթցիների վերադարձը կազմակերպելու ուղղությամբ, Թուրքիայում և Ադրբեջանում այդ նպատակով ստեղծված հիմնադրամները և այլն:

[19] “Солидароба”: массовой репатриации турок-месхетинцев в Грузию не будет http://www.kavkaz-uzel.ru/newstext/news/id/1198950.html

[20] Տե՛ս, օրինակ, *А.Гурьев,* О турках-месхетинцах в Турции http://www.iimes.ru/rus/frame_stat.html

[21] Թուրք-մեսխեթցիների հասարակական կազմակերպություն, որը շատ նման է հայրենակցական միության:

Հավելված 1

Սամցխե-Ջավախքի բնակչության թվի և էթնիկական կազմի դինամիկան

Աղյուսակ 1

Սամցխե-Ջավախքի բնակչության թիվը և էթնիկական կազմը 1939թ. տվյալներով (մարդ, %)[22]

Էթնիկ խմբեր / Շրջան	Հայեր	Վրացիներ	Թուրքեր	Ռուսներ	Քրդեր	Ընդամենը
Ախալցխա	16.454 29,7%	5.836 10,5%	28.428 51,2%	1.538 2,8%	1.423 2,6%	55.490
Ադիգեն	942 2,3%	5.466 13,2%	32.928 79,7%	1.281 3,1%	69 0,2%	41.314
Ասպինձա	1.741 5,3%	6.500 19,9%	21.612 66,2%	293 0,9%	1.980 6,1%	32.644
Ախալքալաք	54.081 83,6%	4.857 7,5%	4.015 6,2%	1.102 1,7%	309 0,5%	64.655
Նինոծմինդա	27.376 79,2%	93 0,3%	1.009 2,9%	5.862 17,0%	77 0,2%	34.575
Ընդամենը	100.594 44,0%	22.752 9,9%	87.992 38,5%	10.076 4,4%	3.858 1,7%	228.678

Աղյուսակ 2

Սամցխե-Ջավախքի բնակչության թիվը և էթնիկական կազմը 1989թ. տվյալներով (մարդ, %)[23]

Էթնիկ խմբեր / Շրջան	Հայեր	Վրացիներ	Ռուսներ	Այլք	Ընդամենը
Ախալցխա	25.753 51,1%	18.878 37,4%	3.684 7,3%	2.115 4,2%	50.430
Ադիգեն	1.627 8,3%	16.187 82,6%	1.276 6,5%	508 2,6%	19.598
Ասպինձա	2.068 18,4%	9.081 80,6%	60 0,5%	56 0,5%	11.265
Ախալքալաք	57.209 90,8%	3.566 5,7%	1.647 2,6%	555 0,9%	62.977
Նինոծմինդա	27.090 84,5%	50 0,2%	4.616 14,4%	308 1,0%	32.064
Ընդամենը	113,747 64,5%	47.762 27,1%	11.283 6,4%	3.542 2,0%	176.334

[22] Աղբյուրը՝ *Ս.Մինասյան,* նշվ. աշխ., էջ 121:
[23] Աղբյուրը՝ նույն տեղում , էջ 122:

Աղյուսակ 3

Սամցխե-Ջավախքի բնակչության թիվը և էթնիկական կազմը 2002թ. տվյալներով [24]

էթնիկ խմբեր / Շրջան	Հայեր (հազ. մարդ)	Վրացիներ (հազ. մարդ)	Ընդամենը (հազ. մարդ)
Ադիգեն	0.7	19.8	20.7
Ասպինձա	2.3	10.7	13.1
Ախալքալաք	57.5	3.2	61.0
Ախալցխա	16.9	28.5	46.1
Բորժոմ	3.1	27.3	32.4
Նինոծմինդա	32.9	0.5	34.3
Ընդամենը	113.3	90.0	207.6

Աղյուսակ 4

Սամցխե-Ջավախքի հիմնական էթնիկ խմբերը 1939թ., 1989թ. և 2002թ. տվյալներով [25]

էթնիկ խմբեր / թվական	Հայեր	Վրացիներ	Ռուսներ	Թուրքեր
1939	100.5 (44%)	22.8 (9,9%)	10.076 (4,4%)	87.992 (38,5%)
1989	113.7 (64,5%)	47.8 (27,1%)	11.283 (6,4%)	--
2002	113.3 (54,6%)	90.0 (43,4%)	--	--

Հավելված 2

Ծալկայի շրջանի բնակչության թվի և էթնիկական կազմի դինամիկան

Աղյուսակ 1

Ծալկայի շրջանի բնակչության էթնիկ կազմը 1897-2006թթ.՝ ըստ պաշտոնական տվյալների [26]

Թվական / էթնիկ խմբեր	1897	1989	2002	2006
Հայեր	8.350	12.671	11.484	11.000
Հույներ	10.739	27.127	4.589	1.500
Վրացիներ	500	1.613	2.511	8.000
Ադրբեջանցիներ	2.530	2.281	1.993	1.800
Այլք	509	746	311	300
Ընդամենը	22.628	44.438	20.888	22.600

[24] Աղբյուրը՝ նույն տեղում , էջ 124:

[25] Սույն աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից առաջին երեք աղյուսակների հիման վրա:

[26] *Ռ. Թալթոյան,* Ծալկայի շրջանի հայ բնակչությունը. անցյալը, ներկան և ապագան http://www.ararat-center.org/upload/files/Javakhk_01_Tsalka_ARM.pdf

ԱՇԽԱՐՀԻ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԵՐԸ. *ՎՐԱՅԱԿԱՆ ՄՈԴԵԼ*

Թամարա Վարդանյան

Հայտնի է, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում կիրառվող դասագրքերը, մասնավորապես՝ «պատմություն» (ավելի նվազ չափով՝ նաև «աշխարհագրություն») առարկայից կարևոր և առանցքային դերակատարում ունեն տվյալ ազգի մեջ աշխարհի էթնիկ պատկերի ձևավորման գործընթացում: Այդ դասագրքերի միջոցով է, որ դպրոցական տարիքից արդեն անհատի մեջ ձևավորվում են աշխարհընկալման երկու հիմնաքարային բնութագրիչներ. «մենք»-ի (ավտոստերեոտիպեր) և «Դուք»-ի (հետերոստերեոտիպեր) կերպարները: Այդ տարիքում ձևավորված ընկալումները հետագայում դժվարությամբ են էական փոփոխությունների ենթարկվում, թեպետ չի կարելի պնդել, որ ընդհանրապես ենթակա չեն որևէ վերափոխման:

Աշխարհի էթնիկ պատկերն առնչվում է մշակութային պատկերացումների ամբողջական համալիրի հետ, որը մասնագետներն անվանում են էթնոսի ավանդական գիտակցություն, իսկ վերջինս էլ հարմարեցված (ադապտացված) է արտաքին աշխարհի պատմական իրողություններին[1]:

Այսպես, արտաքին աշխարհի էթնիկ պատկերի ստեղծման գործընթացում էթնոսին շրջապատող կերպարների շուրջ ձևավորվող շեշտադրումները չափազանց կարևոր են: Դրանց առաջնայնությունը մասնավորապես կարևորվում է նրանով, որ թե՛ կերպարները և թե՛ դրանց շուրջ ձևավորված շեշտադրումներն ու տվյալ էթնոսի կյանքում նրանց վերապահված դերակատարությունները միաժամանակ ենթադրում են որոշակի վերաբերմունք, էթնովարքագիծ և գործողություն, այսինքն՝ ունեն ֆունկցիոնալ նշանակություն:

Ներկայացնենք «Դուք»-ի (կամ «օտարների») կերպարի արտացոլումը Վրաստանի Կրթության նախարարության կողմից արտոնված «Վրաստանի պատմության» դասագրքերում, որը պարտադիր դասավանդվող առարկաների ցանկում է (պարտադիր դասավանդվող առարկաների ցանկում է նաև «Համաշխարհային պատմություն» առարկան, իսկ հումանիտար ուղղության

[1] Աշխարհի էթնիկ պատկերի հետ կապված էթնոսի պաշտպանական - ադապտացիոն մեխանիզմներին առնչվող հարցերի մասին մանրամասն տե՛ս *Лурье С.В.,* Историческая этнология: Учебное пособие для вузов. – М., 2004.

ընտրովի առարկաներից են «Տնտեսագիտություն», «Պետություն և քաղաքացի», «Իրավունք», «Կրոնի պատմություն» առարկաները)։ Նշենք, որ «Վրաստանի պատմությունը» որպես առարկա ուսանում են՝ սկսած 5-րդ դասարանից մինչև 12-րդը ներառյալ։

2006թ. Վրաստանի կրթական համակարգում անցկացված բարեփոխումների արդյունքներից մեկը «ընտրության իրավունքի» քաղաքականության ներդրումն է։ Այն ենթադրում է մի իրավիճակ, երբ հրատարակված և շրջանառության մեջ եղած պատմության մի շարք դասագրքերից (թվով 15) ուսուցիչը կարող է ընտրել միայն մեկը՝ որպես բազային ուսումնական գործընթացը կազմակերպելու և անցկացնելու համար։ Միաժամանակ շրջանառության մեջ առկա դասագրքերը հաստատված են Կրթության և գիտության նախարարության կողմից ստեղծված Ազգային ուսումնական ծրագրերի և գնահատման կենտրոնի կողմից։

Այս դասագրքերը թարգմանվել են ազգային փոքրամասնությունների լեզուներով (ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն, նաև աբխազերեն և օսերեն)։

Վրաստանի հանրակրթական ուսումնական հաստատություններում կիրառվող «Վրաստանի պատմություն» առարկայից դասագրքերի բովանդակության քննությունը հետաքրքիր է երկու հիմնական նկատառումներով.

1) նշված դասագրքերի միջոցով կարելի է վեր հանել վրաց ժողովրդի մեջ ձևավորված և ձևավորվող աշխարհի էթնիկ պատկերը,

2) պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Վրաստանի հայկական, ռուս-հայկական դպրոցներում ուսանող հայազգի դպրոցականները նույնպես «պատմություն» առարկայից անհրաժեշտ բազային գիտելիքները ստանում են նշված դասագրքերի միջոցով։ Հետևաբար, դրանց քննությունը հնարավորություն է տալիս պատկերացնել հայազգի դպրոցականների ստացած գիտելիքների բովանդակությունն ու դրանցում առկա պատկերների շուրջ ձևավորվող շեշտադրումները։ Միաժամանակ չպետք է մոռանալ մյուս կարևոր հանգամանքը. այն, որ Վրաստանի հայկական և ռուս-հայկական դպրոցներում «Հայոց պատմություն» առարկան չի դասավանդվում, այսինքն՝ նշված դասագրքերը հանդես են գալիս որպես տվյալ առարկայի շուրջ գիտելիքների ձեռքբերման թերևս միակ աղբյուր։

Ռուսաստանը և ռուսները 19-րդ դարում. Վրաստանի պատմության դասագրքերում ուշագրավ կերպար է ձևավորված Ռուսաստանի և ռուսների մասին։ Ցարական Ռուսաստանի (1801-1918թթ.), այնուհետև Խորհրդային Ռուսաստանի (ԽՍՀՄ) կազմում (1921-1991թթ.) գտնվելու ժամանակաշրջանները վրացական դասագրքերում դիտվում են որպես չարիք և մեծ ող-

բերգություն վրաց ազգի համար[2]: Նշվում է, որ այդ պատմական ժամանակահատվածներում վտանգված է եղել վրաց ազգի վերածնունդը: Հիմնական լեյթմոտիվն այն է, որ ցարիզմը վարում էր ռուսիֆիկացման և վրաց ժողովրդի վերջնական ձուլման քաղաքականություն, ինչը դրսևորվում էր բոլոր ոլորտներում՝ հոգևոր-կրոնական, կրթական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և այլն:

1801թ. դեպքերը ներկայացված են հետևյալ կերպ. եթե «Հայոց պատմության» դասագրքերում նշվում է «1801թ. Արևելյան Վրաստանը ***խաղաղ ճանապարհով անցավ*** Ռուսաստանին» կամ ուղղակի «1801թ. Արևելյան Վրաստանն ***անցավ*** Ռուսաստանին», ապա Վրաստանի պատմության դասագրքում կարդում ենք. «Ռուսաստանին հաջողվեց Իրանի ու Թուրքիայի հետ 19-րդ դ. սկզբների պատերազմներում տարած հաղթանակի արդյունքում 1801թ. ***նվաճել*** Վրաստանը»[3]: Այսինքն՝ շեշտադրումները բավական տարբեր են: Միևնույն ժամանակ, այս նախադասությունը, անգամ ոչ մասնագետի հայացքով, անհեթեթ է ներկայանում, քանի որ 1801 թվականը 19-րդ դարի ամենասկիզբն է, հետևաբար 1801 թվականի իրադարձությունը չէր կարող 19-րդ դ. սկզբների պատերազմների արդյունք լինել, մանավանդ որ պատերազմներն (1804-1813թթ. - ռուս-պարսկական, 1806-1812թթ. - ռուս-թուրքական, 1826-1828թթ. - ռուս-պարսկական և 1828-1829թթ. - ռուս-թուրքական) ընթացան այդ դեպքից հետո:

Ընդհանուր գնահատականն այն փաստի, որ *«19-րդ դ. սկզբներին Վրաստանի թագավորությունը և վրացական իշխանությունները նվաճվեցին Ռուսաստանի կողմից»,* այն է, որ *«Վրաստանը կորցրեց իր պետականությունը»*[4]: Այս մոտեցման հիմքում ընկած է այն իրողությունը, որ Թուրքիայի և Իրանի կազմում Վրաստանն ուներ ներքին ինքնուրույնություն, քանի որ կախվածությունն արտահայտվում էր հիմնականում տարեկան արքունիք ուղարկված հարկերով, բայց փոխարենը և՛ Թուրքիան, և՛ Իրանը պարտավորված էին պաշտպանել Վրաստանի հյուսիսային սահմանները լեռնականների հարձակումներից: Ավելացնենք, որ «վրացական իշխանություններ» ասելով՝ դասագրքի հեղինակները նկատի են առել նաև Իմերեթիայի թագավորությունը, Մեգրելիայի և Աբխազիայի

[2] Համեմատության համար նշենք, որ «Հայոց պատմության» դասագրքում անգամ մի առանձին ենթավերնագիր է կազմում «Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու նշանակությունը» հատվածը, որտեղ այն գնահատվում է որպես առաջադիմական նշանակություն ունեցող իրադարձություն, ինչի արդյունքում հայ ժողովուրդը ստացավ կյանքի ու գույքի ապահովություն, տնտեսական ու մշակութային զարգացման ավելի տանելի պայմաններ և այլն, տե՛ս «Հայոց պատմություն» հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2005թ., էջ 41:

[3] *Мераб Вачнадзе, Вахтанг Гурули,* История Грузии (XIX – XX века), Учебник для IX класса. Издание второе, переработанное. Допущено Министерством образования Грузии, Тбилиси, 2004, с. 4.

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 5:

իշխանությունները, որոնք վերջնականապես Ռուսաստանին անցան 1812թ. Բուխարեստի պայմանագրով, Սվանեթիայի իշխանությունը, որը Ռուսաստանին անցավ 1833-1834թթ., արդեն խաղաղ պայմաններում:

Անշուշտ, պետք է նշել, որ իմերեթները, սվանները, մեգրելները, աբխազները այդ ժամանակահատվածում՝ 19-րդ դ. սկզբներին, ունեին առանձին էթնիկ ինքնագիտակցություն, և անվանել այդ իշխանությունները վրացական, իհարկե, գիտական և օբյեկտիվ չէ: Անգամ 20-րդ դ. սկզբին մեգրելները, իմերեթները, սվանները պահպանել էին իրենց առանձին էթնիկ ինքնագիտակցությունը, ինչի մասին են վկայում անցած դարասկզբի աղբյուրներում նրանց մասին առանձին էթնանունով հիշատակությունները. նշվում են քարթվելական ժողովուրդներ կամ «վրացիներ լայն իմաստով» և ավելացնում, որ այս հավաքականության մեջ ներառված են մեգրելները, իմերեթները, սվանները, իսկ բուն վրացիները հիշատակվում են որպես «վրացիներ նեղ իմաստով»: Առանձին էթնիկ ինքնագիտակցության առկայության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 18-րդ. դ. վերջերից մինչև 19-րդ դ. սկզբներն, օրինակ, Իմերեթիայի թագավորությունն ու Մեգրելիայի իշխանությունն անընդհատ պատերազմում էին իրար դեմ: Միայն 20-րդ դ. ընթացքում՝ խորհրդային տարիներին, վրացիներին հաջողվեց գրեթե ավարտին հասցնել այս ժողովուրդների «վրացացման» գործընթացը: Իսկ ինչ վերաբերում է Աբխազիայի իշխանությանը, ապա այն նույնպես ներկայացնել որպես վրացական իշխանություն, իհարկե, անհեթեթ է նաև այսօրվա տեսանկյունից, քանի որ աբխազներին մինչև մեր օրերը հաջողվել է պահպանել աբխազական էթնիկ ինքնագիտակցությունը:

Ցարիզմի տիրապետության տարիները ներկայացված են որպես կործանարար հետևանքներով լի մի ժամանակաշրջան, երբ լուրջ վտանգ էր սպառնում վրաց ժողովրդի ապագային: Անգամ իր վրացամետությամբ հայտնի ռուս փոխարքա Մ.Վորոնցովի կառավարման տարիները (1844-1854թթ.), երբ մեծ թվով ու զգալի արտոնություններ էին շնորհվել վրաց ազնվականներին, իշխաններին ու մտավորականությանը, թեպետ թվարկվում են այդ արտոնությունները, այնուամենայնիվ, թեման ամփոփվում է հետևյալ նախադասությամբ. *«Միխայիլ Վորոնցովի ճկուն գաղութային քաղաքականությունը ոչ նվազ վտանգավոր էր վրաց ժողովրդի համար, որքան կոշտ բռնատիրական քաղաքականությունը»:*

Եվրոպա. Վրաստանի պատմության դասագրքերում Եվրոպան հիմնականում ներկայանում է որպես պոտենցիալ դաշնակից: Թեպետ այն նույնպես «Դուք»-ի կամ «այլոց» կերպարի մեջ է, բայց վրացական էթնոսին ավելի մոտ կանգնած «օտար» է, քան մուսուլմանական աշխարհը: Հետևաբար, հիմնական բովանդակությունն այն է, որ միջին դարերում մի շարք վրաց թագավորներ

ձգտում էին շահել կաթոլիկ Եվրոպայի աջակցությունը մուսուլման Թուրքիայի և Իրանի դեմ պայքարում և պատրաստ էին անգամ կաթոլիկություն ընդունել այդ աջակցությունը ստանալու համար[5]:

Աբխազներ և օսեր. աբխազների և օսերի մասին նշվում է հետևյալը. նրանց հայրենիքը Հյուսիսային Կովկասն է: Բայց այս ժողովուրդները ներթափանցել են Վրաստան և, փաստորեն, այստեղ եկվորներ են: Թեպետ իրենց հայրենիքը սկզբնական շրջանում Հյուսիսային Կովկասն էր, հետագայում իրավիճակը փոխվեց, և այժմ նրանց հայրենիքը այսօրվա Վրաստանն է:

Միևնույն ժամանակ, աբխազների մասին նշվում է նաև, որ վերջիններս այժմ բնակվում են Վրաստանի հյուսիսարևմտյան հատվածում: Աբխազներն իրենք իրենց անվանում են «ափսուա», իսկ երկիրը՝ «Ափսնի»: Վրաստանի աբխազական բնակչությունը մոտ 94.000 է: Աբխազների մի փոքր հատված էլ 19-րդ դ. երկրորդ կեսին տեղափոխվել է Թուրքիա՝ Ռուսաստանի կայսրության ժողովրդագրական քաղաքականության հետևանքով[6]:

Հայերը. 19-րդ դ. պատկեր. առավել բացասական է ներկայանում Ռուսաստանի ժողովրդագրական քաղաքականությունը, հատկապես Սամցխե-Ջավախք տարածքում: Այս հատվածում նշվում է նաև հայերի՝ որպես օտարազգի տարրերի, ներթափանցման մասին թեզը, այսպես կոչված, «բուն վրացական տարածքներ»:

Ներկայացնենք այդ հատվածը. *«Ռուսաստանի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը գաղութային ժողովրդագրական էքսպանսիան էր, որը նախատեսում էր* ***օտար ցեղերի վերաբնակեցումը*** *Վրաստանում և ի վնաս վրացիների երկրի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը… Սամցխե-Ջավախեթիում ապրող մուսուլման վրացիները ռուսական հալածանքների հետևանքով տեղափոխվեցին Թուրքիա: Ռուսական կառավարությունը թույլ չտվեց Արևմտյան Վրաստանի վրաց բնակչությանը բնակվել Սամցխե-Ջավախեթիում և նրանց փոխարեն այստեղ բնակեցրեց 30.000 հայերի Թուրքիայից: Հայերի բնակեցումը Վրաստանի տարբեր շրջաններում շարունակվեց նաև հետագա տարիներին»*[7]:

Հայերի՝ որպես վրացական տարրին մրցակից, ներկայանալու հանգամանքը շեշտված է նաև սոցիալ-տնտեսական իրադրությունը լուսաբանող թեմաներում: Այսպես, 19-րդ դ. երկրորդ կեսին կապիտալիզմի զարգացման դժվարությունները և ազգային բուրժուազիայի թույլ լինելը բացատրվում է

[5] *Nino Chikovani, Ketevan Kakitelashvili,* Georgia: Representation of «others» in the South Cauvasus Secondary school history textbooks, In: Contemporary History textbooks in the South Caucasus, ed. by L.Veseley, Prague, 2008, p. 69.

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 76:

[7] *Мераб Вачнадзе, Вахтанг Гурули,* История Грузии (XIX – XX века)… էջ 9:

հայերի հաջողություններով: Նշվում է, որ *«որոշակի պատճառների հետևանքով Վրաստանի սոցիալական շերտերը ակտիվ մասնակցություն չունեցան կապիտալի նախնական կուտակման գործընթացին: Այդ պատճառով կապիտալիզմի զարգացման առաջին փուլում երկրում կապիտալը զավթեցին օտարազգի կապիտալիստները, հիմնականում հայ ձեռնարկատերերը, որոնք էլ հետագայում բացեցին խոշոր կապիտալիստական ձեռնարկություններ (ֆաբրիկաներ և գործարաններ)»*: Փաստորեն, չի նշվում, թե որոնք էին այդ «որոշակի պատճառները», որոնց արդյունքում վրացական վերնախավը չմասնակցեց կապիտալի նախնական կուտակման գործընթացին:

Այսպիսով, «Վրաստանի պատմություն» առարկայից Վրաստանի հանրակրթական ուսումնական հաստատություններում շրջանառվող դասագրքերի ընդհանուր քննությունը ցույց է տալիս, որ Ռուսաստանը ներկայանում է որպես «օկուպանտ» երկիր, Եվրոպան՝ որպես «դաշնակից», աբխազներն ու օսերը՝ որպես Հյուսիսային Կովկասից Վրաստան ներթափանցած եկվորներ, իսկ հայերը՝ որպես մի շարք ոլորտներում վրացական էթնոսի հիմնական մրցակիցներ:

ԽՈՐԵՆԱՑԻԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Էդուարդ Դանիելյան

Տեղեկատվական անվտանգության գաղափարական գործոնները՝ հիմնված պատմագիտական և փիլիսոփայական, աստվածաբանական և լեզվաբանական, տնտեսական և իրավաբանական, հոգեբանական և ռազմական գիտությունների վրա, պետական կառավարման, քաղաքագիտական և դիվանագիտական ոլորտների մտավոր ներուժն են[1]: Հայոց պետականության արդի փուլում պետության կենսունակության կարևորագույն գաղափարական գործոններից է գիտական մակարդակով ազգային անվտանգության խնդիրների վերլուծությունը[2]:

Հայ քաղաքակրթական-մշակութային ժառանգության նկատմամբ 19-րդ դարի վերջերից քաղաքականացված «գերքննադատությունը» 20-րդ դարում, տեղեկատվական պատերազմի ծավալմամբ, շարունակեց իր հարձակումը հայագիտության և, ամբողջությամբ վերցված, ազգային գաղափարախոսության դեմ: «Գերքննադատության» խառնածին փոխակերպությունները, ախտահարելով գիտական և կրթական ասպարեզները, ապատեղեկատվությամբ կարող են կաթվածահար անել աշխարհաճանաչողական և հոգևոր համակարգերը՝ ստեղծելով գաղափարական քաոսի և սեփական արժեքներից օտարանալու մթնոլորտ: Տեղեկատվածին վտանգի բացահայտումը վկայում է երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմի՝ «բարոյազուրկ, ոչ հոգևոր մթնոլորտի» և հայ «մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծման» միտումների մասին, ինչին դիմակայելու ամենից արդյունավետ միջոցներից են համարվել տեղեկատվական անվտանգության համատեքստում քաղաքակրթական-մշակութային ժառանգության զարգացած պատկերացումները[3]:

---

[1] *Դանիելյան Է., Թսիրյան Վ.*, Հայոց պատմական ժառանգության պաշտպանության գործը և անվտանգ տեղեկատվական արդի միջոցները. – տե՛ս «Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան», հայագիտական գիտաժողով (13-15 նոյեմբերի, 2003), զեկուցումների ժողովածու, Երևան, 2004:

[2] *Այվազյան Ա.*, Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, I, Երևան, 2003, էջ 117:

[3] *Հարությունյան Գ.*, Քաղաքակրթական գործոնը տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում, «21-րդ ԴԱՐ», թիվ 2 (12), 2006 էջ 7):

Այդ նպատակին են ծառայում հայագիտական մտքի արգասիքները, որոնց շարքը համալրվեց գիտական մեծ արժեք ներկայացնող Ալբերտ Մուշեղյանի «Մովսես Խորենացու դարը» գրքով[4], որում հեղինակը, Պատմահոր երկի ստեղծման ժամանակը իրավացիորեն ընդունելով 5-րդ դարը, լուսաբանել է նրա հաղորդումները՝ Հայոց բնօրրանում Հայկ նահապետի և նրանից սերած տոհմապետերի անձնանուններից Հայոց բնաշխարհի նշանավոր վայրերի ու լեռների անունների առաջացման, Հայկյան Արամի պետական գործունեության, Այրարատ նահանգի կենտրոնական նշանակության, Վասպուրական գնդի, Բագրատունյաց տոհմի հայկական ծագման և հայագիտական այլ կարևոր խնդիրների մասին:

Մովսես Խորենացու ժամանակի շուրջ բանավեճի առնչությամբ Ա.Մուշեղյանը նշել է. «19-րդ դ. վերջերից բանասիրության մեջ ծայր առավ Կեղծ Մովսեսի լեգենդը: Ցավով պետք է ընդունել, որ Խորենացու քննադատները երկար ժամանակ շատ ավելի փութեռանդ էին իրենց պատմաբանասիրական ու աղբյուրագիտական պրպտումներում, քան Խորենացու պաշտպանները...»: Այդպիսի «քննադատները» խթանում էին «գերքննադատության» ավերիչ ծավալմանը: Իսկ թե ինչ հարված էր հասցվում հայագիտությանը Մովսես Խորենացու ժամանակը տարուբերելով ավելի քան 300-ամյա շրջափուլում, Ա.Մուշեղյանը գրել է. «Խնդիրը միայն Կեղծ Մովսեսի անձը չէ: Դժվար չէ հասկանալ, թե որքան արժեզուրկ պիտի լինի պատմական մի երկ, որի հեղինակը շարունակ զբաղված է եղել պատմական ժամանակների և դեպքերի միտումնավոր խեղաթյուրմամբ և խառնաշփոթով»:

Մովսես Խորենացուն ուշ շրջանի հեղինակ համարողների վարկածը հակագիտական համարելով՝ Ա.Մուշեղյանը որոշ հարցեր, կապված պատմաաշխարհագրական բնույթի տեղեկությունների հետ, իրավացիորեն բացատրել է որպես հետագա խմբագիրների և գրիչների՝ աշխարհաքաղաքական նոր իրավիճակներում կատարած ներմուծումների, առանձին պատմական դեպքերի և հասկացությունների վերաբերյալ արդի պատմագիտությանը և բանասիրությանը անհայտ տվյալների, «գերքննադատների» թույլ տված միտումնավոր խեղաթյուրման և թյուր պատկերացումների հետևանք:

«Գերքննադատությունը» բացասական հետևանքներ է ունենում քաղաքագիտական և դիվանագիտական տերմինաբանության և ձևակերպումների, կրթական բնագավառի և ռազմահայրենասիրական դաստիարակության վրա: Ժանգակաթիլի նման «գերքննադատությունը» քայքայիչ ազդեցություն է գործում՝ հասարակագիտական ոլորտները և, հատկապես, պատմագիտությունը դարձնելով հակագիտական շահարկումների և քաղաքական հարձակումների թիրախ:

[4] *Մուշեղյան Ա.*, «Մովսես Խորենացու դարը», Երևան, 2007:

Պանթուրքիզմի պարագլուխները Հայոց եղեռնի նախապատրաստման և իրագործման տարիներին սկսեցին, իսկ այնուհետև նրանց հետնորդները շարունակեցին Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում և Հայոց Միջագետքում հայկական մշակույթի՝ համաշխարհային քաղաքակրթական բարձր արժեք ներկայացնող հուշարձանների կողոպուտը և ոչնչացումը: Այդպիսի գործողություններին զուգահեռ՝ նրանց հովանավոր կենտրոնների տեղեկատվական և հրատարակչական ոլորտներում այսօր *արմենոիդ* մարդաբանական՝ գիտականորեն ապացուցված տերմինի փոխարեն «դաջում» են *կովկասոիդ* տերմինը, *Հայկական լեռնաշխարհի* Արևմտյան Հայաստանի մասը հակագիտականորեն անվանում «Արևելյան Անատոլիա»: Մյուս կողմից, համաշխարհայնացման ընթացքում օտար կազմակերպությունները Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասը կազմող Արևելյան Հայաստանը խցկում են «Հարավային Կովկաս»[5] հասկացության մեջ, այդպիսով հակագիտականորեն քաղաքականացված օտար հրապարակումներում Հայկական լեռնաշխարհի ամբողջական քարտեզագրական պատկերը աղավաղվում է՝ հայկական պատմամշակութային ժառանգության պատկանելության խնդիրը կեղծելու նպատակով:

Ժամանակակից «գերքննադատները» մերժում են հնագիտական անընդմեջ նյութերով Հայկական լեռնաշխարհում՝ Հայկազունների տոհմաբանությամբ վկայված ավելի քան հինգհազարամյա մշակութային արմատներով (Արարատյան դաշտի՝ Շենգավիթի, Մեծամորի և այլ հնավայրերի, Գուգարքի, Բարձր Հայքի, Արցախի, Սյունիքի, Ծոփքի և այլ երկրամասերի հնագիտական

[5] Կուրից և Ռիոնից հյուսիս և արևելք՝ Սև ծովից մինչև Կասպից ծով ձգվող Կովկասի լեռների որևէ միավորի (Հյուսիսային, Կենտրոնական կամ Մեծ, Հարավային, Արևելյան և Արևմտյան Կովկաս) մեջ Հայկական լեռնաշխարհի ոչ մի հատված չի մտնում, իսկ «Կովկասի» ոչ մի հատվածն էլ Կուրից հարավ չի ձգվում: Ինչպես նշված է անտիկ (The Geography of Strabo, with an English translation by H. L. Jones, Cambr., Mass., London, in eight volumes, vol. V, 1954, XI, ii, 1, 14; iii, 2, v, 1, 5 և այլն) և հայկական միջնադարյան սկզբնաղբյուրներում, Հայաստանի հյուսիսային, հյուսիսարևելյան և արևելյան սահմանը՝ Գուգարքի, Ուտիքի և Փայտակարանի հատվածներում, համապատասխանաբար, անցնում էր Կուր գետով՝ նրա ակունքների շրջանից մինչև Երասխի (Արաքս) հետ միախառնվելը: Ռուսական կայսրության տիրապետության ընթացքում վարչաքաղաքական իմաստով կիրառված արհեստածին «Անդրկովկաս» տերմինը պահպանվեց նաև խորհրդային ժամանակաշրջանում: Իսկ 1990-ական թվականներից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների առումով «Անդրկովկաս»-ի փոխարեն կիրառվեց «Հարավային Կովկաս» տերմինը, որը սակայն ֆիզիկաաշխարհագրական իմաստով նույնական չէ «Անդրկովկաս» («Կովկասից այն կողմ») հասկացությանը, այլ բառացի նշանակում է «Կովկասի հարավային մաս»: Հայաստանը դուրս է «Կովկաս» հասկացությունից: Այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասի (ներկայումս ՀՀ և ԼՂՀ ազատագրված տարածքներով, Ջավախքը ու Նախիջևանը) արհեստածին ընդգրկումով «հարավկովկասյան» հասկացության մեջ, սխալ իմաստ է տրվում հայկական՝ աշխարհագրական, մարդաբանական, լեզվաբանական, քաղաքական և մշակութային բնագավառներին վերաբերող տերմինաբանությանը և հասկացություններին:

մշակույթ) էթնոպետական միավորների (Արարատ-Արատտա, Արմանում՝ Հայկազուն-Արամյանների, Կորդուքի և Հայոց Միջագետքի՝ Հայկազուն-Կադմեյանների, Հայասայի, Նաիրիի, Արարատյան-Ուրարտուի-Վանի Հայկազուն-Արարատյան-Արծրունիների թագավորություններ) հայկական պատկանելությունը: Քննադատելով «գերքննադատների» նենգափոխումները՝ Ա.Մուշեղյանը հաստատում է *Ուրարտու՝ Արարատի երկիր-Հայաստան* (մ.թ.ա. 9-7-րդ դդ.) նույնականությունը, ինչպես նաև բարձր գնահատում մ.թ.ա. 6-րդ դարում Հայոց ազգապետական զարգացման բնականոն շարունակության՝ Հայկազուն-Երվանդյանների թագավորության արքա Տիգրան Ա-ին նվիրված Պատմահոր մեծարանքը:

20–րդ դ. սկզբներին հայ ժողովրդի համար ծանրագույն ժամանակներում Կոմիտաս վարդապետը գրել է. «5-րդ դարում գրերի գյուտը, Սուրբ Գրքի թարգմանությունը հոգևոր երգեր առաջ բերին... Շարականի եղանակներից հետո կամաց-կամաց հանդես եկան տաղերի, գանձերի, ավետիսների և այլ հոգևոր երգերի տեսակներ՝ հանդիսավոր ժամերգության պահանջից... Սոցա սկզբնավորությունը պետք է որոնենք նույնիսկ 5-րդ դարում, որովհետև ավանդությամբ մեր ձեռքն են հասել տաղեր, մեղեդիներ, ծննդյան ավետիսներ Մովսես Խորենացու անունով...»[6]: Մինչ «գերքննադատության» ջատագովները տարուբերում էին Մովսես Խորենացու ժամանակը, հանճարեղ Կոմիտասը Պատմահորը հաստատակամ համարել է 5-րդ դարի հեղինակ, ինչպես ընդունված է հայ դասական պատմագիտության մեջ:

Խորհրդային տարիներին, գաղափարական ճնշմամբ սկսվեց ԽՍՀՄ ժողովուրդների պատմությունների «համահարթեցումը» և խցկումը «սովետական ժողովուրդ» հասկացության մեջ: Հայոց ավելի քան հինգհազարամյա պատմությունը հակագիտականորեն «երիտասարդացվում» էր ու «սկիզբը» համարվում մ.թ.ա. 6-րդ դ.:

Մյուս կողմից, ուշ ժամանակներում՝ եկվոր օղուզ-թյուրքական ծագում ունեցող և Ռուսական կայսրությունում «կովկասյան թաթարներ», իսկ խորհրդային տարիներին, կեղծելով Իրանի պատմությունը, «ադրբեջանցի» կոչվածների համար մոգոնվում էր «պատմություն», որը բացարձակապես անհիմն կապվում էր Իրանի հյուսիս-արևմուտքում գտնվող հին Մարաստանի «Ատրպատական» երկրամասի հետ, որի ուշ միջնադարյան «Ադերբայգան» անվանաձևը պանթյուրքիստական նպատակով կողոպտվել և դեռևս 1918թ. կեսերին դրվել էր «Ադրբեջանական Հանրապետություն» կոչված «նորակազմավորման», իսկ երկու տարի անց՝ «Ադրբեջանական» ԽՍՀ-ի վրա՝ այս անգամ

[6] *Շահնազարյան Ա.Մ.,* Խազերի Կոմիտասյան վերծանության հայտնությունը, Երևան, 2001, էջ 30:

արդեն իրանական Ադրբեջանի «խորհրդայնացման» հեռանկարով[7]: Օղուզ-թյուրքերի հետնորդները՝ «խորհրդային Ադրբեջանի», իսկ այսօր նաև Արցախյան պատերազմը սանձազերծած և պարտված Ադրբեջանի Հանրապետության վայ-պատմաբանները փորձում են պատմության տվյալների կեղծմամբ բռնազբոսիկորեն «սեփականացնել» Կուրի ձախափնյա բուն Աղվանքի՝ «Ալբանիայի» բնակիչների պատմությունը, և այդկերպ կեղծիքով, իբրև թե «ալբանական» «ներկայացնելով» նաև Կուրի բուն հայկական աջափնյա Արցախը և Ուտիքը, ինչպես նաև Նախիջևանը, միևնույն ժամանակ բնիկ հայկական բնակչության և պատմական հուշարձանների նկատմամբ վարելով հանցավոր քաղաքականություն: Կեղծարարության մոլուցքով Բաքվում հրատարակվեցին Հայաստանի պատմական աշխարհագրությունը նենգափոխող պանթյուրքիստական «քարտեզներ», որոնք արտատպվել էին 1944թ. Թուրքիայում հրատարակված «Իսլամ» հանրագիտարանից: Ա.Մուշեղյանը 1987թ. մայիսին Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտ ուղարկեց «ադրբեջանցիների» կեղծիքը մերկացնող մի նամակ: Կեղծարարներին դատապարտող նույն ինստիտուտի պաշտոնական պատասխանը հրապարակվեց «Գրական թերթում» (14.08.1987), որն աղմուկ առաջացրեց Բաքվում: 1989թ. Ա.Մուշեղյանը «Կեղծ-ալբանական գրականությունը և նրա ջատագովները» հոդվածում ջախջախեց թուրք-«ադրբեջանական» պանթյուրքիստական կեղծարարների նենգափոխությունները և կեղծիքները[8]:

Ազատ Մասիսի և աստվածաշնչյան Արարատ լեռան նույնությունը ապացուցող սկզբնաղբյուրները Ա.Մուշեղյանը հատուկ ուսումնասիրել է «Մովսես Խորենացու դարը» մենագրությունում: Իրավացի է բանասեր-պատմաբանը, քանզի դեռևս 5-րդ դարում Եղիշեն «Արարածոց մեկնությունում» ուղղակի գրել է. «Արարատու լեառն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ»:

Մովսես Խորենացու նկատմամբ «գերքննադատության» ջատագովների ոտնձգությունները Ա.Մուշեղյանը բացահայտել է ուսանելի սկզբունքայնությամբ, որը նաև զգոնության կոչ է՝ դիմակայել հայ ազգային գաղափարաբանության արժեհամակարգին պարբերաբար նետվող արատավոր մարտահրավերներին: Հայագիտության պատմագիտական զինանոցը նպատակային առաքելություն ունի տեղեկատվական պատերազմում ազգային անվտանգության գաղափարական և հոգևոր պաշտպանության իրականացման գործում:

[7] *Бартольд В.В.,* Сочинения, т. II (I), Работы по истории Кавказа и Восточной Европе, М., 1963, с. 703.
[8] *Мушегян А.,* Псевдоалбанская литература и ее апологеты . - «Լրաբեր», 1989, N 8, էջ 16-33.

«ԳԼՈԲՈՒՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 30.04.2009թ.
Թիվ 2 (6), 2009թ.
Տպաքանակը՝ 200։

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 5 մամուլ։
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում